

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, ПОЛИТОЛОГИЯ

JOURNAL OF YEREVAN UNIVERSITY
INTERNATIONAL RELATIONS, POLITICAL SCIENCE

№ 2(44)
2024

«Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Գրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսը:

Журнал «Вестник Ереванского университета. Международные отношения, Политология» выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала «Вестник Ереванского университета».

Three issues of "Journal of Yerevan University. International Relations, Political Science" are published annually. The journal has been published since 2010. It is the successor of "Journal of Yerevan University" published in 1967-2009.

Խմբագրական խորհուրդ.

Редакционная коллегия:

Editorial Board:

Գլխավոր խմբագիր՝

Главный редактор:

Editor-in-chief:

Պետրոսյան Գեղամ (պ.գ.դ., պրոֆ.,

gegham.petrosyan@ysu.am)

Петросян Гегам (д.и.н., проф.)

Petrosyan Gegham (Sc. D. in History, Professor)

Ալտունյան Վատերինա (պստ. քաղաքագիտ.,

պ.գ.թ., դոցենտ, katya.altunyan@ysu.am)

Алтуян Катерина (отв. секретарь, к.пол.н.,

доц.)

Altunyan Katerina (Executive Secretary, PhD in

Political Science, Associate Professor)

Ագլյան Վահագն (պ.գ.թ., դոց., *aglyan@ysu.am*)

Аглыан Ваагн (к.и.н., доц.)

Aglyan Vahagn (PhD in History, Associate Pro-

fessor)

Ալեքսանյան Աշոտ (պ.գ.դ., պրոֆ.,

ashalex@ysu.am)

Александрян Ашот (д.п.н., проф.)

Alexanyan Ashot (Sc. D. in Political Science, Pro-

fessor)

Ավագյան Արսեն (պ.գ.դ., պրոֆ.,

a.avagyan@mfa.am)

Авагян Арсен (д.и.н., проф.)

Avagyan Arsen (Sc. D. in History, Professor)

Գալստյան Խաչիկ (պ.գ.դ., պրոֆ., *khgals-*

tyan@ysu.am)

Галстян Хачик (д.п.н., проф.)

Galstyan Khachik (Sc. D. in Political Science, Pro-

fessor)

Ենգոյան Աշոտ (պ.գ.դ., պրոֆ., *ashotyen-*

goyan@ysu.am)

Енгоян Ашот (д.п.н., проф.)

Yengoyan Ashot (Sc. D. in Political Science, Pro-

fessor)

Եփրեմյան Տիգրան (պ.գ.թ., *tigran.yepre-*

tyan@ysu.am)

Епремян Тигран (к.и.н.)

Yepremyan Tigran (PhD in History)

Լեպեխին Վլադիմիր (ՌԴ, փ.գ.թ.,

info@i-eeu.ru)

Лепехин Владимир (РФ, к.ф.н.)

Lepekhlin Vladimir (RF, PhD in Philosophy)

Վոնկա Վալենտինա (ՌԴ, ւ.գ.դ., պրոֆ., *kom-*

leva@ranepa.ru)

Комлева Валентина (РФ, д.с.н., проф.)

Komleva Valentina (RF, Sc. D. in Sociological Sci-

ences)

Վրյուչկով Գոր (ՌԴ, փ.գ.դ., պրոֆ.,

ikriuchkov@nclu.ru)

Крючков Игорь (РФ, д.и.н., проф.)

Kryuchkov Igor (RF, Sc. D. in History, Professor)

Կուրյև Կոնստանտին (ՌԴ, փ.գ.դ., դոց.,

kurylev-kr@rudn.ru)

Курьев Константин (РФ, д.и.н., доц.)

Kurylev Konstantin (RF, Sc. D. in History, Associ-

ate Professor)

Մանուկյան Ժակ (պ.գ.թ., դոց., *zhak.manu-*

kyan@ysu.am)

Манукян Жак (к.и.н., доц.)

Manukyan Zhak (PhD in History, Associate Pro-

fessor)

Մարգարով Ալեքսանդր (պ.գ.դ., պրոֆ., *amarka-*

rov@ysu.am)

Маркаров Александр (д.п.н., проф.)

Markarov Alexander (Sc. D. in Political Science,

Professor)

Մարտիրոսյան Արմեն (պ.գ.դ., պրոֆ., *ma-*

rarmts@yahoo.com)

Марукян Армен (д.и.н., проф.)

Marukyan Armen (Sc. D. in History, Professor)

Պետրոսյան Վահրամ (պ.գ.թ., դոց., *samuel-*

son72am@yahoo.com)

Петросян Ваграм (к.и.н., доц.)

Petrosyan Vahram (PhD in History, Associate

Professor)

Սաֆարյան Արամ (պ.գ.թ., դոց., *aramsa-*

faryan@yahoo.com)

Сафарян Арам (к.и.н., доц.)

Safaryan Aram (PhD in History, Associate Profes-

sor)

Միլան Նիկոլայ (ՌԴ, փ.գ.թ., *n.si-*

laev@inno.mgimo.ru)

Силаев Николай (РФ, к.и.н.)

Silaev Nikolay (RF, PhD in History)

Քերյան Գարիկ (պ.գ.դ., պրոֆ.,

g.keryan@ysu.am)

Керян Гарик (д.п.н., проф.)

Keryan Garik (Sc. D. in Political Science, Profes-

sor)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ
INTERNATIONAL RELATIONS

<i>Մարութ Վարդազարյան, Գևորգ Հարությունյան</i> – ՌԴ-Թուրքիա հարաբերությունների դինամիկան դարաբաղյան երկրորդ պատերազմից հետո	5
<i>Марут Вардазарян, Геворг Арутюнян</i> – Динамика российско-турецких отношений после второй карабахской войны	
<i>Marut Vardazaryan, Gevorg Harutyunyan</i> – Dynamics of Russian-Turkish Relations after the Second Karabakh War	
<i>Աշոտ Չարապետյան</i> – Համաշխարհային հակասությունների խորացումը և մրցակցության աճը ՌԴ-ի և Արևմուտքի միջև 2022-2024 թթ. (ԲՐԻԿՍ-ի և Մեծ յոթնյակի երկրների օրինակով)	19
<i>Ашот Карапетян</i> – Углубление глобального противостояния и рост конкуренции между РФ и Западом в 2022-2024 гг. (на примере стран БРИКС и G7)	
<i>Ashot Karapetyan</i> – Deepening Global Confrontation and Growing Competition between Russia and the West in 2022-2024 (using the BRICS and G7 countries as an example)	
<i>Գուրգեն Հովհաննիսյան</i> – Հայաստանը և Կենտրոնական Ասիայի երկրները 1990–ական թվականներին	27
<i>Гурген Оганесян</i> – Армения и страны Центральной Азии в 1990-годы	
<i>Gurgen Hovhannisyan</i> – Armenia and Central Asian Countries in the 1990s	
<i>Նուշիկ Պետրոսյան</i> – Հայկական պատվիրակության դիվանագիտական առաքելությունը Բեռլինում (1918 թ. ապրիլ-հունիս)	39
<i>Нушик Петросян</i> – Дипломатическая миссия армянской делегации в Берлине (апрел-июнь 1918 г.)	
<i>Nushik Petrosyan</i> – The Diplomatic Mission of the Armenian Delegation in Berlin (April-June 1918)	



ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ПОЛИТОЛОГИЯ
POLITICAL SCIENCE

- Չատերինա Այրունյան* – Հանրային կառավարման արդիական համա-
կարգի ձևավորման անհրաժեշտ պայմանները 49
- Катерина Алтунян* – Необходимые условия формирования современной си-
стемы государственного управления
- Katerina Altunyan* – The Necessary Conditions for the Formation of a Modern
System of Public Administration
- Վահե Զարգարյան* – Էթնիկության և էթնիկ պատկանելության հիմնա-
հարցի ուսումնասիրման հայեցակարգային մոտեցումները 63
- Варе Заргарян* – Концептуальные подходы к изучению проблемы
этничности и этнической принадлежности
- Vahe Zargaryan* – Conceptual Approaches to the Study of the Problem of
Ethnicity

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
ОБЗОР КНИГИ
BOOK REVIEW

- Ալեքսանդր Սաֆարյան, Մհեր Աբրահամյան* – Թուրքիայի պատմություն.
հարյուրամյա հանրապետության քաղաքական ուրվագծերը 1923-
2023 թթ., Ռ. Սաֆրաստյան, Ռ. Մելքոնյան և ուրիշներ..... 76
- Александр Сафарян, Мгер Абрамян* – История Турции: Политические
контуры столетней республики 1923-2023 гг., Р. Сафрастян, Р.
Мелконян и др.
- Alexandr Safaryan, Mher Abrahamyan* – History of Turkey: the Political Contours
of the Hundred-Year Republic 1923-2023, R. Safrastyan, R. Melkonyan
and others

ՌԴ-ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՇԵՏՈ

ՄԱՐՈՒԹ ՎԱՐՂԱԶԱՐՅԱՆ , ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ * 

Երևանի պետական համալսարան

2020 թ. առանցքային տարի էր Անկարայի համար: Տնտեսական առումով հայտնվելով ոչ բարենպաստ վիճակում, աշխարհի բազմաթիվ անկյուններում ներքաշված լինելով տարբեր հակամարտություններում՝ այնուամենայնիվ Թուրքիային հաջողվեց հանդես գալ որպես տարածաշրջանային նոր գերտերություն և Հարավային Կովկասում մեծացնել իր դերակատարումը:

Թուրքիան փայլուն օրինակ է, թե ինչպես ճիշտ ռազմավարության շնորհիվ, բնական անհրաժեշտ ռեսուրսներից զուրկ լինելով, երկրի ներսում ունենալով բազում խնդիրներ՝ երկիրը կարող է միջազգային մի քանի հարթակներում մեծացնել իր դերակատարումը և նույնիսկ հավակնություններ ներկայացնել գլոբալ կառավարման համակարգում ընդգրկվելու ուղղությամբ:

Թուրքիան ձևավորված միջազգային հարաբերություններին հակադրվեց խելամիտ ռազմավարությամբ՝ առաջ քաշելով «հինգից ավելին աշխարհը» հայեցակարգը: Տարածաշրջում համադրելով «փափուկ ուժը» «կոշտ ուժի» հետ՝ Անկարան խախտում էր ձևավորված հավասարակշռությունը և մեծացնում իր ներկայությունը:

Ռուս-թուրքական հարաբերությունները վերլուծվում են ինչպես Թուրքիայի որդեգրած հայեցակարգերի, այնպես էլ «հարձակման ռեալիզմի» և «ռազմավարական հավասարակշռման» տեսությունների համատեքստում:

* **Մարութ Վարդազարյան** – պատմական գիտությունների թեկնածու, միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ

Марут Вардазарян – кандидат исторических наук, доцент кафедры международных отношений и дипломатии ЕГУ

Marut Vardazaryan – Candidate of Historical Sciences, Associate Professor at YSU Chair of International Relations and Diplomacy,

Էլ. փոստ՝ marutvardazaryan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0005-7066-1634>.

Գևորգ Հարությունյան – պատմական գիտությունների թեկնածու, միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասիստենտ

Геворг Арутюнян – кандидат исторических наук, ассистент кафедры международных отношений и дипломатии ЕГУ

Gevorg Harutyunyan – Candidate of Historical Sciences, Assistant at YSU Chair of International Relations and Diplomacy

Էլ. փոստ՝ gev.harutyunyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0000-0001-5288-1127>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 04.04.2024

Գրախոսվել է՝ 10.04.2024

Հաստատվել է՝ 10.09.2024

© The Author(s) 2024

Նկարագրվում է, թե ինչպես 2016 թ.-ից հետո առավել ակտիվացնելով իր քաղաքականությունը տարածաշրջանում՝ Անկարային հաջողվում է կանխել հակաթուրքական կոալիցիաները, հավասարակշռել մրցակցող ուժերին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև դաշնակցել նրանց հետ:

Բանալի բառեր – *Ռուսաստան, Թուրքիա, աշխարհաքաղաքական, հավասարակշռություն, Ղարաբաղ, Հարավային Կովկաս, փափուկ ուժ, հակամարտություն, հարաբերություններ, տնտեսական, քաղաքականություն*

Ռուս-թուրքական հարաբերությունները ավելի քան 500 տարվա պատմություն ունեն: 16-րդ դարից սկսված ռուս-թուրքական հակասությունները 17-րդ դարում հանգեցրին շահերի ուղղակի բախման: Ռուսական կայսրության դարավոր երազանքը Կոստանդնուպոլսի (Ցարգրադի) գրավումն էր, որի շնորհիվ Ռուսաստանը կվերահսկեր ողջ Սև ծովի ավազանը: Ուղղափառության կենտրոն Կոստանդնուպոլսի ազատագրումը կմեծացներ Արևելքում Ռուսաստանի ազդեցությունը, ինչպես նաև նրան բարոյական իրավունք կտար ստեղծելու համասլավոնական դաշնություն՝ Ցարգրադ կենտրոնով¹:

Թեև վերջին երկու հարյուր տարվա ընթացքում ռուսական և օսմանյան կայսրությունները անզիջում պայքար են մղել, սակայն քաղաքակրթական առումով նրանք հակաարևմտյան ուժեր էին: Պ. Մավիցկու կարծիքով՝ Ռուսաստան-Եվրասիան հանդիսանում է եվրոպական անտառի (պլավոններ) և ասիական տափաստանի (թյուրքեր) միավորում²: Լ.Գումիլյովը Եվրասիայում ձևավորված քաղաքակրթական այս տիպը անվանեց «սկյութա-սիբիրական տափաստանային»՝ ավելացնելով, որ «իրենք ո՛չ սլավոն են և ո՛չ էլ թուրանցի (չնայած իրենց նախնիների մեջ կենսաբանական առումով առկա են և՛ մեկը, և՛ մյուսը), այլ ռուսներ են»³:

Եթե նախկինում ռուսական և թուրքական կայսրությունների քաղաքական էքսպանսիան հակադիր էր իրար, ապա 20-րդ դարում նրանց միջև ձևավորվում են շփման նոր եզրեր: Ե՛վ Ռուսաստանի Դաշնությունը, և՛ Թուրքիայի Հանրապետությունը ձևավորվեցին Արևմուտքի դեմ անզիջում պայքարի արդյունքում: Որոշ առումով երկու պետությունները արևմտյան և արևելյան քաղաքակրթությունների սահմանագծին են:

Ռուս-թուրքական ջերմացման հաջողված օրինակներից է Լենին-Աթաթուրք համագործակցությունը: Ամենևին չափազանցություն չի լինի, եթե նշենք, որ ներկայիս Թուրքիայի Հանրապետության կերտողներից էր բոլշևիկյան Ռուսաստանը. Հարավային Կովկասի ներկա միջպետական սահմանները

¹ Ст' у Данилевский Н. Я. Россия и Европа. СПб., 2020, էջ 498-499

² Ст' у Дугин А. Г. Геополитика. М., 2011, էջ 168:

³ Гумилев Л. Н. Этногенез и биосфера Земли, Л., 1981, с. 38-39.

ևս հստակեցվել են այդ համագործակցության արդյունքում: 1921 թ. ռուս-թուրքական «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագրով Կարսը հանձնվեց Թուրքիային, իսկ Նախիջևանը որպես ինքնավար մարզ փոխանցվեց Ադրբեջանին: Արխիվային նյութերը վկայում են, որ Լեոնային Ղարաբաղի կարգավիճակը որոշելիս կրկին կարևորվել է թուրքական գործոնը: Մոսկվայում կարծում էին, որ բավարարելով Ադրբեջանի տարածքային պահանջները կթուլացնեն նրա ձգտումը դեպի Թուրքիա, որը միաժամանակ նաև Ռուսաստանի «մերձավորագույն դաշնակիցն էր»⁴:

Նախկինում և՛ Ռուսաստանը, և՛ Թուրքիան ստեղծել էին հզոր, ոչ արևմտյան բազմազգ քաղաքակրթություններ: Այսօր ինչպես Մոսկվան, այնպես էլ Անկարան քայլեր են ձեռնարկում իրենց պետությունների երբեմնի հզորությունը վերականգնելու ուղղությամբ: ՌԴ և Թուրքիայի նախագահները համակարծիք են, որ Արևմուտքի ստեղծած աշխարհակարգը պետք է փոփոխության ենթարկվի. երկուսն էլ բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման կողմնակից են: Թեև անվտանգային առումով Թուրքիայի համար առայժմ ՆԱՏՕ-ին անդամակցությունը այլընտրանք չունի, այնուամենայնիվ Անկարան ձգտում է տարածաշրջանում դառնալ առավել ինքնուրույն ու ազդեցիկ գերտերություն⁵: Այս նպատակով Էրդոհանը Պուտինի հետ համաձայնեցնում է իր քաղաքականությունը, հստակեցնում ազդեցության գոտիները և Անկարայի արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման հնարավորությունները⁶:

Իր հերթին Կրեմլը ցանկանում է համաշխարհային թատերաբեմում վերականգնել ՌԴ դերակատարումը և նոր ձևավորվող բազմաբևեռ աշխարհակարգում դառնալ առանցքային ակտորներից մեկը: Մոսկվայի համար Թուրքիայի հետ հարաբերությունների խորացումը կարևորվում է նաև արևմտյան ինստիտուտների թուլացման տեսանկյունից: Փաստացի Թուրքիան ՆԱՏՕ-ի միակ անդամն է, որը չի միացել հակառուսական պատժամիջոցներին և խաթարում է այդ կազմակերպության միասնականությունը: Կրեմլը ի լուր աշխարհի հայտարարում է, որ իր հետ համագործակցելը ձեռնտու է բոլորին, և ինչ դիվիդենտներ այն կարող է բերել: Թեև ՌԴ-ն և Թուրքիան Սիրիայում, Լիբիայում և Լեոնային Ղարաբաղում հակոտնյա շահեր ունեն, այնուամենայնիվ առայժմ նրանց հաջողվում է հաղթահարել հակասությունները:

Ինչպես 1920 թ., այնպես էլ ներկայումս ռուս-թուրքական համագործակցությունում Կրեմլի համար էական է Թուրքիայում ուժեղացող հակաարևմտականությունը, որը ավելի է կարևորվում, քան քրիստոնեական քաղաքակրթական

⁴ Տե՛ս **Коновалов В. Н., Погосян Г. К.** Турецкий фактор в Закавказье: Ретроспекция Нагорно-Карабахского конфликта.-cyberleninka.ru/article/n/turetskiy-factor-v-zakavzie-retrospeksiya-nagorno-krabahskogoko-konflikta/viewer

⁵ Տե՛ս Turkey's Stakes in the Russia-NATO Rivalry. The Ukraine Crisis and Beyond-Svp-berlin.org/10.18449/2022C09/

⁶ Տե՛ս With Russia's future uncertain, Turkey and the West need each other Middle East institute, October 18, 2023-mei.edu/publications/russians' future-uncertain-turkey-and-west-need-each-other.

ընդհանուր հենքը: Այսպիսով, Կրեմլի համար պահպանողական և հակաարևմտյան իսլամը գերադասելի է արևմտյան և ազատական քրիստոնեությունից:

Չնայած բազմաթիվ հակասություններին՝ ռուս-թուրքական համագործակցությունը Մոսկվային հնարավորություն է տալիս առանց զգալի ռեսուրսներ վատնելու պահպանելու իր ներկայությունը Սիրիայում և Հյուսիսային Աֆրիկայում: Մակայն երկու կողմերի համար առավել կարևորվում է այն, որ իրենց համագործակցությունը հնարավորություն չի տալիս Արևմուտքին լուրջ խաղացող դառնալու տարածաշրջանում և մեծացնելու իր ներկայությունը:

Մոսկվայի համար առավել կարևոր նշանակություն ունի և ամենից շատ անհանգստացնում է Թուրքիայի ազդեցության մեծացումը նախկին խորհրդային հանրապետություններում: Այս ուղղությամբ Թուրքիան արձանագրել է լուրջ հաջողություններ: Անկարան, համադրելով «փափուկ ուժը» ռազմականի հետ, իր համար կարևոր գոտիներում հրահրում է հակամարտություններ և դրանց միջոցով մեծացնում իր ներկայությունը ու դերակատարությունը տարածաշրջանում: Նման կերպ Թուրքիան վարվեց Ադրբեջանում, երբ համատեղ գործակցությունները օգտագործեց այդ երկրում իր սպառազինությունների մի մասը տեղակայելու համար: Այսպիսով, Թուրքիայի քայլերը Բաքվի համար առավել իրատեսական դարձրին ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղում, որի արդյունքում ոչ միայն մեծացավ Անկարայի դերակատարումը, այլև Հարավային Կովկասում պարտության մատնելով ՌԴ ռազմաքաղաքական դաշնակցին՝ ամրապնդեց իր դիրքերը Մոսկվայի հետ մրցակցությունում:

Ռուս-թուրքական հարաբերությունները ճիշտ վերլուծելու համար նախ և առաջ պետք է անդրադառնալ Թուրքիայի արտաքին քաղաքականության հայեցակարգային հիմքերին:

Թուրքիայի արտաքին քաղաքականությունը լուրջ փոփոխություններ կրեց 2010-ականների սկզբին: Դրանք կապված են «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) առաջնորդներից Ա. Դավութօղլուի անվան հետ, որը սկզբում դարձավ Թուրքիայի արտգործնախարար, իսկ հետագայում՝ նաև վարչապետ: 2001 թ. հրատարակած «Ռազմավարական խորություն. Թուրքիայի միջազգային դրությունը» ծրագրային փաստաթղթում նա անդրադառնում է Մառը պատերազմի ավարտից հետո միջազգային թատերաբեմում Թուրքիայի նոր դերակատարմանը: Նա միջազգային գործընթացներին անդրադարձավ աշխարհաքաղաքականության և հետկայսերական ժառանգության տեսանկյունից, համաձայն որի՝ Կովկասը, Բալկանները և Մերձավոր Արևելքը Pax Ottomanica-ի, «Օսմանյան գոտու միջուկն են»⁷: ԱԶԿ-ի 2007 թ. ընդունված ծրագրում արձանագրվեց, որ Թուրքիան ճգնաժամային մոտեցումից պետք է անցում կատարի ռազմավարականի, որը ենթադրում էր, որ երկիրը առավել դինամիկ, ակտիվ արտաքին քաղաքակա-

⁷ Տե՛ս **Цибенко В. В.** Идеологема справедливости и антиколониальный дискурс как обоснование инициативной внешней политике Турции, // *Международная аналитика*, 2023, 14(2), էջ 100:

նություն պետք է վարի Մերձավոր Արևելքում, Կասպից ծովի, Կովկասի և Բալկանների շրջանում: Նախատեսվում էր այդտեղ ստեղծել «անվտանգության և կայունության» գոտիներ: Միաժամանակ «թուրքական աշխարհը» որակվում էր որպես «պատմական պատասխանատվության գոտի»⁸:

2008 թ. տնտեսական ճգնաժամը, Թուրքիայի հարևան երկրներում կայունության աճը, ԱՄՆ-ի ազդեցության նվազումը Մերձավոր Արևելքում և ԵՄ-ում ներքին հիմնախնդիրների խորացումը նոր մարտահրավերներ առաջացրին Անկարայի համար: Թուրքիայում այս շրջանում արտաքին քաղաքականության փոփոխությունները միահյուսված էին ներքին քաղաքական գործընթացների հետ: Էրդողանին նախ և առաջ հաջողվեց սահմանափակել ռազմական և հին բյուրոկրատական էլիտայի ազդեցությունը: «Քեմալական էլիտայի» ներկայացուցիչների նկատմամբ դատական լայնամասշտաբ գործընթացներ սկսվեցին⁹: Մյուս կարևոր պահը 2010 թ. սահմանադրական բարեփոխումներն էին, որի արդյունքում բանակը զրկվեց Թուրքիայի քաղաքական գործընթացներին միջամտելու հնարավորությունից¹⁰:

Այսպիսով, Ռ. Էրդողանը, «արաբական գարունից» հետո անցում կատարելով «կոշտ ուժին», միաժամանակ ամրապնդում է իր իշխանությունը՝ տուրք տալով թուրքական հասարակության ազգայնական հատվածին: 2013 թ. Թափափ հրապարակի ցույցերը ցրելուց և ԵՄ-ի հետ բանակցությունները ձախողելուց հետո Էրդողանը Թուրքիայում նախաձեռնեց ոչ ժողովրդավարական մի շարք բարենորոգումներ: 2014-ին հաղթելով նախագահական ընտրություններում՝ Էրդողանը սահմանափակեց վարչապետի լիազորությունները, իսկ 2017 թ. սահմանադրական փոփոխություններով ոչ միայն վերացվեց վարչապետի պաշտոնը, այլև նվազեցվեցին օրենսդիր մարմնի լիազորությունները: Այս քայլերից հետո արտաքին քաղաքականության մենաշնորհը փաստացի կենտրոնացավ Էրդողանի ձեռքում: Արտաքին քաղաքականությանը վերաբերող բոլոր որոշումները սկսեցին մշակվել և ձևակերպվել նրա խորհրդականների նեղ շրջանակներում: Էրդողանը արդեն գերադասում էր բոլոր ընթացիկ հարցերը լուծել տարբեր պետությունների ղեկավարների հետ անձնական երկխոսության միջոցով: Էրդողանի հրամանով ստեղծվեցին մի շարք մարմիններ, որոնք գործում էին ԱԳՆ կառույցներին զուգահեռ: Այդպիսիք էին, օրինակ, Հանրային դիվանագիտությունը համակարգող խորհուրդը, Արտասահմանում բնակվող թուրքերի և հայրենակիցների գծով վարչությունը, «Լուսավորություն» հիմնադրամը և այլն: Ստեղծվեց տարօրինակ մի իրավիճակ, երբ 2010-ական թվականներին Թուրքիայի ազգային հետախուզական վար-

⁸ Նույն տեղում, էջ 100-101:

⁹ Տե՛ս **Шлыков П. В.** Внешняя политика Турции в постбиполярной системе координат, // Международная аналитика, 12(2) 2021, էջ 142:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 143:

չության դեկավար Հ. Ֆիդանը արտաքին քաղաքականության հարցերում առավել կարևոր դեր ուներ, քան ԱԳ նախարարը¹¹:

Այսպիսով, Ա. Դավութոզյանի «ռազմավարական խորությունը» ենթադրում էր մերձավորարևելյան տարածաշրջանի կարևորում և պոպուլիզմով, պանիսլամիզմով և նեոսամանիզմով շաղախված քաղաքականություն: Երբ 2016 թ. Ա. Դավութոզյանը վարչապետի պաշտոնից հրաժարական տվեց, «ռազմավարական խորությունը» փոխարինվեց «բարոյական ռեալիզմ» հայեցակարգով¹²:

Թուրք հետազոտող Ֆուաթ Քեյմանի կարծիքով՝ «բարոյական ռեալիզմը» ներառում է «կոշտ ուժի» և հումանիտար նորմերի համատեղմամբ ռազմական ակտիվություն: Այն բնորոշվում է «զրո խնդիրներ հարևանների հետ» իդեալիստական հայեցակարգի անտեսում, առանձին պետությունների հետ բարեկամական հարաբերությունների և ռազմավարական այլանսների ստեղծում, ինչպես նաև ընտրովի ակտիվություն: Այս տեսակետը կիսում են նաև բազմաթիվ ռուս հետազոտողներ¹³:

Դիտարկելով ԱԶԿ-ի մշակած արտաքին քաղաքականությունը՝ կարող ենք արձանագրել, որ նեոսամանիզմը դիտարկվում է երեք հարթությունով՝ Օսմանյան կայսրությունը որպես քաղաքակրթական օրրան, Օսմանյան կայսրությունը որպես իսլամական պետություն և օսմանյան պետությունը որպես բազմամշակութային կայսրություն¹⁴:

Ռուս-թուրքական ժամանակակից հարաբերությունները հակակշիռների, զսպման ու համագործակցության բարդ համակարգ են: Մինչև 2020 թ. Լեռնային Ղարաբաղի 44-օրյա պատերազմը այն ներկայացված է երկու մակարդակով:

Առաջինը ներառում է երկու տարածաշրջանային պետությունների համագործակցությունը հիմնականում Մեծովյան ավազանում և սիրիական հակամարտությունում: Այն ընդգրկում է համագործակցություն տնտեսական, ռազմատեխնիկական բնագավառներում, ազգային շահերի տեսանկյունից համակարգված քայլեր, բազմաբևեռ աշխարհի և նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացներում երկու պետությունների դերակատարման մեծացում:

Երկրորդ մակարդակը ներառում է ՌԴ-Թուրքիա մրցակցությունը, որը իրականացվում է երկու կողմերին հարող գործընկեր երկրների ու դաշնակիցների միջոցով: Այս հարթակում ընդգրկված երկրներն են Իրանը, Հունաստանը, Հայաստանը, Իսրայելը, Ուկրաինան, Ադրբեջանը, Հյուսիսային Կիպրոսի

¹¹ St' u Шлыкoв П. В. Внешняя политика Турции в посбиополярной системе координат, // Международная аналитика, 12(2) 2021, էջ 142:

¹² St' u Ирхин А. А., Москаленко О. А. «Мир больше пяти». Становление Турции в качестве глобального актора мировой политики: перспективы и вызовы для России // Вестник РУДН. Серия Международная отношения, 2021, Том 21, № 1, էջ 95:

¹³ St' u Цибенко В. В. Идеология справедливости и антиколониальный дискурс как обоснование инициативной внешней политике Турции, // Международная аналитика, 2023, 14(2), էջ 111:

¹⁴ St' u Ирхин А. А., Москаленко О. А., նշվ. աշխ., էջ 95:

Թուրքական Հանրապետությունը (չճանաչված)¹⁵:

2020 թ. աշնանից գծագրվում է նաև երրորդ մակարդակը՝ Հարավային Կովկասում Թուրքիայի ու Ռուսաստանի ռազմաքաղաքական ուժային անմիջական մրցակցությունը, որի շնորհիվ Թուրքիային հաջողվեց խախտել Առաջին աշխարհամարտից հետո այստեղ ստեղծված հավասարակշռությունը: Աստիճանաբար Միջերկրական ծովի արևելյան հատվածում, Մերձավոր և Միջին Արևելքում, ինչպես նաև Սևծովյան ավազանում իր դիրքերը ամրապնդելուց հետո և Կենտրոնական Ասիայի հետ ռազմաքաղաքական ու էներգետիկ կապ հաստատելու համար Թուրքիան որոշեց ամրապնդվել նաև Հարավային Կովկասում:

Թուրքիան, 2020 թ. Ադրբեջանին խրախուսելով ռազմական գործողությունների, սկզբից նեթ հայտարարեց, որ «եղբայրական» Ադրբեջանին կցուցաբերի լայնածավալ օգնություն, այդ թվում նաև ռազմական բնագավառում: Անկարայի համար բավականին ցավոտ էր, որ այս փուլում Մոսկվային հաջողվել է շրջանցել իրեն, քանի որ Ռուսաստանը դարձավ կրակի դադարեցման և զինադադարի գլխավոր երաշխավորը: Նույնիսկ Ադդամում ռուս-թուրքական մշտադիտարկման կենտրոն ստեղծելու պայմանավորվածությունից հետո Անկարան չէր համակերպվում այն մտքի հետ, որ թուրք զինվորականները չեն մասնակցելու խաղաղարար գործողություններին: Անկարան շարունակում էր տարածել, թե Մոսկվայի հետ իբր փոխհամաձայնության են եկել այդ հարցում: Թեև Կրեմլը հերքեց այդ փաստը, այնուամենայնիվ Ռ. Էրդողանը 2020 թ. նոյեմբերի 16-ին թուրքական պառլամենտի հաստատմանը ուղարկեց Ադրբեջան ռազմական քանակակազմ ուղարկելու մասին իր հրամանագիրը, որը հաստատվեց հաջորդ օրը¹⁶:

Այդ փաստը մեկ անգամ ևս վկայում է, թե ինչ համառությամբ և անզիջում է գործում Թուրքիան իր համար ռազմավարական կարևոր ուղղություններում: Կոնկրետ այս պարագայում Անկարայի քայլերը միտված էին ամեն կերպ Բաքվին իր ազդեցության ոլորտում պահելու:

Մինչև Հարավային Կովկասում իր ազդեցության մեծացումը Թուրքիան հետևողականորեն մեծացնում էր իր դերակատարումը Կենտրոնական Ասիայում: 2011 թ. նոյեմբերին Ստամբուլում կայացած թուրքական խորհրդի գազաթնաժողովում «Թուրքալեզու պետությունների համագործակցության խորհուրդը» վերանվանվեց «Թուրքական պետությունների կազմակերպության»: Այսինքն՝ թուրքական աշխարհը թևակոխեց ինտեգրացիայի նոր փուլ՝ ստեղծելով միասնական աշխարհաքաղաքական, գաղափարական-մշակութային թուրքական տարածք¹⁷: Գազաթնաժողովում ընդունված «Թուրքական աշխարհ - 2040» ռազմավարական փաստաթղթում նախատեսվում է Անդրկասպիական միջանցքը

¹⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 102-103:

¹⁶ Տե՛ս **Аватков В. А.** Внешняя и внутренняя политика Турции. Ключевые изменения 2020 г., // Свободная мысль. 2021. № 1 (1685), էջ 85:

¹⁷ Տե՛ս **Комарцева Н. С. Гайфутдинов Р. И.** Россия и Турция в контексте нового тюркского мира, // Вопросы политологии, Выпуск 3 (79), Том 12, 2022, էջ 761:

օգտագործել թուրքմենական գազը Ադրբեջանով և Թուրքիայով արտահանելու Եվրոպա, ստեղծել թուրքական ընդհանուր բանակ, որի կազմում ընդգրկվելու են նաև ՌԴ-ի դաշնակից Ղազախստանն ու Ղրղզստանը: Ավելորդ չէ նշել նաև, որ Ղրիմը, Միբիրը, Պովոլժիեն, Ալթայը, Յակուտիան, Խակասիան և ռուսական մի շարք այլ տարածքներ ընդգրկված են վերոնշյալ թուրքական տարածքում¹⁸: Պատահական չէ, որ նորաստեղծ թուրքական այդ կազմակերպությունը հայտարարում և նշում է միջազգային տասնյակ կառույցների հետ համագործակցության պատրաստակամության մասին, և դրանց շարքում բացակայում է ՌԴ-ի կողմի ստեղծված որևէ ինտեգրացիոն կազմակերպություն¹⁹:

Թուրքիայի այդ քայլը միանշանակ հակասում է ՌԴ շահերին: Կարո՞ղ էր Մոսկվան հակադարձել Անկարային՝ օգտագործելով թեկուզ քրդական կամ Հայկական հարցը: Սակայն Մոսկվան ընտրեց այլ ռազմավարություն: Անկարայի պանթուրքական և գավթողական այս քայլին հետևեց պաշտոնական Մոսկվայի մեղմ պատասխանը: ՌԴ նախագահի մամլո քարտուղար Դ. Պետկովը հայտարարեց, որ նորմալ է համարում թուրքական աշխարհի միասնության գաղափարը և հեգնորեն նշեց, որ թուրքական աշխարհի կենտրոնը գտնվում է ոչ թե Թուրքիայում, այլ Ռուսաստանում՝ Ալթայում²⁰:

Առավել զարմանալի է ռուսաստանյան փորձագիտական համայնքի դիրքորոշումը, որը, արձանագրելով այդ քայլի բացասական հետևանքները, առաջարկում է Մոսկվա-Անկարա հակասությունների հետագա խորացումը կանխելու համար Ռուսաստանին ընդգրկել թուրքական ինտեգրացիոն նախագծերում, որպեսզի հնարավորություն չտան ՌԴ որոշ թուրքալեզու տարածաշրջանների ու սուբյեկտների առանձին ընդգրկվելու այդ կառույցներում²¹:

Ստացվում է, որ համաշխարհային առաջնորդության ձգտող Ռուսաստանը ընկրկում է Էրդողանի պլանների դեմ և այնքան էլ վստահ չէ, որ իր առանձին սուբյեկտները չեն ընդգրկվի թուրքական նախագծերում: Դրա օրինակը ևս ունենք: Այսպես, 2015 թ. թուրք-ռուսական հարաբերությունների սրվելուց հետո ՌԴ մշակույթի նախարարությունը հանձնարարեց իր սուբյեկտներին դադարեցնել համագործակցությունը թուրքական մշակույթի միջազգային կազմակերպության (TÜRKSOY) հետ: Սակայն առ այսօր Ալթայի Հանրապետությունը, Բաշկորտոստանը, Տուվան, Խակասիան և Յակուտիան շարունակում են դիտորդի կարգավիճակով ներգրավված լինել այդ կազմակերպությանը: Ներկայումս Մոսկվայում գործում է նաև Յունուս Էմրեի ինստիտուտը, որը ՌԴ

¹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 768-769:

¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 770:

²⁰ Տե՛ս Песков сожалеет, что на карте тюркского мира Эрдогана не указано, что его центр на Алтае, tass.ru/politika/12982517

²¹ Տե՛ս Демешко Н. Э., Мурадов Г. Л., Ирхин А. Р., Москаленко О. А. Русский и Тюркский миры на пространстве Евразии. // Вестник МГИМО Университета, том 16, № 6, 2023, էջ 176:

տարբեր շրջաններում իրականացնում է թուրքամետ մշակութային միջոցառումներ²²: Հարկ չկա նույնիսկ նշել, թե ինչպես է Թուրքիան վառ պահում հակառուսական տրամադրությունները իր տարածքում գործող կովկասյան և Դրիմի թաթարների տարբեր կազմակերպությունների միջոցով²³:

Էրդողանի քաղաքական այդ երևակայությունը միանգամայն տեղավորվում է քաղաքական աշխարհագետ Դ. Էզնյունի «Ժամանակակից աշխարհաքաղաքական երևակայությունը» (modern geopolitical imagination) ուսմունքում: Այդ տեսանկյունից թուրքական քաղաքական և մեդիաքարտեզագիտությունը ևս արտացոլում է թուրքական էլիտայի ու հասարակության աշխարհաքաղաքական երևակայությունը և փաստացի արտացոլվում է Թուրքիայի արտաքին քաղաքականությունում²⁴:

Այլ պետությունների և ժողովուրդների տարածքի նկատմամբ իր հավակնությունները Թուրքիան իրականացնում է երկու ձևի տեխնոլոգիաներով: Առաջինը պետական հաստատություններն են: Օրինակ՝ Ադրիատիկից մինչև Չինաստան ձգվող «թուրքական աշխարհի» քարտեզը պարբերաբար հրատարակվում է զանազան ՋԼՄ-ում և թուրքական դասագրքերում: Երկրորդ ձևը ազգայնական ու իսլամիստական տարբեր կազմակերպությունների, գիտական և հասարակական շրջանակների, պատգամավորների ներուժի օգտագործումն է²⁵: «Թուրքական» հողերի նկատմամբ իրենց հավակնությունները փորձում են ամրապնդել ճարտարապետական հուշարձանների վերականգնման և կառուցման միջոցով, որոնք իրականացվում են պետական հովանավորությամբ:

Դեռևս 2008 թ. Էրդողանի հրամանագրով ստեղծվեց մի խորհուրդ, որի գլխավոր խնդիրը Բալկաններում, Մերձավոր Արևելքում, Կովկասում և Դրիմում «թուրքական» ժառանգության վերականգնումն էր: Դրանով Անկարան ձգտում է իր հավակնությունների «նյութական հիմքերը» ստեղծել: Նույն տակտիկան ներկայումս օգտագործում է Բաքուն: Թուրքական միջոցներով ոչ միայն վերականգնվեցին կրոնական բազմաթիվ հաստատություններ, այլև կառուցվեցին նորերը, ինչպես հետխորհրդային մի շարք հանրապետություններում, այլ նաև Ռուսաստանում: Օրինակ, 2015 թ. Մոսկվայի գլխավոր մզկիթի բացման արարողությանը մասնակցում էր նաև Ռ. Էրդողանը²⁶:

Էրդողանը իր քաղաքականության մեջ օգտագործում է երկու հայեցակարգային մոտեցում: Առաջինը «աշխարհագրությունը ճակատագիր է» մոտեցումն է, որը կապված է կանխորոշման իսլամական հայեցակարգի հետ: Այն

²² Տե՛ս **Аватков В. А., Сбитнева А. И.** Новый национализм Турецкой Республики. // Вестник РУДН, Серия Политология, том 24, № 2, 2022, էջ 300:

²³ Տե՛ս նույն տեղը:

²⁴ Տե՛ս **Цибенко В. В.** Конструирование идеологического дискурса воображаемой географии в Турции, // Международная аналитика, том 13, № 3 (2022), էջ 138:

²⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 134:

²⁶ Տե՛ս **Цибенко В. В.**, նշվ. աշխ., էջ 138:

ենթադրում է նախկին օսմանյան ընդարձակ տարածքների համախմբում կամ վերահսկում: Երկրորդը «արտի աշխարհագրությունն է», որի համաձայն՝ աշխարհի բոլոր մահմեդականներին պետք է միավորի Թուրքիան: Դրա էությունն այն է, որ Էրդոդանը Թուրքիայից դուրս գտնվող բոլոր մահմեդականներին համարում է ճնշված տարր, որին անհրաժեշտ է Թուրքիայի հումանիտար օգնությունը²⁷:

Այժմ փորձենք հասկանալ, թե ինչու ռուս-թուրքական հարաբերություններում Անկարային հաջողվում է առավելագույն զիջումներ ստանալ Մոսկվայից:

Ռուսական փորձագիտական շրջանները կարծում են, որ ԱՄՆ-ն և ԵՄ-ն շարունակում են շարժվել միջազգային աշխարհակարգի լիբերալ մոդելով, իսկ Չինաստանը, ՌԴ-ն և Թուրքիան՝ իրականացնում են ռեալիզմի բնորոշ քաղաքականություն՝ օգտագործելով ուժերի բալանսավորման, մրցակցության և հնարավոր ընդդիմախոսներին չեզոքացնելու ձևաչափը²⁸:

Էրդոդանի քաղաքականության գլխավոր առանձնահատկությունը գլոբալ ուժային կենտրոնների և տարածաշրջանային առանցքային երկրների նկատմամբ անընդմեջ սպառնալիքներով ուղեկցվող կոշտ քաղաքական ճնշումն է: Ուշագրավ է, որ ն՝ Թուրքիայի, և՛ ՌԴ-ի արտաքին քաղաքականությունը կարելի է դիտարկել նաև Ջ. Միրշայմերի կողմից մշակված հարձակողական ռեալիզմի տեսության դիրքերից²⁹:

Ռուս-ուկրաինական զինված առճակատումից հետո Թուրքիայի դիրքերը է՛լ ավելի ամրապնդվեցին ՌԴ-ի հետ հարաբերություններում: Եթե նախկինում նախագահ Էրդոդանն ընկալվում էր ավելի քիչ կշիռ ունեցող ֆիգուր, քան Պուտինը, սակայն նոր իրողությունները նրան մղեցին համաշխարհային քաղաքականության գագաթնակետ³⁰:

Մոսկվայի նկատմամբ ճնշումների լծակներ դարձան «Թուրքական հոսքը», Աքքոյուլի ատոմակայանը, սևծովյան նեղուցների և սիրիական խնդիրները: Տնտեսական և լոգիստիկ առումով Թուրքիայի նշանակությունը ՌԴ-ի համար կտրուկ ավելացավ: Այս առումով Թուրքիան Մոսկվայի համար դարձավ դեպի Եվրոպա միակ պատուհանը: 2019 թ. ՌԴ-Թուրքիա միջպետական առևտուրը հասել էր 26,309 մլրդ դոլարի, ընդ որում՝ ներկրումը՝ 22,454 մլրդ, իսկ արտահանումը՝ 3,854 մլրդ դոլար էր: Կողմերից յուրաքանչյուրի ներդրումները մոտ 10

²⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 139:

²⁸ Տե՛ս Круглый стол на тему «Политический реализм и международные отношения. Россия в глобальной политике. 05,02,2024. // Globalffairs.ru/articles/kruglyj-stol-na temu-politiceskij-realizm-i-mezhdunarodnye-otnosheniya-21.

²⁹ Տե՛ս **Графов Д. Б.** Стратегия балансирования во внешней политике Турции. // Вестник МГИМО-Университета, 2022, 15(3), էջ 118: The Russia-NATO relations and the European security system in the context of the concepts of neorealism. -Journal: National security and strategic planning, Volume 2021, № 1(33), Rubrics: POLITICAL SECURITY-futurepubl.ru/en/nauka/article/43853/view

³⁰ Տե՛ս **Գ. Քեռյան**, Էրդոդանի դիվանագիտությունը. Քաղաքագիտական ասպեկտ, // Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 2023, № 2, էջ 99:

մլրդ դոլար էին³¹: Իրավիճակը փոխվեց ռուս-ուկրաինական ռազմական առճակատումից հետո: Պատահական չէ որ երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը 2017-2021 թթ. հետ համեմատած աճել է մոտ 2 անգամ: Եթե ՌԴ ներկրումները ՉԺՀ-ից աճեցին 24 տոկոսով, ապա Թուրքիայից՝ 113 տոկոսով, և 2023 թ. Ապրանքաշրջանառության ծավալն անցավ 60 մլրդ դոլարը³²:

Եթե մինչև 2023 թ. փետրվարը Մոսկվան Անկարայի համար ուժեղ մրցակից էր և կարող էր միանձնյա լուծել Ղարաբաղի և Ասարի ճակատագիրը, ապա ներկայումս միանգամայն այլ իրավիճակ ձևավորվեց, որի մասին Անկարայում չէին կարող նույնիսկ երազել: Էրդոդանը նաև Արևմուտքի և ՌԴ-ի միջև դարձել է մոդերատոր և կողմերն էլ նրա կարիքը զգում են:

Ի տարբերություն Մոսկվայի՝ Էրդոդանը ներկայումս հնարավորություն ունի ինչպես ՌԴ-ի, այնպես էլ ԱՄՆ-ի հետ վարելու հավասարակշռված քաղաքականություն, քանի որ ունի իր պահեստային տարբերակը, որից զրկված է պատժամիջոցների տակ հայտնված Մոսկվան: Անկարան կարող է ԱՄՆ-ի հետ հակամարտության խորացման պայմաններում ստանալ Մոսկվայի աջակցությունը, իսկ Ռուսաստանի հետ հարաբերությունների սրման դեպքում՝ ԱՄՆ-ի աջակցությունը: Բալանսավորման քաղաքականության բնագավառում Թուրքիան մեծ փորձ ունի: Դեռևս 19-րդ դարից իր կենսունակությունը պահպանելու համար Օսմանյան կայսրությունը ստիպված էր մանևրել բրիտանական ու Ռուսական կայսրությունների միջև: Ռուս-թուրքական հարաբերությունները այժմ կարելի է ձևակերպել որպես «մրցակցային համագործակցություն»³³:

Ինչ վերաբերում է Հարավային Կովկասին, ապա Մոսկվային չհաջողվեց պահպանել տարածաշրջանային հավասարակշռությունը իր դաշնակից Հայաստանի ու Ադրբեջանի միջև և այժմ փորձում է որոշ կորուստների հաշվին գոնե նոր սահմաններում պահպանել իր ազդեցությունը: Զուգահեռ խորացնելով հարաբերությունները Ուկրաինայի ու Կենտրոնական Ասիայի հետ՝ Թուրքիան փորձում է, որպես տարածաշրջանում ՌԴ-ի և ԻԻՀ-ի հակակշիռ, մնալ արժեքավոր գործընկեր նաև Արևմուտքի համար:

Հենց այս շրջանակներում է տեղավորվում Թուրքիայի «տարօրինակ» քաղաքականությունը, որի ցայտուն օրինակներից են ռուս-թուրքական և թուրք-ուկրաինական հարաբերությունները: Դեռևս 2014 թ. Թուրքիան ՄԱԿ-ում քվեարկեց «Ուկրաինայի տարածքային ամբողջականության» օգտին, այսինքն՝ Ղրիմը չի ճանաչում որպես ռուսական տարածք: Ուկրաինայի՝ 2020 թ. ազգային անվտանգության հայեցակարգով Թուրքիան համարվում է ռազմա-

³¹ Sté u Relations between Turkey and the Russian Federation-<https://www.mfa.gov.tr/relations-between-and-the-russian-federation.en.mfa>

³² Sté u **Кривошеев К.** Курсы перекройки. Как Россия подарила Эрдогану мировые амбиции. carnegiendowment.org/politika/88506

³³ Turkey vis-à-vis Russia's War against Ukraine-iaii.org/en/publication/turkey-vis-vis-russia-war-against-ukraine

վարական գործընկեր: Թուրքիայի ԱԳՆ-ն Ուկրաինան ևս հայտարարել է որպես ռազմավարական գործընկեր³⁴:

Խախտելով ՌԴ-ի հետ պայմանավորվածությունները՝ Անկարան Ուկրաինային վերադարձրեց «Ազովի» հրամանատարներին, այնուհետև նաև հայտարարեց, որ Ուկրաինան արժանի է ՆԱՏՕ-ին անդամակցելու, և Կիևի հետ զարգացնում է ռազմաստրատեգիական համագործակցություն³⁵:

Այս համագործակցությամբ Անկարան Արևմուտքին հասկացնում է, որ չնայած ռուս-թուրքական մերձեցմանը՝ այնուամենայնիվ Անկարայում չեն անտեսում ՆԱՏՕ-ի շահերը: Միաժամանակ, Անկարան ոչ միայն չմիացավ հակառուսական պատժամիջոցներին և պահպանեց օդային կապը, այլև խորացրեց տնտեսական համագործակցությունը:

Ուկրաինայի հետ հարաբերությունները զարգացնելով՝ Էրդողանը նպատակ ունի ամրապնդել Թուրքիայի դիրքերն Արևելյան Եվրոպայում և սևծովյան տարածաշրջանում: Ինչ վերաբերում է աշխարհաքաղաքական հաշվարկներին, ապա Անկարայում Ուկրաինային դիտարկում են ոչ թե որպես արժեքավոր դաշնակից, այլ ավելի շուտ որպես բուֆերային պետություն, որի օգնությամբ Անկարան կփորձի սահմանափակել ռուսական ազդեցությունը տարածաշրջանում: Այս առումով ՌԴ-ն տնտեսական և անվտանգային տեսանկյունից Թուրքիայի համար ավելի արժեքավոր գործընկեր է: Հենց բալանսավորման քաղաքականության շրջանակներում է, որ Թուրքիան, շարժվելով իր ազգային շահերով, հաշվի չի առնում իր դաշնակիցների շահերը, և Կիևում մինչև վերջ համոզված չեն վճռական պահերին Անկարայի կայուն դիրքորոշմանը³⁶: Նույն մոտեւումը դրսևորվեց Շվեդիայի՝ ՆԱՏՕ-ի անդամակցության խնդրում:

2022 թ. փետրվարին Ռ. Էրդողանը հայտարարեց, որ Թուրքիան ռուս-ուկրաինական հակամարտության պատճառով չի պատրաստվում հարաբերությունները խզել ո՛չ Ռուսաստանի և ո՛չ էլ Ուկրաինայի հետ, որովհետև Անկարան այդ երկրների հետ ունի տնտեսական, ռազմական և քաղաքական սերտ հարաբերություններ³⁷: Նույն տրամաբանության շրջանակներում է տեղավորվում 2023 թ. սեպտեմբերին Ռ. Էրդողանի այն հայտարարությունը, որ «Ռուսաստանին վստահում է այնպես, ինչպես Արևմուտքին»³⁸:

Այսպիսով, Թուրքիան, վարելով բալանսավորման և ռազմավարական քա-

³⁴ S'e u Турция и Украина: интересы сотрудничество, проблемы, конфликт, Крым-интервью. Eadaiy.com/ru/news/2023/07/10/turciya-i-ukraina-interesy-sotrudnichestvo-problemy-konflikt-krym-interuyu.

³⁵ S'e u Russian and Turkey vie over Black, as Erdoğan-prepares-politico. eu/article/black-sea-russia-turkey-ukraine-war/

³⁶ S'e u **Կյա ի**. Союзник, посредник или разрыв. Какие перспективы у отношений Украины и Турции, carniedieendowment.org/politika/87998

³⁷ S'e u Эрдоган заявил, что Турция не откажется от России из-за Украины. gazeta.ru/politics/news/2022/02/23/17334097.shtml

³⁸ Turkey's Erdogan says he trusts Russia as much as he trusts the West-apnews.com/ article/turkey-erdogan-putin-russia-west-25ac6174d5ccfc56758e3477db

ղաքականություն, կարողացավ զգալիորեն ամրապնդել իր դիրքերը, թեև չունի բավարար ռեսուրսներ դրա համար: Այս հարաբերությունները ենթադրում են առավել առաջատար գործընկերոջ նկատմամբ ո՛չ լիովին հնազանդում և ո՛չ էլ բացահայտ հակադրման մարտավարություն:

Հավասարակշռելով հակադիր շահերը՝ Անկարան ոչ միայն չեզոքացնում է վտանգը, այլև ակտիվ քաղաքականությամբ հասնում է նոր հավասարակշռության ու տարբեր կողմերից ստանում առավելագույն զիջումներ: Այս տարբերակով Թուրքիան կարողանում է տարբեր տարածաշրջաններում հաստատված հավասարակշռության վրա ազդել նաև միջնորդավորված ձևով՝ օգտագործելով այլ երկրների և պրոքսի խմբերի ներուժը: Թուրքիայի համար այս վարքի մոդելի մյուս առավելությունը արտատարածաշրջանային ուժերի ազդեցության սահմանափակումն է:

Ամփոփելով, կարելի է եզրակացնել.

1. Ռուս-թուրքական համագործակցությունը երկու կողմերի համար նախ և առաջ կարևորվում է ռազմավարական ինքնավարության տեսանկյունից: Անկարան Մոսկվայի հետ համագործակցությունը կարողանում է ավելի լիարժեք օգտագործել իր արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման համար:

2. ՌԴ-Թուրքիա հարաբերություններում միշտ նշանակալից է տնտեսական գործոնը, սակայն ռուս-ուկրաինական ռազմական առճակատումից հետո այն ավելի կարևորվեց: Թուրքիան Մոսկվայի համար դարձավ դեպի Արևմուտք միակ պատուհանը, իսկ ՌԴ-ի դեմ պատժամիջոցների պայմաններում Թուրքիան իր առջև ծառայած տնտեսական խնդիրները լուծելու համար առավելագույն օգտագործեց իր աշխարհագրական բարենպաստ դիրքը՝ վերածվելով էներգետիկ պաշարների արտահանման և լոգիստիկ կարևոր կենտրոնի:

3. Թուրքիան և ՌԴ-ն գլոբալ քաղաքականության նկատմամբ ձևավորել են միատեսակ մոտեցումներ: Այս հանգամանքը բարենպաստ հենք է ստեղծել համագործակցության համար: Սակայն նրանց միջև առկա են նաև լուրջ տարածայնություններ, որոնք նկատելի են հատկապես Սիրիայում և Հարավային Կովկասում: Ռուս-թուրքական համագործակցության հեռանկարը կախված կլինի նաև ՌԴ-Արևմուտք և Թուրքիա-Արևմուտք հարաբերությունների բնույթից: Այնուամենայնիվ, մենք կարծում ենք, որ բազմաբևեռ աշխարհակարգում իր դերակատարումը մեծացնելու համար Անկարան կթեքվի ոչ թե դեպի Արևմուտք կամ Արևելք, այլ կշարունակի բալանսավորված իր արտաքին քաղաքականությունը:

4. Ինչ վերաբերում է Հարավային Կովկասին, ապա այս տարածաշրջանի կայունությունը էապես կախված կլինի, թե ՌԴ-Թուրքիա երկկողմ հարաբերություններում որքանով կհաջողվի համադրել համագործակցային և մրցակցային տարրերը:

Սակայն պարզ է, որ այսօր Հարավային Կովկասում Թուրքիան ՌԴ-ի հա-

մար դարձել է ամենաբարդ և անկանխատեսելի գործընկերը, քանի որ յուրաքանչյուր հաջողությունից հետո Անկարան իր ներքին և արտաքին քաղաքականությունում մեծացնում է ազգայնականության տարրերը: Անկարան փուլ առ փուլ խախտում է Մոսկվայի հայտարարած կարմիր գծերը, և Կրեմլում պետք է հաշվարկեն, որ հնարավոր է Թուրքիայի կտրուկ շրջադարձը, ընդ որում՝ ոչ միայն դեպի Արևմուտք:

МАРУТ ВАРДАЗАРЯН, ГЕВОРГ АРУТЮНЯН – Динамика российско-турецких отношений после второй карабахской войны. – В статье внимание на динамике российско-турецких отношений после Второй Карабахской войны. 2020 год стал для Анкары жизненно важным, поскольку, находясь в плохой экономической ситуации, а также вовлеченной в различные конфликты в разных уголках мира, Турция все же сумела выступить в качестве новой региональной сверхдержавы и повысить свою роль на Южном Кавказе.

Турция является ярким примером того, как, разработав и реализовав правильную стратегию, не обладая необходимыми природными ресурсами, имея множество проблем внутри страны, страна может повысить свою роль на нескольких платформах и даже предьявить амбиции на вовлечение в систему глобального управления.

Турция выступала против сложившихся международных отношений на стратегическом уровне, выдвигая точку зрения «Мир больше пяти». На региональном уровне, сочетая «мягкую силу» с «жесткой силой», Анкара нарушала сложившийся баланс и в результате увеличивала долю своего присутствия.

Российско-турецкие отношения анализируются в контексте принятых Турцией концепций, а также в контексте теорий «наступательного реализма» и «стратегического балансирования».

В статье описано, как Анкаре, проводя более активную политику после 2016 года, удалось предотвратить появление антитурецких коалиций, сбалансировать региональных соперников, а при необходимости и вступить с ними в союз.

Ключевые слова: *Россия, Турция, геополитика, баланс, Южный Кавказ, Карабах, мажкая сила, конфликт, отношения, экономика, политика*

MARUT VARDAZARYAN, GEVORG HARUTYUNYAN – Dynamics of Russian-Turkish Relations after the Second Karabakh War. – The article makes a focus on the dynamics of Russian-Turkish relations after the second Karabakh war. 2020 was a vital year for Ankara, because being in a bad economic situation, as well as involved in various conflicts in different corners of the world, Turkey still managed to act as a new regional superpower and increase its role in the South Caucasus.


Turkey is a vivid example of how by developing and implementing the right strategy, not possessing the necessary natural resources, having many problems within the country, the country can increase its role on several platforms and even present ambitions to be included in the global governance system.

Turkey opposed the established international relations at a strategic level, putting forward the “World Is Bigger than Five” standpoint. At the regional level, by combining “soft power” with “hard power”, Ankara was breaking the established balance and increasing its presence as a result. Russian-Turkish relations have been analyzed in the context of concepts adopted by Turkey, as well as in the context of “offensive realism” and “strategic balancing” theories.

It has been described how, by implementing a more active policy after 2016, Ankara managed to prevent anti-Turkish coalitions, balance regional rivals, and, if necessary, also ally with them.

Key words: *Russia, Turkey, geopolitics, balance, Karabakh, South Caucasus, soft power, conflict, relations, economic, policy*

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՅՈՒՄԸ ԵՎ
ՄՐՑԱԿՅՈՒԹՅԱՆ ԱՃԸ ՌԴ-Ի ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՄԻՋԵՎ 2022-2024 ԹԹ.
(ԲՐԻԿՍ-ի և Մեծ յոթնյակի երկրների օրինակով)**

ԱՇՈՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ * 
Երևանի պետական համալսարան

Ռուսաստանի և միացյալ Արևմուտքի (ԱՄՆ գլխավորությամբ) միջև 2022 թվականին սկսված հակամարտությունը Արևմուտքի համաշխարհային գերիշխանության համար արդեն հանգեցրել է այնպիսի հետևանքների, որ արևմտյան կոալիցիան դժվարությամբ է մրցակցում միջազգային մեծամասնության հետ: Իր մրցակիցներին դիմակայելու համար Արևմուտքը որդեգրել է ամբողջ աշխարհում պատերազմներ ու անկայունության գոտիներ հրահրելու քաղաքականություն:
Ակնկալելով բախման անխուսափելիությունը և գիտակցելով 21-րդ դարում առևտրատնտեսական պատերազմների դերը՝ իրական միջազգային մեծամասնությունը Արևմուտքին դիմակայելու համար որոշեց կազմակերպել մրցակցող կառույցներ և հարթակներ, ինչպիսիք են BRICS-ը:
Իրականում, ի տարբերություն արևմտյան կառույցների, որոնք աշխարհագրորեն իրենց բնութագրում են որպես «ոսկե միլիարդ», նրանք միջազգային փոքրամասնություն են, մինչդեռ միջազգային մեծամասնությունը համաշխարհային աշխարհագրական ներկայություն ունի աշխարհի բոլոր մայրցամաքներում և համապատասխանում է բազմաբնեռ աշխարհի բոլոր սկզբունքներին:

Բանալի բառեր – *միջազգային մեծամասնություն, ՌԴ, Արևմուտք, ագրեսիվ փոքրամասնություն, հակամարտություն, մրցակցություն, ուժային կենտրոններ*

ՌԴ-ի և ԱՄՆ-ի (նաև միասնական Արևմուտքի) միջև 2022 թ. սկսված հակամարտությունը ուկրաինական հարցի շուրջ արդեն հանգեցրել է անշրջելի հետևանքների ինչպես երկու կողմերի համար, այնպես էլ համաշխարհային քաղաքականության մեջ:

* **Աշոտ Կարապետյան** – պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ

Ашот Карапетян – кандидат исторических наук, доцент кафедры международных отношений и дипломатии ЕГУ

Ashot Karapetyan – Candidate of Historical Sciences, Associate Professor at YSU Chair of International Relations and Diplomacy

Էլ. փոստ՝ ashotkarapetyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0000-1374-4779>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 13.05.2024

Գրախոսվել է՝ 19.08.2024

Հաստատվել է՝ 10.09.2024

© The Author(s) 2024

Արևմուտքի կողմից որպես ՌԴ-ի դեմ պասիվ պայքարի միջոց ընտրված պատժամիջոցների քաղաքականությունը չի ապահովում իր համար ցանկալի ու սպասելի արդյունքներ: ԱՄՆ-ի համար համաշխարհային տիրապետության տեսակետից վտանգավոր է դառնում աճող մրցակցությունը նոր ձևավորվող միջազգային մեծամասնության հետ: Դիմագրավելու նպատակով Արևմուտքը կրկին ընտրել է աշխարհի տարբեր հատվածներում պատերազմներ հրահրելու և անկայունության գոտիներ ձևավորելու քաղաքականությունը:

Ինչքանով է իրատեսական արևմտյան կառավարող շրջանակների, լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի միջոցով շրջանառվող տեսակետը, որը նույնացնում է Արևմուտքը ողջ աշխարհի հետ: Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել միջազգային հարաբերությունների վերջին իրողությունները փաստերի համադրության միջոցով:

Արևմտյան վարկածը, որ ողջ աշխարհը ՌԴ-ի դեմ է 2022 թ.-ից, չի համապատասխանում իրականությանը: Փաստերի համադրությունը մի շարք ոլորտներում ամբողջությամբ այլ իրողություն է բացահայտում: Աշխարհի բնակչությունը բազմազան է, իսկ բոլոր մարդիկ հավասար են՝ անկախ ազգությունից, մաշկի գույնից, սեռից, կրոնից և արժեքային համակարգի: Միասնական Արևմուտքը, իր հաշվարկների համաձայն, ունի մեկ միլիարդ բնակչություն, որին անվանում են նաև «ոսկե միլիարդ», իսկ երկրագնդում ապրող մարդկանց թիվը 2024 թ. տվյալների համաձայն 8,2 միլիարդ է¹: Այսինքն՝ ողջ Արևմուտքը կազմում է երկրագնդի բնակչության ընդամենը 14%-ը, որն իր հերթին միասնական չէ, ինչպես փորձում է ներկայացնել ԱՄՆ-ն: Իսկ երկրագնդի բնակչության 86%-ը և իրենց կառավարությունները չեն մասնակցում ՌԴ-ի դեմ պատժամիջոցներին, ավելին՝ սերտացրել են համագործակցությունը:

Այս իրողությունները դրսևորվում են նաև այլ ոլորտներում և ըստ էության նպաստում են ԱՄՆ-ի ու նրա կողմից ուրվագծված միասնական Արևմուտքի հեղինակության անկմանը և Արևմուտքի պարտադրանքների դեմ աշխարհի տարբեր հատվածներում բացեիբաց հանդես գալուն:

Արևմուտքը իհարկե փորձում է ամեն կերպ օգտագործել ուկրաինական առիթը՝ ՌԴ-ին ռազմավարական պարտության մատնելու, մինչդեռ այդ երազանքը նույնպես իրատեսական չէ, քանի որ պարտության մատնել աշխարհում ամենամեծ միջուկային զինանոց ունեցող երկրներից մեկին կարող է սպառնալ մեծ միջուկային պատերազմով, որը ըստ էության վտանգում է ողջ մարդկության գոյությունը:

Երկարատև, արդեն երրորդ տարին շարունակվող պատերազմը Ուկրաինայի տարածքում ՌԴ-ի դեմ միասնական Արևմուտքի համար հանգեցրել է ռազմական և տնտեսական ռեսուրսների նվազման, իսկ ՌԴ-ի պարագայում՝ ռազմական և տնտեսական ներուժի ավելացման և ռազմական հաղթանակների:

¹ Տե՛ս Աշխարհի բնակչության թիվը 2024թ. դրությամբ, [https://www.worldometers.info/world-population/#:~:text=8.2%20Billion%20\(current\),currently%20living\)%20of%20the%20world](https://www.worldometers.info/world-population/#:~:text=8.2%20Billion%20(current),currently%20living)%20of%20the%20world)

Ռուսաստանի դեմ Արևմուտքին համախմբելու քաղաքականությունը նոր չէ. այն նույն ձևաչափով կրկնվել է նաև նախորդ դարերում, որոնցից առավել բնութագրական են 19-րդ դարում Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Բոնապարտի և 20-րդ դարում ֆաշիստական Գերմանիայի առաջնորդ Ադոլֆ Հիտլերի փորձերը՝ պարտադրանքի միջոցով համախմբելու ողջ Եվրոպան (այն ժամանակվա Արևմուտքը) և արշավելու Ռուսաստանի դեմ: Երկու դեպքում էլ պատմությունը կրկնվեց. թե՛ Ֆրանսիայի և թե՛ Գերմանիայի ձևավորած «Արևմուտքը» Ռուսաստանի դեմ պատերազմում կրած պարտությունից հետո կորցրնեց իր թվացյալ միասնությունը:

21-րդ դարում արդեն ԱՄՆ-ն, որը Եվրասի մայրցամաքի երկիր չէ համախմբել է եվրոպական երկրներին ՌԴ-ի դեմ պայքարում: ԱՄՆ-ի կարգախոսը կարելի է բնութագրել հետևյալ կերպ՝ ով մեզ հետ չէ, նա մեր դեմ է: Մակայն հիմնական տարբերությունը նախորդ երկու դարերից այն է, որ եթե նախկինում համաշխարհային քաղաքականության մեջ գերիշխող էին Արևմուտքի երկրները, որոնք ազդեցության ոլորտների և գաղութների էին բաժանել ողջ աշխարհը, ապա ժամանակակից պայմաններում աշխարհը բազմաբևեռ է:

Պատահական չէ, որ ՌԴ-ի դեմ 2022 թ.-ից իրականացվող աննախադեպ արևմտյան պատժամիջոցներին չմիացան Չինաստանը, Հնդկաստանը և համաշխարհային մեծամասնության այլ երկրներ:

Կանխազգալով, որ Արևմուտքի կողմից 21-րդ դարում սկսված առևտրատնտեսական պատերազմները (պատժամիջոցները) և հակամարտությունների հրահրումը տարբեր հատվածներում կարող են հանգեցնել անմիջական ռազմական ընդհարման՝ իրական միջազգային մեծամասնություն կազմող երկրները որոշել են Արևմուտքին հակակշիռ ձևավորել մրցակից կառույցներ, որոնցից առավել նշանակալից է ԲՐԻԿՍ-ը: Այդ կառույցը ըստ էության խորհրդանշում է բազմաբևեռ աշխարհին և ԱՄՆ-ի ու Արևմուտքի հեգեմոնիային վերջ տալուն ձգտող երկրների միություն:

Բազմաբևեռ աշխարհի հաստատման ճանապարհի առաջամարտիկների՝ ՌԴ-ի և ՉԺՀ-ի միջև 2022 թ.-ից սկսած հաստատվել են նոր համաձայնություններ տնտեսության և ռազմաքաղաքական ոլորտներում²: Դրա ապացույցները անուղղակի են. տարին մի քանի անգամ անցկացվող համատեղ զորավարժություններ, որոնց երբեմն ներգրավում են նաև Իրանին, ինչպես նաև միասնական դիրքորոշումը արտաքին քաղաքական անվտանգային կարևոր հարցերում:

Միջազգային մեծամասնությունն առավել ակնառու է ներկայացված ԲՐԻԿՍ-ում, որի անդամ երկրները ծանրակշիռ դիրք ունեն իրենց տարածաշրջաններում, մայրցամաքներում և ամբողջ աշխարհում: Այն ոչ պաշտոնական միջպետական ասոցիացիա է և ունի հինգ համահիմնադիր երկիր՝

² Տե՛ս Երկակի նշանակության համագործակցությունը ՌԴ-ի և Չինաստանի միջև, <https://carnegieendowment.org/russia-eurasia/politika/2024/05/behind-the-scenes-chinas-increasing-role-in-russias-defense-industry?lang=ru¢er=russia-eurasia>

Բրազիլիայի Դաշնային Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնությունը, Հնդկաստանի Հանրապետություն, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն և Հարավաֆրիկյան Հանրապետություն³:

Երկրի ներուժի տեսակետից, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունը՝ աշխարհում տարածքով խոշորագույն և բնական ռեսուրսներով ամենահարուստ պետությունը, նաև միջուկային գերտերություն է, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ:

ԲԲԻԿՄ-ի ներկայացուցիչը Հարավային Ամերիկայում Բրազիլիան է, իսկ Աֆրիկայում՝ Հարավաֆրիկյան Հանրապետությունը: Նրանք ունեն նյութական և մարդկային նշանակալի ռեսուրսներ և կարող են դառնալ յուրահատուկ կամուրջ իրենց մայրցամաքներում միջազգային մեծամասնության դիրքերի գերակայության համար:

Հնդկաստանը և Չինաստանը աշխարհում միակ երկրներն են, որոնց բնակչությունը գերազանցում է մեկուկես միլիարդը (այսինքն՝ հսկայական քանակությամբ աշխատուժ ունեն) և գտնվում են աշխարհի առաջատար տնտեսությունների լավագույն եռյակում:

Այսինքն, ի տարբերություն արևմտյան կառույցների, որոնց աշխարհագրական ընդգրկումը սահմանափակվում է այսպես կոչված «ոսկե միլիարդով», միջազգային մեծամասնությունը ունի գլոբալ աշխարհագրական շրջանակ և համապատասխանում է բազմաբևեռ աշխարհի տրամաբանությանը:

Ուշագրավ է, որ ԲԲԻԿՄ-ի 14-րդ գագաթնաժողովում, որն անցկացվում էր Չինաստանի Պեկին քաղաքում 2022 թ. հունիսի 22-24-ը, կապված միջազգային վերջին իրողությունների հետ, որոշվեց «Ամրապնդել ԲԲԻԿՄ-ի բարձր մակարդակի գործընկերությունը, քանի որ աշխարհը թևակոխում է համաշխարհային զարգացման նոր դարաշրջան»⁴:

Փորձագետները պնդում են, որ Բրազիլիայի, Ռուսաստանի, Հնդկաստանի և Չինաստանի տնտեսական ներուժն այնպիսին է, որ մինչև 2050 թվականը նրանք կարող են դառնալ գերիշխող չորս տնտեսություններ:

Նշենք, որ ԲԲԻԿՄ-ի անդամ երկրների կողմից ստեղծվել է միջազգային ֆինանսական նոր կազմակերպություն՝ Չարգացման նոր բանկը (ՉՆԲ), որի նպատակն է ֆինանսավորել ենթակառուցվածքային և կայուն զարգացման նախագծերը, իսկ գլխամասը գտնվում է Չինաստանի Շանհայ քաղաքում⁵:

ԲԲԻԿՄ-ի երկրների համար առաջնահերթություն են տնտեսության մեջ համաշխարհային ճգնաժամի հետևանքների նվազեցումը, բնակչության կյանքի որակի բարելավումն ու բարձր տեխնոլոգիաների ոլորտներում աստիճանական աճը⁶:

³ St' u Саммиты и документы, <https://www.nkibrics.ru/pages/history-brics>

⁴ Пекинская декларация XIV саммита БРИКС, <http://www.kremlin.ru/supplement/5819>

⁵ St' u Чем БРИКС отличается от G7, <https://m.gazeta.ru/amp/politics/news/2023/08/25/21149396.shtml>

⁶ St' u Что такое БРИКС: расшифровка, цели и принципы организации

Եվրոպական խորհրդի նախագահի¹⁰:

1998-2014 թթ. այդ ակումբին անդամակցում էր նաև Ռուսաստանը, երբ ձևաչափը փոխվեց 7+1-ի Մեծ յոթնյակի, սակայն Ղրիմի Ռուսաստանին վերամիավորումից հետո և այդ պատճառով ծագած հակասությունների հետևանքով ՌԴ-ն այլևս չմասնակցեց ակումբի հավաքներին¹¹:

Մեծ յոթնյակը արևմտյան դաշինքի առաջատար երկրների ռազմական, քաղաքական և տնտեսական միավորում է՝ ԱՄՆ-ի առաջնորդությամբ, որը վերարտադրում է միաբևեռ աշխարհի իրողությունները և դաշնակիցներին թելադրում է ԱՄՆ-ի կամքը:

ԲԲԻԿՄ-ում նման անհավասարություն չկա, քանի որ կիրառվում են բազմաբևեռ աշխարհի սկզբունքները, և հենց դա է ԲԲԻԿՄ-ի և Մեծ յոթնյակի միջև սկզբունքային տարբերությունը:

Ավելին, ԲԲԻԿՄ-ի և Մեծ յոթնյակի ձևաչափերը կառուցվածքայնորեն և գաղափարապես հակադիր են, թեպետ նրանց միջև չկա պաշտոնապես հայտարարված դիմակայություն, սակայն Արևմուտքի երկրները փորձում են խոչընդոտել ԲԲԻԿՄ-ի երկրների զարգացումը և ընդլայնումը տարաբնույթ պատժամիջոցներով:

Մեծ յոթնյակի և ԲԲԻԿՄ-ի տարբերություններից է նաև այն, որ ներկայումս ԲԲԻԿՄ-ը ավելի գլոբալ է, և դրանում համաշխարհային քաղաքակրթական ներկայացվածությունը զգալիորեն ավելի ծավալուն է, քան Մեծ յոթնյակին¹²:

Նույնիսկ, հաշվի առնելով արևմտյան գնահատման ցուցանիշները, Մեծ յոթնյակը այլևս ընդունակ չէ դիմագրավելու ԲԲԻԿՄ-ի մրցակցությանը:

Բրիտանական «Աքորն Մարկո կոնսալթինգ» ընկերության տվյալների համաձայն՝ ԲԲԻԿՄ-ի միությունը 2023 թվականին ապահովել է համաշխարհային ՀՆԱ-ի 31,5%-ը, մինչդեռ Մեծ յոթնյակի մասնաբաժինը համաշխարհային տնտեսությունում նվազել է՝ հասնելով 30%-ի: Հաշվի առնելով նոր երկրների միանալու հանգամանքը ԲԲԻԿՄ-ին՝ ըստ կանխատեսումների այդ կառույցը կարող է մինչև 2030 թվականները գերազանցել համաշխարհային ՀՆԱ-ի 50%-ը¹³:

2024 թ. փետրվարի 29-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել է, որ ԲԲԻԿՄ-ի երկրների մասնաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ում գնդորոնակության չափանիշով մինչև 2028 թ. կաճի մինչև 36,6 տոկոս, իսկ Մեծ յոթնյակինը կնվազի մինչև 27,8 տոկոս: ՌԴ նախագահի ներկայացրած տվյալների համաձայն՝ ԲԲԻԿՄ-ի կազմի մեջ մտնող երկրների ՀՆԱ-ն դեռևս 1992 թվականին կազմում էր համաշխարհային ՀՆԱ-ի 19,3%-ը, իսկ Մեծ յոթնյակի երկրներն ունեին 45,7%: Ընդ որում, արդեն 2022 թ. արդյունքներով առավելությունը

¹⁰ Տե՛ս Большая семерка и почему она больше не интересна России. <https://secretmag.ru/enciklopediya/chto-takoe-g7.htm>

¹¹ Տե՛ս G7 vs BRICS: эволюция обгона во времени, <https://ru.vogon.today/>

¹² Տե՛ս Ինչ է ԲԲԻԿՄ-ը և ինչ է առաջարկում աշխարհին <https://livenews.am/press/2024/266333/13/16/57/>

¹³ Տե՛ս նույն տեղը:

ԲԲԻԿՍ-ինն էր՝ 34,4%, Մեծ յոթնյակի 30,3%-ի համեմատ¹⁴:

Յոհաննեսբուրգում մեկնարկած ԲԲԻԿՍ-ի գագաթնաժողովին, որտեղ ներկա էին աշխարհի ավելի քան 40 երկրների ներկայացուցիչներ ուսական պետության ղեկավարն արձանագրել է, որ ԲԲԻԿՍ-ը գնդունակության համարժեքությամբ առաջ է անցել Մեծ յոթնյակից¹⁵:

Մարդկային ներուժի տեսանկյունից, որն ապահովում է համաշխարհային տնտեսության գործունեությունը, ԲԲԻԿՍ-ի երկրներին բաժին է ընկնում աշխարհի բնակչության 41,5%-ը, մինչդեռ Մեծ յոթնյակի երկրներում ապրում է աշխարհի բնակչության միայն 10%-ը¹⁶:

Կարևոր է նշել, որ բնակչության շատ արագ աճի շնորհիվ ԲԲԻԿՍ-ի երկրների մասնաբաժինը գլոբալ արտադրական ներուժի աճի մեջ ավելի մեծ է, քան Մեծ յոթնյակիինը:

Ինչ վերաբերում է բնական հարստություններին և ռեսուրսներին, ապա համեմատությունը նույնիսկ տեղին չէ, քանի որ, բացի ԱՄՆ-ից, յոթնյակի մյուս երկրները գրեթե չունեն բնական ռեսուրսներ:

Այսպիսով, 2022 թ. սկսած հակամարտությունը ՌԴ-ի և միասնական Արևմուտքի միջև (ԱՄՆ-ի գլխավորությամբ) արդեն հանգեցրել է այնպիսի անշրջելի հետևանքների Արևմուտքի համաշխարհային տիրապետության խարխլման և բազմաբևեռ աշխարհի ամրապնդման տեսակետներից, որ ԱՄՆ-ի գլխավորած միությունը, անընդունակ գտնվելով միջազգային մրցակցության պայմաններում առավելության հասնելու, կրկին ընտրել է պատերազմներ հրահրելու և աշխարհի տարբեր հատվածներում անկայության գոտիներ ստեղծելու քաղաքականությունը: Պատմական փորձը ցույց է տալիս, որ այդ աստիճանի լարվածությունը, մրցակցությունը և թշնամանքը երկու հակադիր խմբավորումների միջև սովորաբար հանգեցրել են լայնածավալ ռազմական ընդհարման, ինչը չի բխում երկրագնդի մարդկության շահերից: Այն կարող է անվերադարձ հետևանքներ ունենալ և կործանարար լինել ողջ Արևմուտքի համար, քանի որ արտակարգ իրավիճակները մերկացնում են թվացյալ ներուժը և հաղթանակը շնորհում մարդկային, ռազմական, աշխատանքային, գիտական, բնական իրական ռեսուրսներ և արդյունավետ կառավարում ունեցող երկրներին, որոնք փաստացի կազմում են միջազգային մեծամասնությունը:

АШОТ КАРАПЕТЯН – Углубление глобального противостояния и рост конкуренции между РФ и Западом в 2022-2024 гг. (на примере стран БРИКС и G7). – Конфликт начавшийся в 2022 году между Россией и возглавляемым США объединённым западом, уже привёл к таким последствиям для глобального доминирования Запада, что западная коалиция

¹⁴ Տե՛ս ԲРИКС обгонит страны G7 по доле ВВП по ППС, спрогнозировал Путин, <https://ria.ru/amp/20240229/briks-1930297933.html>

¹⁵ Տե՛ս ԲԲԻԿՍ-ը առաջ է անցել G7-ի երկրներից, <https://auroraneews.am/news/2023-08-22-briksy-araje-antsel-g7-i-erkmerits-putiny-apedolaratsman-ev-hatsahatiki-matakararman-masin>

¹⁶ Տե՛ս ԲԲԻԿՍ միջազգային միավորումը, https://bricsrussia2020.ru/russia_in_brics/20191226/1440/Mezhgosudarstvennoe-obedinenie-BRIKS.html

с трудом конкурирует с международным большинством. Чтобы противостоять своим конкурентам, Запад принял на вооружение политику разжигания войн и активизации зон нестабильности по всему миру.

Предчувствие неизбежности столкновения и осознавая роль торгово-экономических войн в XXI веке, реальное международное большинство решило организовать конкурирующие структуры и площадки такие как БРИКС и другие для противодействия западу.

По сути дела в отличие от западных структур, которые в географическом плане характеризуют сами себя как «золотой миллиард» являются международным меньшинством, а международное большинство имеет глобальное географическое присутствие на всех континентах мира и соответствует всем принципам многополярного мира.

Ключевые слова: *международное большинство, Российская Федерация, Запад, агрессивное меньшинство, конфликт, конкуренция, центры силы*

ASHOT KARAPETYAN – *Deepening Global Confrontation and Growing Competition between Russia and the West in 2022-2024 (using the BRICS and G7 countries as an example)*. –


The conflict that began in 2022 between Russia and the United West headed by the United States has already led to such consequences for the global dominance of the West that the Western coalition has difficulties in competing with the international majority. To counter its competitors, the West has adopted a policy of inciting war and activating zones of instability around the world.

Anticipating the inevitability of a clash and realizing the role of trade and economic wars in the 21st century, the real international majority decided to organize competing structures and platforms such as BRICS and others to counter the West.

In fact, unlike Western structures, which geographically characterize themselves as the “golden billion”, they are an international minority, while the international majority has a global geographical presence in all continents of the world and complies with all the principles of a multipolar world.

Key words: *international majority, Russian Federation, the West, aggressive minority, conflict, competition, power centers*

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԸ 1990–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ * 

Երևանի պետական համալսարան

Խորհրդային Միության փլուզումից հետո նորաստեղծ պետությունների արտաքին քաղաքականության հիմնական գործառույթն էր դաշնակիցների և տնտեսական գործընկերների փնտրությունը: Համախմբման համեմատաբար հաջող փորձ ձեռնարկեցին Կենտրոնական Ասիայի հինգ երկրները: Հողվածում բացատրվում է, ինչու Կենտրոնական Ասիա, այլ ոչ մեկ սովոր Միջին Ասիա:

Հայաստանի համար դրանք քաղաքական առումով երբեք գերակայությունների ցանկում չեն եղել, սակայն տնտեսական առումով Թուրքմենստանը երրորդն էր մեր երկրի համար՝ լինելով գազի հիմնական մատակարարը: Հայաստանն էլ չէր մտնում այդ պետությունների հետաքրքրությունների շրջանակի մեջ: Միաժամանակ, եղան մի շարք այցեր. պատմության մեջ մտավ Թուրքմենստանի նախագահ Նիյազովի այցը Հայաստան 1996 թ. մարտին, որն ընդհանրապես առաջինն էր այցելած երկրների ղեկավարների ցանկում: Հետաքրքրական էր նաև Ղրղզստանի նախագահ Ականի այցը, ով մահմեդական երկրների ղեկավարներից առաջինն այցելեց Եղեռնի հուշահամալիր: Նշվում են Ղազախստանի նախագահ Նազարբայևի միջնորդական ջանքերն՝ ուղղված Ղարաբաղյան հիմնահարցի խաղաղ կարգավորմանը: Խոսվում է էներգետիկ անվտանգության մասին: Հիշատակվում է նաև Կենտրոնական Ասիայի երկրների հայկական սփյուռքը, որը, ցավոք, քաղաքական ներուժ չունի: Այսօր էլ այդ պետությունների հետ հարաբերություններն առանձնապես ջերմ չեն:

Բանալի բառեր – *ԱՊՀ, Միջին Ասիա, Կենտրոնական Ասիա, անկախություն, հայեցակարգ, այցեր, պայմանագիր, դիվանագիտական հարաբերություններ, բազմակողմ դիվանագիտություն, էներգետիկ դիվանագիտություն, միջնորդական ջանքեր, Ղարաբաղյան հիմնահարց, գերակայություն, տնտեսություն, տարածաշրջան*

* **Գուրգեն Հովհաննիսյան** – ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ

Гурген Оганесян – чрезвычайный посланник, полномочный министр, доцент кафедры международных отношений и дипломатии ЕГУ

Gurgen Hovhannisyan - Envoy Extraordinary and Minister Plenipotentiary, Associate Professor at YSU Chair of International Relations and Diplomacy

Էլ. փոստ՝ gurgen.hovhannisyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0005-6510-3523>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 26.08.2024

Գրախոսվել է՝ 26.08.2024

Հաստատվել է՝ 10.09.2024

© The Author(s) 2024

XX դարի ամենանշանակալի իրադարձությունները ԽՍՀՄ կազմավորումն ու փլուզումն էին: ԽՍՀՄ վերացման բազմաթիվ մեկնություններ կան, որոնք հակոտնյա երկու բևեռների միջև են: Առաջինի կողմնակիցները համարում են, որ ԽՍՀՄ փլուզումը Սառը պատերազմում պարտության հետևանք էր, արտաքին ուժերի կողմից գաղափարական և երկրաքաղաքական հակառակորդի գիտակից վերացումը: Մյուս տեսակետի հետևորդները կարծում են՝ դա օրինաչափ և անխուսափելի գործընթաց էր, որը հիմնարկված էր Խորհրդային Միության բուն համակարգի մեջ: Երկու տեսակետները միավորում է այն հանգամանքը, որ ԽՍՀՄ փլուզման հիմքում ընկած էր համակարգային ճգնաժամը, որը բնորոշվում էր տնտեսության միատարրության ապաստարանով, կառավարման կորստով և տնտեսական, սոցիալական ու քաղաքական համակարգերի փոխըմբռնման խախտումով¹: Դրանցից մեր աշխատանքի համար կարևորագույնը համարում ենք «կայսրության փլուզման պատճառը դարձավ ազգային հարցի լուծումների արդյունավետ որոշումների բացակայությունը»²:

Հետխորհրդային տարածքը բաժանվեց ոչ միայն առանձին պետությունների, այլև տարածաշրջանային փնջերի՝ իրենց հակամարտություններով հանդերձ, որոնցից մեզ հետաքրքրողը Կենտրոնական Ասիան է՝ իր հինգ պետություններով՝ Ղազախստան, Ուզբեկստան, Տաջիկստան, Ղրղզստան և Թուրքմենստան: Խորհրդային տարիներին դրանք հայտնի էին որպես Միջին Ասիայի երկրներ և Ղազախստան, թեև Կենտրոնական Ասիա հասկացությունը (անգլերեն՝ Central Asia) առաջին անգամ դեռևս 1826 թ. օգտագործել էր գերմանացի արևելագետ Յ. Կլապրոտը՝ այդ եզրույթով բնորոշելով Սև և Օխոտի ծովերի միջև տարածքը, իսկ որպես առանձին տարածք 1834 թ մատնանշել էր աշխարհագրագետ Ա. Հումբոլդտը՝ առնչակցելով այն Մետաքսի ճանապարհի հետ: Խորհրդային Միության տրոհումից հետո անկախ պետությունների ղեկավարները պայմանավորվեցին իրենց տարածքի անվան փոփոխության մասին: «1992 թ. այդ երկրների զագաթնաժողովին Ղազախստանի նախագահ Նազարբաևը առաջարկեց հրաժարվել «Միջին Ասիա և Ղազախստան» սահմանումից՝ հօգուտ «Կենտրոնական Ասիայի»։ Աշխարհագրության տեսակետից Կենտրոնական Ասիան ավելի խոշոր տարածաշրջան է, որը, բացի Միջին Ասիայից, ներառում է նաև Մոնղոլիան և Չինաստանի արևմտյան մասը: Այդ ամենը պետք է բարձրացնեն տարածաշրջանի բնակիչների ինքնագնահատականը»³: Ըստ ամերիկյան քաղաքագետների՝ այս տարածքը, որն իրենք անվանում են «Եվրասիական Բալկաններ», ավելի ընդգրկուն է՝ բացի ասիական նշված հինգ պետություններից, այստեղ են նաև Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը, ինչպես և Աֆղանստանը⁴: Համաձայն Բժեզինսկու

¹ Տե՛ս և *Современные международные отношения и мировая политика*, М., 2004, էջ 828-829:

² *Багратян Г.* Общество и государство, М. 2000, էջ 9:

³ *Центральная Азия на рубеже XX-XXI веков: политика, экономика, безопасность, урегулирование конфликтов*, Екатеринбург, 2017, էջ 6:

⁴ Տե՛ս *Бжезинский З.* Великая шахматная доска, М., 1998, էջ 151:

Միջին Ասիայի հինգ նոր պետությունները գտնվում էին ազգերի ձևավորման փուլում, ընդ որում, այնտեղ դեռևս ուժեղ են ցեղային-էթնիկ պատկանելության տրամադրությունները, ինչի հետևանքով գլխավոր խնդիրը դառնում է ներքին հսկամարտությունները⁵:

1991 թ. դեկտեմբերին Ռուսաստանի ինքնակամ հեռանալը տարածաշրջանից նորանկախ պետությունների ղեկավարներին բացառիկ հնարավորություն ընձեռեց ինքնուրույն տնօրինելու երկրների բնական պաշարները: Սակայն հենց այդ հնարավորության իրականացումը հանգեցրեց այդ տարածաշրջանում «աշխարհաքաղաքական խաղի»: Այդտեղ չափազանց կարևոր նշանակություն ձեռք բերեց տրանսպորտային միջանցքների վերահսկողության հիմնախնդիրը:

Այդ պետությունների ներառումը քաղաքական և տնտեսական հավասարագոր հարաբերությունների համակարգ գերակայությունների որոշման բավական բարդ խնդիր առաջադրեց: Պետք էր ընտրել քաղաքական և մշակութաքաղաքակրթական այնպիսի կողմնորոշում, որն ընդունակ կլիներ ամենաօպտիմալ կերպով ազդելու նրանց քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային զարգացման ուղղությամբ ամենաառաջինապ որոշումների ընդունման վրա: Ա.Միխայլենկոն իր «Ռուսաստան և ԱՊՀ. ինչպես ապրել հետո» ծրագրային հոդվածում նշում էր. «Գործնականում ԱՊՀ բոլոր երկրները նույն հիվանդությամբ են տառապում: Քաղաքական հարաբերություններում դա ներքին և արտաքին քաղաքականությունում կողմնորոշիչների կորուստն է, իսկ տնտեսականում՝ կառուցվածքային ճգնաժամը: Հաճախ կարծիք է արտահայտվում, որ այդ երկրները միասին ավելի հեշտ էլք կգտնեն ճգնաժամից: Փորձելով, առանց առանձնակի հաջողությունների, դուրս գալ համաշխարհային շուկաներ, հետխորհրդային տարածքի երկրները նորից դեմքով իրար են շրջվում»⁶:

Կենտրոնական Ասիայի պետությունների շրջադարձը դեպի Թուրքիա և Իրան որոշակի երկրնտրանք էր Ռուսաստանի հետ հարաբերությունների դժվարություններին, վերջինիս դանդաղաշարժությանը Կենտրոնական Ասիայի երկրների հետ ինտեգրացիոն գործընթացների կարգավորման բնագավառում՝ առանձնապես անկախության առաջին տարիներին: Ռուսաստանի տնտեսական դոկտրինը հիմնվում էր ԽՍՀՄ նախկին թույլ հանրապետություններից ազատվելու անհրաժեշտության վրա: Կենտրոնական Ասիայի երկրները Ռուսաստանի այդ պահի շահերի գերակայությունների մեջ չէին մտնում: Հենց այդ ժամանակ այդ երկրների մեծ մասը դիմեց Իրանի և Թուրքիայի կուտակած փորձին: Ընդ որում, Թուրքիայի փորձի ուսումնասիրումն ու ընդօրինակումը, ըստ էության, նշանակում էին «ինդուստրիալ քաղաքա-

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 152:

⁶ Михайленко А. Россия и СНГ: как жить дальше?. // Мировая экономика и международные отношения, 1997, № 10, с. 116-124. <https://doi.org/10.20542/0131-2227-1997-10-116-124>

կրթության» երկրներին մերձենալու ուղղությամբ շարժում և, ի վերջո, Կենտրոնական Ասիայի երկրների արևմտամետ կողմնորոշում: Քանի որ այդ երկրներն անփորձ էին արտաքին քաղաքականության և պաշտպանության հարցերում, «Թուրքիան տվյալ պետությունների կողմից դիտարկվում էր այնպիսի տարածաշրջանային ուժ, որը լուրջ փորձ ուներ սեփական ռազմական ուժերի բարենորոգումների հարցում»⁷:

Թուրքիայից բացի՝ այս տարածաշրջանի վրա 1990–ականների սկզբից իր գերիշխանությունն էր ուզում հաստատել Իրանը: Շնորհիվ իր աշխարհագրական դիրքի և մշակութային–քաղաքակրթական ազդեցության՝ Իրանը փորձում էր ինտեգրացիոն դեր խաղալ Կենտրոնական Ասիայի երկրներում: Այդ տարածաշրջանի, ի դեպ, նաև Կովկասի երկրների ի հայտ գալը նոր հնարավորություն էր ընձեռում Իրանին գաղափարական–քաղաքակրթական հենքի վրա հաստատվելու որպես տարածաշրջանային ազդեցիկ տերություն: Սակայն զգալով, որ գաղափարական ուղղվածություն ունեցող արտաքին քաղաքականությունը տարածաշրջանային երկրների նկատմամբ խորացնում է այդ երկրների աշխարհիկ վարչակարգերի հակակրանքը և անվստահությունն իր նկատմամբ, Իրանը որոշեց ավելի իրատեսական մոտեցումներ ցուցաբերել: Այդ վերաձևման հենքը այն հասկացությունն էր, որ գաղափարական ազդեցության քաղաքականությունը տարածաշրջանում հեռանկարային որևէ բան չի խոստանում, և իրանական դիվանագիտությունը փորձեց ներգրավվել տարածաշրջանային համագործակցության հնարավոր բոլոր բնագավառներում՝ առաջնայնությունը տալով տնտեսությանը:

Կովկասյան պետությունների և Կենտրոնական Ասիայի երկրների հարաբերությունները 90–ական թվականներին ճանաչողական էին: Որոշակի վերապահումներով նույնը կարելի է ասել նաև Հայաստանի մասին: Ի՞նչ հաջողությունների էր հասել Հայաստանը ԱՊՀ երկրների հետ կապերի զարգացման գործում հարցին ՀՀ ԱԳՆ ԱՊՀ երկրների վարչության պետը անկեղծորեն պատասխանել էր. «Ակտիվ, լուրջ և, եթե կարելի է ասել, հավատարիմ գործընկերները ընդամենը երեքն են՝ Ռուսաստանը, Թուրքմենստանը և Վրաստանը: Կոպիտ ասած՝ Թուրքմենստանը զազն է, Ռուսաստանը՝ մնացյալ ամբողջը, իսկ Վրաստանի միջոցով այդ ամենը հասնում է մեզ»⁸: Ցավոք, Հայաստանում անկախության առաջին տարիներին արտաքին քաղաքականության հայեցակարգ չմշակվեց, ուստի հնարավոր չէ ներկայացնել ՀՀ պաշտոնական դիրքորոշումը Կենտրոնական Ասիայի երկրների նկատմամբ, սակայն ՀՀ ԱԳ նախարար Վ. Փափազյանը 1996 թ. սեպտեմբերին հանդես եկավ «ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններն ու գերակայությունները»

⁷ **Овсепян Л., Иванов В.** Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа и Центральной Азии, Ер., 2010, с. 119.

⁸ Как дальше жить будем? «Время» օրաթերթ, 1995 թ., դեկտեմբերի 16:

հողվածով, որում մասնավորապես նշել էր. «Անկասկած, ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական առաջնություններից մեկը մնում է Անկախ Պետությունների Համագործակցությունը: Միջազգային այդ կազմակերպության շրջանակներում Հայաստանի ներգրավվածությունը մեծապես պայմանավորվում է այստեղ առկա կոնկրետ քաղաքական գործընթացներով և նախադրյալներով... Կենտրոնական Ասիայում Հայաստանի կողմից տարվող արտաքին քաղաքականության առանցքում գտնվում է Թուրքմենստանը, որը մեր արտաքին առևտրական գործընկերների շարքում Իրանից և Ռուսաստանից հետո երրորդն է: Ավելին. Հայաստանի տնտեսության կենսապահովումը ներկայումս զգալիորեն կախված է թուրքմենական գազի առաքումներից»⁹:

Ճշմարտության դեմ չմեղանչելու համար պետք է նշել, որ Կենտրոնական Ասիայի երկրների արտաքին քաղաքականությանը վերաբերող հայեցակարգերում նույնպես Հայաստանը առաջնահերթությունների մեջ չի մտնում: Սա որոշակիորեն տարակուսելի էր, քանի որ հայերը միշտ էլ տարածաշրջանում նկատելի են եղել իրենց ներկայությամբ և՛ հասարակական-քաղաքական բնագավառում, և մշակութային-տնտեսական ոլորտներում: Նույնիսկ հայերի միգրացիոն հոսքերը հետաքրքրություն են ներկայացրել նորահայտ պետությունների վիճակագրական փոփոխությունների առումով (բացի Տաջիկստանից)¹⁰: Տարածաշրջանում հայերի դերի մասին մենագրություններ կան, օրինակ՝ Գ.Բալյանի «Армяне в Кыргызстане»¹¹:

Անդրադառնանք Հայաստանի հարաբերություններին Կենտրոնական Ասիայի երկրների հետ առանձին-առանձին:

Ղազախստանը, որը Ջ. Բժեզինսկին համարում էր «տարածաշրջանի վահան»¹², այդ ժամանակաշրջանում Հայաստանի հետ ամենամեծ իրավապայմանագրային հենք ունեցող երկիրն էր: Հայ-ղազախական հարաբերություններին նվիրված ատենախոսությունում դեսպան Ժ. Ադիլբանը բավականին դրական մոտեցում է ցուցաբերում դրանց. «Դիվանագիտական հարաբերությունների հաստատման պահից սկսած՝ Ղազախստանի և Հայաստանի միջպետական փոխգործակցությունը զարգանում է գործընկերության և փոխշահավետության ոգով: Երկկողմ հարաբերությունները կարգավորող հիմնական փաստաթղթերն են 1993 թ. հունվարի 19-ին կնքած «Ղազախստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև հարաբերությունների հիմքերի մասին» պայմանագիրը և 1999 թ. սեպտեմբերի 1-2-ը ստորագրված «Բարեկամության և համագործակցության մասին» պայմանագիրը, որոնք

⁹ Վ. Փափազյան, ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններն ու գերակայությունները, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 1996 թ., սեպտեմբերի 18:

¹⁰ Տե՛ս և Миграция населения в странах СНГ, 1996г., МОМ 1968, էջ 59, 71, 124, 149:

¹¹ Տե՛ս և Балян Г. Армяне в Кыргызстане, Бишкек, 1999:

¹² Տե՛ս և Бжезинский З., նշվ. աշխ. էջ 156:

ստորագրվել են Հայաստանի նախագահների այցերի ընթացքում»¹³: Վ. Փափազյանն ավելի իրատես էր. «Ղազախստանի հետ Հայաստանի հարաբերությունները զարգացել են բնականոն ընթացքով: 1993 թ. հունվարից հետո, երբ Ալմաթի այցելեց ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, և ստորագրվեց երկու երկրների միջև բարեկամության պայմանագիր, կնքվել են նաև մի շարք այլ համաձայնագրեր, որոնք գլխավորապես վերաբերում են երկու երկրների միջև առևտրատնտեսական համագործակցության ոլորտին: Մակայն դրանք առայժմ մնացել են հիմնականում թղթի վրա, իսկ Ղազախստանի հետ առևտրական կապեր են իրականացնում միայն Հայաստանի մասնավոր ձեռնարկությունները, որոնց ապրանքափոխանակությունն աննշան է»¹⁴:

Ղազախստանի արտաքին քաղաքականության գերակայությունների մեջ Հայաստանը չէր մտնում, այն դիտարկվում էր որպես ԱՊՀ տարածքում ստեղծված տարբեր կազմավորումների դաշնակից: 1993 թ. հրապարակվեցին այն սկզբունքները, որոնք կազմում էին Ղազախստանի արտաքին քաղաքականության հիմքը: Համաձայն դրանց, Ղազախստանի հարաբերությունները տարբեր երկրների հետ պետք է կարգավորվեն ըստ կարևորության, ըստ «Համակենտրոն շրջանների՝ կենտրոնից ծայրամաս:

Առաջին շրջանը նախատեսում է հատուկ հարաբերություններ Ռուսաստանի հետ:

Երկրորդ շրջանը ենթադրում է բարեկամական կապեր Ղրղզստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի և Տաջիկստանի հետ:

Երրորդ շրջանը նախատեսում է կապերի հաստատում ասիական տասը պետությունների հետ, ուր բացի ԿՍ երկրներից, մտնում են Թուրքիան, Իրանը, Պակիստանը, Աֆղանստանը և Ադրբեջանը: Դա թույլ կտար առևտրային ճանապարհներ հարթել դեպի Ասիայի հարավ և արաբական երկրներ:

Չորրորդ շրջանը նշանակում է կայուն, բարեկեցիկ կապեր հաստատել Չինաստանի հետ, ինչը կապահովի Ղազախստանի ելքը դեպի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածքի նավահանգիստներ:

Հինգերորդ շրջանը ներառում է հնարավորություն մոտիկից ծանոթանալու Ճապոնիայի, ԱՄՆ և Արևմտյան Եվրոպայի առաջավոր տեխնոլոգիաներին»¹⁵:

Արդար լինելու համար ուշադրություն դարձնենք, որ այս ցուցակում, բացի Հայաստանից, բացակայում են նաև Վրաստանը և ԱՊՀ մյուս երկրները:

Ինչպես նշվեց, Հայաստանի նախագահները 90-ականներին երկու անգամ այցելել են Ղազախստան՝ 1993 թ. հունվարին՝ Ալմաթի և 1999 թ. սեպտեմբերին՝ արդեն նոր մայրաքաղաք Աստանա: 1993 թ. հունիսից Ղազախստանում գործում է ՀՀ դեսպանությունը, որը, ի դեպ, Հայաստանի առաջին դեսպանությո-

¹³ <https://api.nla.am/server/api/core/bitstreams/49c6f2da-1749-4d90-ac0d-be570afa2872/content>, էջ 22:

¹⁴ Վ. Փափազյան, նշվ. հոդվածը:

¹⁵ **Чжен Кун Фу**, Геополитика Казахстана. Между прошлым и будущим, Алматы, 1999, с. 227.

յուններից էր: Երկու երկրների հարաբերությունները որոշակիորեն ակտիվացան արդեն XXI դարում, սակայն դա մեր թեմայի շրջանակից դուրս է: Բարեկամական հարաբերությունների կարևոր գործոն է Ղազախստանի մոտ 25-հազարանոց հայկական սփյուռքը՝ տեղակայված Կարազանդա, Կոստանայ, Պավլոդար, Ալմաթի քաղաքներում և միավորված ազգային-մշակութային 14 կենտրոններում¹⁶:

Հիմնականում 90-ականների սկզբներին Ղազախստանի և Հայաստանի միջև երկկողմ հարաբերությունների ձևավորումը կարելի է բնորոշել քաղաքական և տնտեսական գերակայությունների հստակ կերտումով, ինչպես նաև ռազմավարական նպատակների սահմանումով, որոնք ուղղված էին Ղազախստանի ազգային շահերի առաջխաղացմանը հարավկովկասյան տարածաշրջանում և համապատասխանաբար Հայաստանի շահերի պաշտպանմանը Կենտրոնական Ասիայում: Անկախության ձեռքբերումից հետո նախկին խորհրդային երկրների առջև հառնեցին արտաքին քաղաքական մի շարք բարդ հիմնախնդիրներ, որոնց թվում նաև համագործակցության զարգացումը նոր հենքի վրա: Արևմտյան արժեքներից «արբեցումը», ինչը հատուկ էր անկախության առաջին տարիներին, ժամանակի ընթացքում փոխվեց և՛ Արևմուտքի, և՛ հարևանների նկատմամբ իրատեսական մոտեցումով:

Ի դեպ, Ղազախստանի նախագահ Նազարբաևը այժի էր ընկնում նաև միջնորդական հաշտարար առաքելություններով. նա և Ռուսաստանի նախագահ Ելցինը 1991 թ. սեպտեմբերին այցելեցին Երևան–Ստեփանակերտ-Բաքու: Սեպտեմբերի 23-ին Ժելեզնովոդսկում Ղարաբաղի հիմնահարցի լուծման միջնորդի և երաշխավորի դեր ստանձնած Ռուսաստանի և Ղազախստանի, ինչպես նաև Հայաստանի և Ադրբեջանի միջև ստորագրվեց հակամարտության խաղաղ կարգավորման մասին կոմյունիկե, որն Ադրբեջանը անմիջապես խախտեց¹⁷:

Անկախ Ղազախստանի արտաքին քաղաքականության ձևավորման վրա որոշակի ազդեցություն ունեին Ռուսաստանի և Չինաստանի հետ երկարաձիգ սահմանները և սլավոնական բնակչության մեծ թիվը՝ 43.4%: Ղազախստանի ղեկավարությունը գիտակցում էր, որ երկրի զարգացումը պահանջում է արտաքին քաղաքական հմուտ խուսանավում¹⁸: Այս հարցում և՛ Ղազախստանը, և՛ Հայաստանը, անկախության ձեռքբերման շրջանից սկսած, հավատարիմ են մնացել բազմավեկտոր արտաքին քաղաքականությանը՝ կարողանալով չջրջանցել Ռուսաստանի, Միացյալ Նահանգների, Եվրոպական միության և Չինաստանի շահերը: Ինչպես նշում էր ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանը, «...Հայաստանը կարող է լինել այն վայրը, որտեղ Ռուսաստանի, Եվրոպական միության ու Միացյալ Նահանգների կամ որևէ երկու ենթադրաբար

¹⁶ Տե՛ս <https://api.nla.am/server/api/core/bitstreams/49c6f2da-1749-4d90-ac0d-be570afa2872/content>, էջ 23:

¹⁷ Տե՛ս Հայոց պատմություն, հատոր 4-րդ, Եր., 2016, էջ 224:

¹⁸ Տե՛ս **Троицкий Е.** Внешняя политика Казахстана: формирование и развитие (1992-2000гг.) www.cyberleninka.ru. Kazakhstan.

մրցակից երկրների՝ մասամբ համընկնող շահերը կարող են բավարարվել: Ավելին՝ հետամուտ լինելով մեր ազգային շահերի իրականացմանը՝ մենք պետք է վերահաստատեինք, որ նրանց հակադրվող շահերը երբևէ չեն շահարկվի՝ մեկին մյուսի դեմ հանելով: Մենք պետք է մերժեինք վերադարձը սառըպատերազմյան մտածողությանը...»¹⁹:

Ամփոփ ներկայացնելով Ղազախստանի արտաքին քաղաքականությունը՝ կարող ենք ասել, որ 1990–ականները ավելի շուտ «բազմավեկտորության և կայունության» մարտավարության նախադրյալների և ելակետի, այլ ոչ թե դրանց փաստացի իրականացման տարիներ էին²⁰:

Այս տարածաշրջանում արտաքին քաղաքականության այլ՝ չեզոքության մարտավարություն էր դավանում Թուրքմենստանը: Այս երկիրը գտավ միջոցներ, որոնք թուրքմեն ղեկավարությանը թույլ տվեցին լուծել երկմիասնական խնդիրը՝ երկրի անվտանգության պահպանումը և արտաքին պայմանների ստեղծումը, որոնք բարենպաստ պետք է լինեին վարչակարգի համար: Առաջինը «դրական չեզոքության» հայեցակետն էր, որը նախատեսում էր ոչ միայն ռազմական միություններին, այլև ցանկացած «միջպետական միությունների չմասնակցություն, որոնք նախատեսում են կոլեկտիվ պատասխանատվություն»²¹: 1995 թ. ՄԱԿ ընդունված Թուրքմենստանի չեզոք կարգավիճակը 90–ականների վերջից երկիրը սկսեց մեկնաբանել որպես ինքնամեկուսացում. թուրքմեն ղեկավարության արտասահմանյան շփումները գրեթե զրոյացան, երկիրը պատասպարվեց միջազգային մշակութային համագործակցությունից, 1999 թ. ԱՊՀ երկրների հետ մտցրեց արտոնագրային կարգ: Այդ ժամանակ Հայաստանի ղեկավարության փոփոխությունը ավելի սառեցրեց երկու երկրների քաղաքական հարաբերությունները: Այս պայմաններում ավելի է կարևորվում Թուրքմենստանի նախագահի հիրավի պատմական այցը Հայաստան 1996 թ. մարտին: «1996 թ. մարտին, ի պատասխան ՀՀ նախագահ Լ. Տեր–Պետրոսյանի 1993 թ. Աշգաբադ կատարած այցի, երբ ստորագրվեց բարեկամության մեծ պայմանագիրը, Երևան այցելեց Թուրքմենստանի նախագահ Ս. Նիյազովը: Նշենք, որ դա ընդհանրապես որևէ օտար պետության նախագահի առաջին այցն էր մեր երկիր»²²: Փափագյանի այս միտքը որոշակի բացատրություն է պահանջում. անկախության ձեռքբերումից հետո Հայաստան որևէ երկրի առաջին դեմք չէր այցելել: Մենք Նազարբանի և Ելցինի այցը Հայաստան 1991 թ. սեպտեմբերին չենք անտեսում, սակայն այդ ժամանակ Հայաստանը միջազգայնորեն ճանաչված չէր որպես անկախ պետություն: Նիյազովը առաջին դեմքերի այցերի սկիզբը դրեց: Միմյուրիկ նշանակությունից բացի, այցը շատ կարևոր էր

¹⁹ Վ. Օսկանյան, Անկախության ճանապարհով, Եր., 2013, էջ 82:

²⁰ Տե՛ս **Троицкий Е.**, նշվ. աշխ.:

²¹ **Троицкий Е.** Внешняя политика Туркменистана в 1992-2006 гг: от нейтралитета к самоизоляции, <https://cyberleninka.ru/article/n/vneshnyaya-politika-turkmenistana-v-1992-2006-gg-ot-neytraliteta-k-samoizolyatsii-1>

²² Վ. Փափագյան, նշվ. հոդվածը:

նան Հայաստանի տնտեսության համար, քանի որ կնքված պայմանագրերով զազի դիմաց Հայաստանի բազմամիլիոնանոց պարտքը վարկի վերաձևակերպվեց: Թուրքմենստանի նախագահն Արզավանդում այցելեց թուրքմեն էմիրների դամբարան, ինչը հայ և թուրքմեն գիտնականների համատեղ ուսումնասիրությունների հիմքը հանդիսացավ²³:

Ջարմանալի է, որ իր նշանակությամբ կարևոր այս այցի վերաբերյալ ՀՀ ԱԳՆ կայքում որևէ հիշատակում չկա²⁴: Հայաստանի դեսպանությունը Ազգաբաղում բացվել է 1994 թ., իսկ Թուրքմենստանի դեսպանությունը Երևանում՝ 2000 թ.: ՀՀ նախագահը 1990-ականներին երկու անգամ այցելել է Թուրքմենստան, հիմնականում տնտեսական-զազային հարցերի թնջուկներ լուծելու համար: Բավականին արդյունավետ էր գործում նաև նոր ձևաչափով Հայաստան-Թուրքմենստան-Իրան եռակողմ համագործակցությունը:

Ուզբեկստանի հետ այդ թվականներին հարաբերություններն անկանխատեսելի էին: Դիվանագիտական հարաբերություններն ԱՊՀ երկրներից ամենաուշը հաստատվեցին Ուզբեկստանի հետ՝ 1995 թ. հոկտեմբերին²⁵: Ի դեպ, Ուզբեկստանը Ադրբեջանի հետ էլ դիվանագիտական հարաբերությունները հաստատեց նույն օրերին: Այդ ժամանակաշրջանում փոխայցեր չեն եղել: Ուզբեկստանը 90-ականների սկզբներին որոշակի վերապահումներ ուներ Հայաստանի և հայերի նկատմամբ՝ կապված խորհրդային ժամանակների ամենահնչեղ քրեական՝ «բամբակի գործի» հետ, որը հետաքննում էր հայազգի Գոլյանը: Դա դժվար է բացատրել, սակայն Արևելքում անձնական հարաբերությունները և անձի դերը մեծ նշանակություն ունեն, ինչը պետք է միշտ հաշվի առնել նման երկրների հետ շփումներում:

Ուզբեկստանը միշտ մրցել է Ղազախստանի հետ տարածաշրջանում դեկավար դերի համար: «Ուզբեկստանը Միջին Ասիայի երկրների ազգային զգացմունքների ոգին է... Փաստացի Ուզբեկստանը Միջին Ասիայի տարածաշրջանային առաջնորդի գլխավոր թեկնածուն է: Չնայած Ուզբեկստանն իր տարածքով և բնական պաշարներով այդքան հարուստ չէ, որքան Ղազախստանը, նրա բնակչությունն ավելի է (մոտ 25 միլիոն) և միատարր»²⁶: Ի դեպ՝ հայերի թիվն էլ տարածաշրջանային երկրներում ամենաբարձրը Ուզբեկստանում է՝ 60 հազար: Մեծ ուշադրություն դարձնելով արտաքին քաղաքականությանը՝ դեռևս 1991 թ. ստեղծվեց կառավարական աշխատանքային խումբ, որը սկսեց մշակել Ուզբեկստանի արտաքին քաղաքականության հայեցակարգը: Հաշվի էին առնվում նոր պետության ռեալ դիրքորոշումները միջազգային

²³ Տե՛ս «Թուրքմենստանի նախագահ Նիյազովը կժամանի Երևան», «Հայաստանն այլևս ընթացիկ արտաքին պարտք չունի», ԱԶԳ օրաթերթ, 1996 թ., մարտի 19,20:

²⁴ Տե՛ս mfa.am/hy/bilateral-relations/tm

²⁵ Տե՛ս mfa.am/hy/bilateral-3-relations/uz

²⁶ Бжезинский З., նշվ. աշխ., էջ 156–157:

հարցերում, երկրի գերակայությունները և շահերը²⁷: Երկրի անկախ քաղաքականության օրինակ է հարաբերությունները ՀԱՊԿ հետ. 1992 թ. դառնալով ՀԱՊԿ հիմնադիր անդամ՝ 1999 թ. նա դուրս եկավ կազմակերպությունից, 2006–ին վերադարձավ, ապա 2012–ին նորից դուրս եկավ: Այնպես որ Հայաստան–ՀԱՊԿ չարձրկված թնջուկը Ուզբեկստանում հեշտ են լուծում. երկրին պետք է մտնում են, հետո առանց վարանումների դուրս գալիս: Նույնը նրանք արեցին նաև ՎՈՒԱՄ–ի պարագայում:

«Կենտրոնական Ասիայի մյուս պետությունների՝ Ղրղզստանի և Տաջիկստանի հետ կապերը մասամբ պահպանվում էին ԱՊՀ շրջանակներում բազմակողմ պայմանագրերի հիման վրա»²⁸:

Հայաստանի և Ղրղզստանի միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1993 թ. հունվարին: 1993 թ. Լ. Տեր–Պետրոսյանի այցից հետո Ղրղզստանի նախագահ Ա. Ականը, 1997 թ. ապրիլին պաշտոնական այցով գտնվելով Երևանում, մահմեդական երկրներից առաջին ղեկավարն էր, ով այցելեց Մեծ եղեռնի հուշահամալիր²⁹: Ղրղզստանի արտաքին քաղաքականության հիմնական շեշտը տարածաշրջանային ինտեգրումն էր. 1994 թ. Չուլպոն–Աթայում Ղազախստանի, Ուզբեկստանի և Ղրղզստանի մասնակցությամբ ստեղծվեց Կենտրոնասիական միություն, իսկ դրա տրամաբանական ավարտը համաշխարհային հանրության կողմից ճանաչված «Մետաքսի ճանապարհի դիվանագիտության» հայեցակարգն էր, որն ընդունվեց 1998 թ. սեպտեմբերին³⁰:

Տաջիկստանի հետ դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992 թ. հոկտեմբերին: «Տաջիկստանը անկախության առաջին տարիներին գտնվում էր շատ ծանր վիճակում: Չնայած բոլոր արգելքներին՝ Տաջիկստանը չէր դադարեցնում դիվանագիտական հարաբերությունները հեռավոր և մոտ հանրապետությունների հետ: Տաջիկստանն իր աշխարհագրական, երկրաքաղաքական դիրքով և տնտեսական հետաքրքրություններով մտնում է քաղաքական հինգ բլոկների մեջ: Առաջին ուղղությունը ԱՊՀ–ն է, երկրորդը՝ Կենտրոնական Ասիան, երրորդը՝ շրջապատի պարսկալեզու պետությունները, չորրորդ ուղղությունը Արևելքի մահմեդական երկրներն են, իսկ հինգերորդը՝ միջազգային հանրությունն է»³¹:

²⁷ Տե՛ս **Нишанов Д.**, Внешняя политика Республики Узбекистан в 90-е годы XX века <https://viewer.rsl.ru/ru/rsl01003449147?page=1&rotate=0&theme=white1999թ>

²⁸ Վ. Փափազյան, նշվ. հոդվածը:

²⁹ Տե՛ս «Հայ–ղրղզական հարաբերություններն անամպ են», ԱԶԳ օրաթերթ, 1997 թ., ապրիլի 22: Ի դեպ, Թուրքիան այդ քայլի դեմ բողոքեց, ինչն ունեցավ իր հետևանքները: ԱԳ նախարար Ռ. Օթունբասան հրաժարական ներկայացրեց, աշխատանքից ազատվեցին Ղրղզստանի ԱԳՆ ԱՊՀ վարչության պետը, այցի նախապատրաստման այլ պատասխանատուներ (ծան. հեղինակի, ով այդ ժամանակ ՀՀ ԱՊՀ երկրների վարչության պետն էր):

³⁰ Տե՛ս **Омаров Нур**, Внешняя политика Кыргызстана через призму многовекторности, <http://www.apn.kz/publications/artikle6351.htm>

³¹ Տե՛ս **Фармонова Д.** Становление внешней политики республики Таджикистан и ее правовые основы,

Ամփոփելով նշենք, որ Կենտրոնական Ասիայի երկրների փոխհարաբերությունները Հայաստանի, ինչպես նաև ԱՊՀ մյուս երկրների հետ (բացառելով Ռուսաստանը) ինքնուրույն ձևաչափ դեռ չէին ստացել: Կենտրոնական Ասիան ներմայրացամաքային է, որն ուղիղ ելք չունի դեպի ծովային հաղորդակցության ճանապարհները: Աշխարհաքաղաքական նոր իրադրության շնորհիվ տարածաշրջանը ներքաշվում էր համաշխարհային կենտրոնների որոշակի հետաքրքրությունների ոլորտ³²:

1990-ականներին Հայաստանի արտաքին քաղաքականության գերակայությունների մեջ Կենտրոնական Ասիայի երկրները նույնպես չէին մտնում: Հայաստանն այդ տարիներին ռազմական բլոկի մեջ էր տարածաշրջանի չորս պետությունների հետ (բացի Թուրքմենստանից), սակայն քաղաքական հարաբերությունները հիմնականում սահմանափակվում էին ԱՊՀ շրջանակներով, իսկ տնտեսական չափորոշիչները գրեթե զրոյական մակարդակի էին: Սակայն արտաքին քաղաքականության ակտիվությունը, որն առաջին հերթին ուղղված էր երկրի ազգային շահերի պաշտպանմանը, ազգային անվտանգության ապահովմանը, նպաստեց, որ այդ ժամանակ Հայաստանը միջազգային քաղաքականության սուբյեկտից ձևափոխվի օբյեկտի և տարածաշրջանային գործընթացների ակտիվ մասնակցի: Հայաստանի պետական անկախության կայացման և զարգացման ժամանակաշրջանի արտաքին քաղաքականության զսպանակների և մեխանիզմների իմացությունը նպաստում է իրադրության ռեալ գնահատականին և գործողությունների օբյեկտիվ վերլուծությանը³³: Այդ ամենը համալիր կերպով օգնում է գերծ մնալ սխալներից և կարողանալ դիմակայել մարտահրավերներին:

ГУРГЕН ОГАНЕСЯН – Армения и страны Центральной Азии в 1990-годы. – После развала Советского Союза главным приоритетом внешней политики новообразованных стран стал поиск новых союзников и экономических партнеров. Сравнительно удачную попытку консолидации сделали пять стран Центральной Азии. В статье разъясняется почему упоминается Центральная Азия, а не привычная нам Средняя Азия. В политическом плане для Армении они никогда не были в приоритете, но в сфере экономики Туркменистан занимал третье место, будучи главным поставщиком газа. В свою очередь, Армения тоже не входила в круг интересов этих государств. Вместе с тем, было несколько визитов. Историческим был визит президента Туркменистана Ниязова в марте 1996 года, который был первым визитом главы иностранного государства в истории Армении. Представлял интерес также визит президента Киргизии Акаева, который первым из руководителей мусульманского государства посетил Мемориальный комплекс Геноцида в Цицернакаберде. Отмечены посреднические усилия президента Казахстана Назарбаева по урегулированию Карабахского конфликта. В статье рассматриваются вопросы энергетической безопасности.

<https://cyberleninka.ru/article/n/stanovlenie-vneshney-politiki-respubliki-tadzhikistani-eyo-pravovye-osnovy>

³² Տե՛ս **Иманалиев М.** Центральная Азия в системе совместной безопасности, // Центральная Азия и Кавказ, 1999, № 3, էջ 20:

³³ Տե՛ս **Агаджанян Г.** Становление и развитие внешней политики Республики Армения в 1993-2003 гг., <https://www.dissercat.com/content/stanovlenie-i-razvitie-vneshnei-politiki-respubliki-armeniya-v-1991-2003-gg>

Упоминается также армянская диаспора Центральной Азии, которая, к сожалению не имеет политического потенциала. И сегодня отношения с этими странами нельзя охарактеризовать как близкие.

Ключевые слова: СНГ, Средняя Азия, Центральная Азия, независимость, концепция, визиты, договор, дипломатические отношения, многосторонняя дипломатия, энергетическая дипломатия, посреднические усилия, Карабахский конфликт, приоритет, экономика, регион

GURGEN HOVHANNISYAN – Armenia and Central Asian Countries in the 1990s. – After the collapse of the Soviet Union, the main task of the foreign policy of the newly formed states was the search for allies and economic partners. Five Central Asian countries made a relatively successful attempt at consolidation. It is explained in the article why Central Asia is mentioned, and not the Middle Asia we are used to.

Politically, they were never on the list of priorities for Armenia, but economically, Turkmenistan was the third for our country, being the main supplier of gas. Armenia was not in the circle of the interests of those states, either. At the same time, there were a number of visits. The visit of the President of Turkmenistan Niyazov, in March 1996, which was the first in the list of the leaders of the countries who visited Armenia, is of historical significance. The visit of Kyrgyz President Akayev, who was the first among the heads of Muslim countries to visit the Genocide Memorial in Tsitsernakaberd, was also of interest. Mediation efforts of Kazakh President Nazarbayev aimed at the peaceful settlement of the Karabakh conflict, are mentioned. The issues of energy security are also addressed. The Armenian diaspora of Central Asian countries is also mentioned, which, unfortunately, has no political potential. Even today, the relations with those countries cannot be described as too warm.

Key words: CIS, Middle Asia, Central Asia, independence, doctrine, visits, agreement, diplomatic relations, multilateral diplomacy, energy diplomacy, mediation efforts, Karabakh conflict, supremacy, economy, region

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԲԵՌՆԻՆՈՒՄ (1918 Թ. ԱՊՐԻԼ-ՀՈՒՆԻՍ)

ՆՈՒՇԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ* 

Երևանի պետական համալսարան

Հոդվածում լուսաբանվում են Բեռնիում հայկական պատվիրակության դիվանագիտական գործունեությունն ու ռազմավարական քայլերը 1918 թվականի ապրիլ-հունիս ամիսներին:

Աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում՝ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտական փուլում և Ռուսական կայսրության փլուզման ֆոնին, հայկական պատվիրակությունը գործունեություն սկսեց՝ միջազգային ճանաչում և աջակցություն ապահովելու նորանկախ Հայաստանի Հանրապետությանը: Հայկական հարցի լուծումը փորձ էր արվում գտնել օսմանյան Թուրքիայի և կայսերական Գերմանիայի միջև առկա հակասությունների և շահերի բախումների բարդ ու դժվարին իրողությունների պայմաններում:

Վերլուծելով սկզբնաղբյուրները և դիվանագիտական նամակագրությունը՝ հոդվածում արտացոլվում են ուսումնասիրվող ժամանակահատվածում պատվիրակության ջանքերը՝ հանուն հայկական պետականության ամրապնդման: Բացի այդ, ներկայացվում են միջազգային լարված իրադրությունում գերմանական և օսմանյան իշխանությունների հետ պատվիրակության հարաբերությունները՝ գնահատելով դրանց ազդեցությունը Հայաստանի անկախության և գոյատևման ձգտումների վրա: Հոդվածում լուսաբանվում են այն մարտահրավերներն ու հնարավորությունները, որոնց բախվել են Բեռնիում հայ պատվիրակները պետականության կերտման կարևորագույն փուլում:

Բանալի բառեր – Բրեստ-Լիտովսկի պայմանագիր, հայկական պատվիրակություն, Անդրկովկաս, գերմանական կառավարություն, Բաթումի պայմանագիր

Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կնքումից հետո թվում էր, թե Գերմանիան պետք ներդրում ունենար պայմանագրի դրույթները կենսագործելու հարցում՝ հաշվի առնելով Թուրքիայի վրա նրա ազդեցության լծակները: Բրեստ-Լի-

* **Նուշիկ Պետրոսյան** – ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ

Нужик Петросян – аспирантка кафедры международных отношений и дипломатии ЕГУ

Nushik Petrosyan – PhD Student at YSU Chair of International Relations and Diplomacy

Էլ. փոստ՝ n.petrosyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0000-0002-2843-8202>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 09.07.2024

Գրախոսվել է՝ 15.07.2024

Հաստատվել է՝ 10.09.2024

© The Author(s) 2024

տովսկի պայմանագրի 4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերություններով ուսական կողմը պարտավորվեց թուրքերին վերադարձնել ոչ միայն պատերազմի ընթացքում Արևմտյան Հայաստանի գրավյալ տարածքները (կամ «Արևելյան Անատոլիայի նահանգները», ինչպես գրված է պայմանագրում), այլև 1878 թվականից Ռուսական կայսրության մաս հանդիսացող «Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերը»¹: Փաստացի, պայմանագրով Անդրկովկասը մնաց ռազմականապես անպաշտպան վիճակում:

Անդրկովկասի ժողովուրդները չընդունեցին Բրեստի պայմանագիրը, սակայն անկարող էին դիմակայելու թուրքական մեծաքանակ ուժերին, ուստի գնացին բանակցությունների նախ Տրապիզոնում, ապա Բաթումում: Այս բանակցությունները, սակայն, առավել ծանր կացության մեջ դրեցին Բրեստի պայմանագիրը չընդունած անդրկովկասյան երկրներին՝ պատճառելով ավելի մեծ տարածքային կորուստներ:

1918 թ. ապրիլ-մայիս ամիսներին Բեռլինում գործում էր Հայոց ազգային կենտրոնական խորհրդի պատվիրակությունը՝ Ա. Ջամալյան, Գ. Մելիք-Ղարաբյոզյան, Լ. Նազարյան կազմով: Հայ դիվանագետները փորձում էին Հայկական հարցի լուծման համար օգուտ քաղել Քառյակ միության պետությունների, մասնավորապես՝ օսմանյան Թուրքիայի և կայսերական Գերմանիայի միջև աշխարհաքաղաքական, տնտեսական ու դիվանագիտական հակասություններից ու շահերի բախումներից: Նախորդիվ Օսմանյան կայսրությունը, կոպտորեն խախտելով Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրում ամրագրված դրույթները և սահմանները, ներխուժել էր Անդրկովկաս, ինչը հակասում էր Գերմանիայի և նրա դաշնակիցների աշխարհաքաղաքական ու տնտեսական շահերին տարածաշրջանում: Այդ պատճառով էլ պաշտոնական Բեռլինը և նրա դաշնակիցները տարբեր առիթներով պահանջում էին Օսմանյան կայսրության ռազմաքաղաքական ղեկավարությունից անհապաղ դադարեցնել տարածաշրջանում ռազմական ներխուժումներն ու տարածքային բռնագավթումները: Սակայն վերջինս, անտեսելով դաշնակիցների բողոքներն ու պահանջները, համառորեն շարունակում էր իրականացնել իր համաթուրանական ռազմավարական և ծավալապաշտական ծրագիրը²:

Անդրադառնալով Բեռլինի հայկական պատվիրակության գործունեությանը՝ նշենք, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կենսագործման առնչությամբ բազմաթիվ են եղել գերմանացի գեներալ-լեյտենանտ ֆոն Լոսովի ահագանգերը Գերմանիայի արտգործնախարարություն՝ Թուրքիային թույլ չտալու հավակնություններ դրսևորել գերմանական ազդեցության գոտում և ոտնահարել նրա

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 179-180, տե՛ս նաև **Հ. Ազատյան**, Բախտորոշ պայմանագրեր, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2002:

² Տե՛ս **Գ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության պատվիրակության առաջին բանակցությունները Կոստանդնուպոլսում (1918 թ. հունիս), «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2022, № 3, 3-16, էջ 4:

տնտեսական շահերը: Ըստ այդմ՝ նա առաջարկում էր նախ թուրքերին ստիպել ճանաչել Բրեստի պայմանագիրը՝ որպես իրավական հիմք, ապա իրականացնել տարածքային փոխանակումներ՝ Ախալցխայի մահմեդականներով բնակեցված տարածքները հանձնելով Թուրքիային՝ փոխարենը նրանից ստանալ Կարսի հայկական արևելյան հատվածը և Բաթումից հյուսիս ընկած շրջանը³:

Գերմանական կառավարությունը, սակայն, հակված չէր ընդունելու ֆոն Լոսովի առաջարկը՝ Բրեստի պայմանագիրը Թուրքիային պարտադրելու վերաբերյալ: Այդուհանդերձ, հայկական կողմը շարունակում էր հույսեր կապել Գերմանիայի հետ՝ թուրքական նոր հնարավոր կոտորածները կանխելու համար: Մրանով էր պայմանավորված 1918 թվականի ապրիլի երկրորդ կեսին հայկական պատվիրակության գործուղումը Բեռլին: Պատվիրակության կազմում ընդգրկված էին ՀՅԴ անդամներ Արշակ Ջամալյանը և Լիպարիտ Նազարյանը, ինչպես նաև Ժողովրդական կուսակցության անդամ Գևորգ Մելիք-Ղարաբյոզյանը⁴:

Հարկ է ընդգծել, որ պատվիրակությունը մինչև Բեռլին հասնելը եղավ Մոսկվայում: Լիպարիտ Նազարյանը պատվիրակության մյուս երկու անդամներին միացավ փոքր-ինչ ուշացումով, որից հետո նրանք հանդիպումներ ունեցան ՌԻՍՖՅ ազգությունների ժողովրդական կոմիսար Ստալինի, ռազմական գծով ժողկոմ Տրոցկու, արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Կարախանի և բարձրաստիճան այլ անձանց հետ: Վերջիններիս հետ հանդիպումների արդյունքը գործնական մեծ նշանակություն ունեցավ, քանի որ Տրոցկին ու Կարախանը նրանց հորդորեցին ձևավորել պատվիրակություն և մեկնել Եվրոպա, իսկ Կարախանն անձամբ կարգավորեց այցազրեր տրամադրելու հարցը՝ հնարավորություն ստեղծելով պատվիրակների համար անարգել անցնելու Գերմանիա⁵:

Պատվիրակության անդամների Բեռլին ժամանելու օրը՝ ապրիլի 22-ին, հռչակվեց Անդրկովկասյան Դաշնային Դեմոկրատական Հանրապետությունը, և Մեյմը հայտարարեց Ռուսաստանից Անդրկովկասի անջատման մասին: Այս ամենին պատվիրակությունը տևական ժամանակ իրազեկ չէր, քանի որ զրկված էր Գերմանիայում թարմ տեղեկատվություն ստանալու հնարավորությունից, ինչը բարդացնում էր պատվիրակության գործունեությունը, որը շարունակ բախվում էր Գերմանիայում թուրքական ապատեղեկատվությանը⁶:

Բեռլինում հայկական պատվիրակությունը արտգործնախարարությանը հանձնում է ուղերձ՝ ներկայացնելով Կովկասում իրավիճակը, և մասնավորապես հայության ծանրագույն կացությունը, իսկ մեկ այլ ուղերձով խնդրում է գերմանական կառավարությանը անել հնարավորը՝ թուրքական սպառնալիքը

³ St' u Documents of political archives of Ministry of Foreign Affairs of Germany; the volume is composed and the introduction is written by Mikaelyan V., Yerevan, 2004:

⁴ St' u ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 132, թ. 1-4, տե՛ս նաև **Հ. Ավետիսյան**, Հայկական հարցը 1918 թվականին, Եր., 1997, էջ 177-178:

⁵ St' u ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 132, թ. 1-4:

⁶ St' u ՀԱԱ, ֆ. 220, ց. 1, գ. 120, թ. 86:

տարածաշրջանում վերացնելու, տեղական բնակչության անվտանգությունն ապահովելու, Բրեստի պայմանագիրը կյանքի կոչելու, նաև Կարսի, Արդահանի ու Բաթումի բնակչությանը ինքնորոշվելու իրավունք տալու համար: Միաժամանակ առաջարկվում էր տեղում իրավիճակին ծանոթանալու համար գերմանական հատուկ հանձնաժողով առաքել տարածաշրջան⁷: Պատվիրակությունը նման ուղերձներ հղեց նաև Ռայխստագին ու հեղինակավոր տարբեր քաղաքական գործիչների գերմանա-հայկական ընկերակցության միջոցով՝ ներկայացնելով իրավիճակը Անդրկովկասում, ինչպես նաև թուրքերի բացահայտ նվաճողական գործելաձևը:

Գերմանիան պահանջեց Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունից դադարեցնել առաջխաղացումն ու տարածքային բռնազավթումները երկրամասում և բանակցային սեղանի շուրջ նստել Անդրկովկասի հետ: Հայկական պատվիրակության գործունեությանը զուգահեռ՝ 1918 թ. ապրիլի 27-ին Կոստանդնուպոլսում գերմանական կողմի ճնշման պայմաններում կնքվեց գերմանա-թուրքական գաղտնի դաշնագիր, որով Անդրկովկասը բաժանվեց ազդեցության ոլորտների Թուրքիայի և Գերմանիայի միջև: Թուրքիային էին անցնում Անդրկովկասում նրա գրաված բոլոր հայկական տարածքները, ինչպես նաև Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին ու Ադրբեջանը: Անդրկովկասի մնացած տարածքները, մասնավորապես Վրաստանը, անցնում էին Գերմանիայի ազդեցության ոլորտ⁸: Թուրքերը հետագայում կարողացան կորզել նաև Անդրկովկասի երկաթուղով գործերի անարգել տարանցման իրավունքը՝ պայմանավորելով այն հյուսիսային Իրանում անգլիական գործերի առաջխաղացումը կանխելու հանգամանքով, սակայն ձգտումն ուղղված էր դեպի Բաքու: Նույն օրը՝ ապրիլի 27-ին, գերմանա-թուրքական դաշնագիրը շրջանցելու նպատակով Թուրքիան գաղտնի դաշինք կնքեց մուսավաթականների հետ, որով բացվում էր թուրքերի ճանապարհը դեպի Բաքվի նավթը և Թուրքեստանի բամբակը: Մինչ գերմանացիները կհասկանային իրողությունը, Բաքուն արդեն գրավված էր թուրքերի կողմից: Այս ամենը ավելի էր խորացնելու առանց այն էլ լարված հարաբերությունները Թուրքիայի հետ: Ի պատասխան Թուրքիայի վրաց-գերմանական գաղտնի բանակցությունների արդյունքում Գերմանիան ամրագրեց Վրաստանի հովանավորի դերը: Այս իրավիճակը վկայում էր, որ տարածաշրջանում գլխավորապես սեփական տնտեսական շահերն իրացնող Գերմանիային շատ քիչ էին հետաքրքրում հայերի կենսական խնդիրները. փոխարենը տարաբնույթ գործարքների միջոցով նա ձգտում էր ամրապնդել տնտեսական և ռազմավարական նշանակություն ունեցող տարածքներում սեփական դիրքերը:

⁷ Տե՛ս **Ա. Հայրունի**, Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թվականին, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 28:

⁸ Տե՛ս **Գ. Պետրոսյան**, Հայաստանի Հանրապետության միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը 1918-1920 թթ., Եր., ԵՊՀ հրատ., 2023, էջ 133:

Թեև հայկական պատվիրակությունը մեծ ցանկություն ուներ հանդիպելու կանցլերին, սակայն կարողացան հանդիպել միայն ԱԳՆ-ի գաղտնի խորհրդական Գյուլպերտին և պետքարտուղարի տեղակալ ֆոն դեր Բուշեին⁹:

Բուշեի հետ հանդիպման ժամանակ՝ մայիսի 4-ին, պետքարտուղարի տեղակալը ողջունեց պատմական նման ծանր պայմաններում հայերի վստահությունը Գերմանիայի նկատմամբ՝ ընդգծելով վերջինիս պատրաստակամությունը՝ հաստատելու տևական խաղաղություն մահմեդականների և քրիստոնյաների միջև՝ հավաստիացնելով, որ նույն մոտեցումն ունի նաև թուրքական կառավարությունը: Պետքարտուղարի տեղակալը միաժամանակ խուսափողական պատասխան էր տալիս՝ առաջարկելով հայկական կողմին իր դիրքորոշումը համապատասխանեցնել Անդրկովկասյան Սեյմի մնացյալ ներկայացուցիչների հետ:

Ավելի ուշ՝ մայիսի 21-ին, կայացավ ԱԳՆ-ի գաղտնի խորհրդական Գյուլպերտի հետ հանդիպումը, որը նույնպես շոշափելի արդյունքներ չբերեց: Նա ևս խուսափողական պատասխաններ տվեց թուրքական կողմի հետ Անդրկովկասի առնչությամբ շարունակական բանակցությունների վերաբերյալ՝ միաժամանակ շեշտելով, որ հատուկ ներկայացուցիչ է ուղարկվելու Կովկաս, որը տեղյակ է թուրքական գործերից: Նա նաև առաջարկում էր հանդիպում քննարկումներ ունենալ ֆոն Լոսովի հետ¹⁰: Վերջինիս հետ բանակցություններ էր վարում Բաթումում գտնվող հայկական պատվիրակությունը՝ Օհանջանյանի գլխավորությամբ, սակայն ֆոն Լոսովը զինվորական էր, ուստի որոշումներ կայացնելու իրավասություններ չունեց և հանդես էր գալիս հրահանգներ կատարողի դերում: Մի քանի օր անց արդեն հռչակվեցին Անդրկովկասի անկախ հանրապետությունները, ուստի պատվիրակության գործունեությունը պետք էր համապատասխանեցնել ստեղծված իրավիճակին: Այս մասին ընդգծեց նաև Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը՝ հորդորելով համաձայնություն ձեռք բերել Վրաստանի ու Ադրբեջանի հետ:

Այս ամենն արդեն իսկ վկայում է, որ պատվիրակության գործունեությունը Բեռլինում չծառայեց իր նպատակին և չարդարացրեց գործադրված ջանքերը: Դիմելով Բեռլինում Ավստրո-Հունգարիայի դեսպանություն՝ պատվիրակությունը որոշեց նաև այցելել Վիեննա, սակայն նրան հայտնեցին, որ արտգործնախարար Բուրյանը չի կարող ընդունել¹¹, որից հետո պատվիրակության անդամները համարեցին իրենց առաքելությունը ավարտված և մայիսի 30-ին վերադարձան Բեռլինից:

Հարկ է ընդգծել, որ գերմանական կառավարությանը անհանգստություն էին պատճառում Բրեստի պայմանագրի կնումից հետո թուրքական շրջաններում ծայր առած ազգայնական տրամադրությունները: Իհարկե, ազգայնական

⁹ Տե՛ս **Ա. Հայրունի**, նշվ. աշխ., էջ 25:

¹⁰ Տե՛ս **Ա. Խատիսյան**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 92:

¹¹ Տե՛ս **Հ. Ավետիսյան**, նշվ. աշխ., էջ 178

տրամադրությունները վերացնելու և Բրեստի պայմանագիրը պարտադրելու համար Գերմանիան չէր պատրաստվում զենքով ընդդիմանալ, սակայն չէր էլ որդեգրել ծայրահեղ հաշտվողական կեցվածք՝ զիտակցելով Թուրքիայի հետ տարաձայնությունների հետևանքները, որոնք կարող էին հանգեցնել ազդեցության գոտիների կորստյան¹²: Փոխարենը ջանքերն ուղղվում էին գաղափարական մոտեցումներով թուրքական կողմին պայմանագրի դրույթների կենսագործումը համոզելուն: Գերմանա-թուրքական դիվանագիտական երկխոսությունների ընթացքում գերմանական կողմը պարբերաբար ընդգծում էր կնքված պայմանագրերի դրույթներին հավատարիմ մնալու Թուրքիայի պարտավորությունը և տեղական բնակչության նկատմամբ հանդուրժողական վերաբերմունքի անհրաժեշտությանը. սակայն այս ամենը, իհարկե, պանթուրքական գաղափարակրի համար որևէ նշանակություն չունեին:

Թուրքիայի ռազմատենչ գործունեությունը սաստելու հարցում Գերմանիայից որևէ աջակցություն չստանալով՝ նորանկախ Հայաստանը Թուրքիայի հետ ստորագրեց իր առաջին միջազգային պարտավորությունը՝ Բաթումի պայմանագիրը, որին նախորդել էր պարտավորագիրը: Այն ծանրագույն հետևանքեր բերեց հայկական կողմին՝ պատճառելով տարածքային մեծ կորուստներ և սահմանափակելով դիվանագիտական ու արտաքին քաղաքական ինքնուրույն գործունեություն ծավալելու իր ինքնիշխան իրավունքը: Հետագայում ևս հայկական կողմի քայլերը ուղղված էին Գերմանիայի միջազգային աջակցության ձեռքբերմանը, սակայն որևէ նշանակալի արդյունքի չհանգեցրին, քանի որ ստեղծված միջազգային դրությունն ու շահերի համադրմանն ուղղված տեղությունների քայլերը չէին համընկնում հայկական կողմի շահերին:

Ամփոփելով հայկական պատվիրակության Բեռլինում գործունեության առաջին փուլը՝ ընդգծենք, որ մեծ հույսեր կապելով Գերմանիայի կառավարության հավաստիացումների և աջակցության հետ՝ հայկական առաքելությունը քանիցս դիմել էր գերմանական կողմին Բրեստի դրույթների կենսագործման, նաև հայ փախստականների հարցը կարգավորելու համար, սակայն ապարդյուն: Ուստի հայկական պատվիրակությունը ընդհատել էր իր դիվանագիտական առաքելությունը և մայիսի 30-ին Բեռլինից վերադարձել Թիֆլիս:

Հայկական պատվիրակության գործունեությունն այս ամենով չավարտվեց: Օրեր անց՝ 1918 թ. հունիսի առաջին կեսին, նորաստեղծ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետությանը պատկանող, սակայն Բաթումի պայմանագրով թուրքերի զավթած տարածքների ազատագրման, այդ պայմանագրի վերանայման, դրանով ամրագրված սահմանների փոփոխության, ինչպես նաև Երևանում ու շրջակայքում կուտակված՝ օրհասական վիճակում գտնվող բազմահազար փախստականների դրության

¹² St' u Documents of political archives of Ministry of Foreign Affairs of Germany..., էջ 374-375:

կարգավորման հարցերում Գերմանիայի աջակցությունն ստանալու նպատակով Հայոց ազգային խորհրդի անունից Բաթումի բանակցություններին մասնակցած՝ Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ Օ. ֆոն Լոսովի առաջարկով և ուղեկցությամբ Բեռլին գործուղեց պատվիրակություն, որի կազմում ընդգրկված էին Համո Օհանջանյանը և Արշակ Զուրաբյանը¹³:

Հ. Օհանջանյանի հրավերով պատվիրակությանը միացան նաև Ջեյմս Գրինֆիլդը (հայ էր մոր կողմից, Առաջին աշխարհամարտից առաջ հայ-գերմանական կոմիտեի նախագահ, Բեռլինի համալսարանի դոցենտ) և մեծանուն բանաստեղծ, արձակագիր և դիվանագետ Ավետիք Իսահակյանը: Կարճ ժամանակ անց պատվիրակությունը հանդես եկավ Հայաստանի Հանրապետության կառավարության անունից և իր ակտիվ ու դժվարին դիվանագիտական առաքելությունը ծավալեց Բեռլինում, Վիեննայում և եվրոպական այլ քաղաքներում՝ այդ մասին պարբերաբար իրագեկելով Կոստանդնուպոլսի հայկական պատվիրակությանը: Բեռլինում պատվիրակությունը գործեց շուրջ հինգ ամիս՝ հունիսից մինչև նոյեմբերի սկզբները¹⁴:

Պատվիրակության անդամների ստորագրությամբ գերմանական արտգործնախարարությանը ներկայացվեց ընդարձակ մի հուշագիր, որով, Գերմանիայի աջակցությունը հայցելով, հայկական պատվիրակությունը ներկայացնում էր թուրքական շարունակվող բնաջինջ քաղաքականությունն ու հայերի աղետալի դրությունը, ինչպես նաև փորձում էր հիմնավորել այն տնտեսական շահը, որ ընդլայնված սահմաններով հանրապետությունը կարող էր ունենալ Գերմանիայի համար: Պատվիրակության տեղեկագրերում տեղ էին գտնում նաև նախագուշացումներ այն մասին, որ հայերին չօգնելու դեպքում կարող էր ստեղծվել պայթյունավտանգ իրադրություն, որն ամբողջ Կովկասը բոցերի մեջ կառներ: Չէր բացառվում նաև օգնության բացակայության դեպքում մի երրորդ կողմի, այդ թվում՝ Քառյակ դաշինքին թշնամի որևէ պետության օգնությանն ապավինելու հավանականությունը¹⁵:

Հարկ է ընդգծել, որ արտգործնախարարությանը փոխանցված հուշագրում արտացոլված էին նաև գերմանացի հրապարակախոս Պաուլ Վայթցի ճամփորդական տեղեկագրում առկա վկայակոչումները: Վերջինս գերմանական կառավարության հանձնարարականով մեկնել էր Թուրքահայաստան՝ տեղում իրավիճակին ծանոթանալու համար: Թեև թուրքական կողմը չհոչընդոտեց, ավելին աջակցեց այցի կազմակերպմանը, սակայն արեց ամեն ինչ այն

¹³ Տե՛ս Die armenische Frage und der Genozid an den Armeniern in der Türkei, 1913-1919: Dokumente aus dem politischen Archiv des deutschen Auswärtigen Amtes, zusammengestellt und eingeleitet von Prof. Dr. Wardes Mikaelyan, Jerewan, 2004, էջ 531-544:

¹⁴ Տե՛ս Գ. Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության պատվիրակության առաջին բանակցությունները Կոստանդնուպոլսում ..., էջ 7:

¹⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 80, թ. 152-153:

ապատեղեկատվությամբ սնուցելու համար: Այդուհանդերձ, Վայթցը, հանդիպումներ ունենալով տեղի ազգաբնակչության հետ, կարողացավ հնարավորինս իրատեսորեն գնահատել իրավիճակը¹⁶:

Հայկական պատվիրակության պարզաբանումները տեղին էին, քանի որ եթե Գերմանիայի կառավարությունը անգամ շարունակեք հայության ճակատագրի հանդեպ անտարբեր գտնվել, ապա տարածաշրջանում իր հեռանկարային տնտեսաքաղաքական շահերն անտեսել չէր կարող: Առավել ևս, որ առանց Գերմանիայի հետ համաձայնեցման Բրեստի պայմանագիրը խախտելն ու թուրքական նվաճողական ջանքերն արդեն իսկ լրջորեն մտահոգել էին գերմանական կառավարությանը, որը չէր ընդունում Բաթումի պայմանագրերը և Թուրքիային կոչ էր անում ճանաչել Բրեստի պայմանագիրն ու հետ քաշել իր զորքերը:

Հունիսի 8-ին գլխավոր շտաբի պետ գեներալ Էրիխ Լուդենդորֆը, իսկ հունիսի 9-ին գերմանական բանակի գլխավոր հրամանատար ֆելդմարշալ Պաուլ ֆոն Հինդենբուրգը Էնվերին հղած հեռագրերով հերթական անգամ կոչ էին անում զորքերը հետ քաշել կովկասյան տարածքներից՝ բացառությամբ Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանների, ու ճանաչել Բրեստի պայմանագիրը: Այս ամենը պարզորոշ վկայությունն է այն բանի, որ գերմանա-թուրքական հարաբերություններում մայիս-հունիս ամիսներին նկատելի էր լարվածությունը, ինչը պայմանավորված էր նաև Կովկասի հարցում միասնական մոտեցման բացակայությամբ¹⁷: Գերմանական կողմի պահանջները չկատարելը պայմանավորված էր ոչ միայն Թուրքիայի կոշտ դիրքորոշմամբ, այլև գերմանացիների ոչ բավարար հետևողականությամբ:

Բայց և այնպես, Գերմանիան մտադիր չէր ընդունել Կովկասում Թուրքիայի մենիշխանության հավակնությունները. գերմանական և թուրքական կողմերն ի վերջո ձեռք բերեցին պայմանավորվածություն առ այն, որ Քառյակ դաշինքի բոլոր պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ Կոստանդնուպոլսում հրավիրվի համաժողով՝ Կովկասին վերաբերող սահմանային և մյուս բոլոր խնդիրները համատեղ լուծելու համար: Այդ համաժողովին մասնակցելու նպատակով 1918 թ. հունիսի 13-ին Կ. Պոլիս մեկնեց նաև հայկական մի պատվիրակություն Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ¹⁸: Գրեթե միաժամանակ այնտեղ ժամանեցին նաև վրացական պատվիրակները՝ Գեգեչկորու գլխավորությամբ, այնուհետև՝ թաթարներն ու Հյուսիսային Կովկասի ներկայացուցիչները:

Մինչև խորհրդաժողով հրավիրելը թուրքական կառավարությունը փորձում էր ստանալ Գերմանիայի համաձայնությունը Բաթումի պայմանագիրը պահպանելու հարցում, սակայն համոզվելով, որ Գերմանիան միտված է

¹⁶ Տե՛ս Die armenische Frage und der Genozid an den Armeniern in der Türkei, 1913-1919..., էջ 475:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 394:

¹⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 12, թ. 1-2:

Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կենսագործմանը, որդեգրեց խորհրդածողովը ձգձգելու քաղաքականություն, որը հաջողվեց, և ի վերջո այն չկայացավ:

Հայկական պատվիրակությունը հունիս-հուլիս ամիսներին 4 հուշագրեր ևս հանձնեց գերմանական արտգործնախարարություն, որոնցով կրկին ներկայացնում էր մարդասիրական ծանրագույն իրավիճակը և Կովկասում կուտակված փախստականների ողբերգական դրությունը: Հ. Օհանջանյանը իր գեկուցագրերից մեկում տեղեկացնում է, որ իրենք հուշագրերը և քարտեզները Չիսենկելուց վերցրած որոշ դիվանագիտական նյութերի հետ տպագրել են առանձին գրքով, սակայն չի թույլատրվել հասարակական լայն շրջաններում այն տարածել՝ հայ-թուրքական թշնամանքը չարելու համար¹⁹:

Ահարոնյանի գլխավորությամբ Կոստանդնուպոլիս մեկնող Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը իր դիվանագիտական բարդ ու դժվարին գործունեությունը ծավալելու էր Բեռլինյան հայկական պատվիրակության հետ համախորհուրդ: Նրանց նպատակն էր խորհրդածողովում ներկայացնել և պաշտպանել Հայկական հարցը:

Ամռան ամբողջ ընթացքում հայկական երկու պատվիրակությունները, շարունակական կապի մեջ գտնվելով, ջանում էին փախստականներին իրենց բնակավայրերը վերադարձնել և Գերմանիայի աջակցությունը ստանալ Բրեստի պայմանագրի գործադրման համար: Բեռլինի պատվիրակությունը Գերմանիայի արտգործնախարարությանը տեղեկություններով և օգնության խնդրանքներով շարունակ հաղորդ էր պահում թուրքական հայաջինջ քաղաքականության և տեղահանված հայերի անհուսալի դրության վերաբերյալ²⁰:

Այսպիսով, հայկական պատվիրակության նպատակները Բեռլինում բազմազան էին և տարածվում էին հետևյալ ուղղություններով.

1. Նախ՝ ձեռք բերել միջազգային ճանաչում և աջակցություն: Հայկական պատվիրակությունը դեռ հունիսին Բեռլինում ակտիվորեն ձգտում էր նորանկախ Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչմանը: Այս նպատակով նրանք համագործակցում էին գերմանացի պաշտոնյաների հետ՝ Հայաստանի ինքնիշխանությանը քաղաքական աջակցություն և լեգիտիմություն ապահովելու համար:

2. Դիվանագիտական կապերի հաստատում: Աշխարհաքաղաքական վերադասավորումների ֆոնին պատվիրակությունը հայտնվել էր բարդ իրավիճակում, որը պահանջում էր ճկուն դիվանագիտություն: Նպատակը Գերմանիայից և նրա դաշնակիցներից ռազմական օգնություն և պաշտպանություն ստանալն էր՝ հատկապես հաշվի առնելով Կովկասի տարածաշրջանում Օսմանյան կայսրության ծավալապաշտական նկրտումները:

¹⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 656, թ. 43:

²⁰ Տե՛ս Գ. Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության պատվիրակության առաջին բանակցությունները Կոստանդնուպոլսում ..., էջ 7:

3. Մարդասիրական ջանքեր: Սա նշված ժամանակահատվածում ամենազգայուն թեմաներից մեկն էր միջազգային գործունեություն ծավալելու առումով: Պատվիրակությունը կենտրոնացել էր հումանիտար խնդիրների վրա՝ մեղմելու հայ փախստականների և Հայոց ցեղասպանությունը վերապրածների վիճակը:

Ընդհանուր առմամբ, հայկական պատվիրակությունը Բեռլինում 1918 թվականի ապրիլ-հունիս ամիսներին հայկական շահերը միջազգային հարթակում առաջ մղելու գործում զգալի առաջընթաց է գրանցել: Նրա ջանքերը աշխարհաքաղաքական բարդ և անկանխատեսելի պայմաններում նպաստեցին Հայաստանի դիվանագիտական ճանաչմանն ու աջակցության հիմքերի ստեղծմանը:

НУШИК ПЕТРОСЯН – *Дипломатическая миссия армянской делегации в Берлине (апрель-июнь 1918 г.)* – В статье освещается дипломатическая деятельность и стратегические шаги армянской делегации в Берлине в переломные в армянской истории месяцы 1918 года (апрель-июнь).

После окончания Первой мировой войны и на фоне распада Российской империи армянская делегация в условиях сложной геополитической ситуации начала свою деятельность по обеспечению международного признания и поддержки новообразованной независимой Республики Армения.

На основе анализа первоисточников и дипломатической переписки в статье отражены усилия делегации в период исследования по укреплению армянской государственности на фоне сохраняющихся противоречивых глобальных интересов, а также обсуждаются отношения делегации с властями Германии и Османской империи в разгар войны и напряженной международной обстановки в целом, оценивая влияние вышеупомянутого на стремление Армении к независимости. Статья проливает свет на вызовы и возможности, с которыми столкнулись армянские делегаты в Берлине на важнейшем этапе истории становления государственности.

Ключевые слова: *Брест-Литовский договор, армянская делегация, Закавказье, правительство Германии, Батумский договор*


NUSHIK PETROSYAN – *The Diplomatic Mission of the Armenian Delegation in Berlin (April-June 1918)* – The article highlights the diplomatic activities and strategic steps of the Armenian delegation in Berlin in the critical months in Armenian history in 1918 (April-June).

After the end of the First World War and against the backdrop of the collapse of the Russian Empire, the Armenian delegation, in a difficult geopolitical situation, began its activities to ensure international recognition and support for the new independent Republic of Armenia.

Based on the analysis of primary sources and diplomatic correspondence, the article reflects the efforts of the delegation during the period of research to strengthen Armenian statehood against the backdrop of continuing conflicting global interests, and also focuses on the delegation's relations with the German authorities and the Ottoman Empire in the midst of war, tense international situation, assessing its impact on Armenia's desire for independence and survival. The article sheds light on the challenges and opportunities faced by the Armenian delegates in Berlin at the most important stage in the history of the establishment of statehood.

Key words: *Treaty of Brest-Litovsk, Armenian delegation, Transcaucasia, German government, Treaty of Batumi*

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԿԱՏԵՐԻՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ *
Երևանի պետական համալսարան

Հողվածում վերլուծվում են հանրային կառավարման համակարգն արդիականացնելու համար անհրաժեշտ պայմանները: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այսպես կոչված «արդիականացման վիբրացիաներ» հնարավոր է որսալ հանրային կառավարման հայեցակարգերի խորքային ըմբռնումից և կիրարկումից: Պարզվում է՝ այդ «վիբրացիաները» կարող են ակտիվացնել հանրային կառավարման համակարգի կենսունակությունը անհրաժեշտ պայմանների՝ պետականաշինության, բյուրոկրատիայի կազմակերպվածության, կայունության և այլնի միջոցով: Ուսումնասիրությունից պարզվել է նաև, որ առանց այդ և այլ պայմանները բավարարելու հնարավոր չէ երաշխավորել հանրային կառավարման արդի համակարգի հաստատումը: Այդ նպատակով հողվածում օգտագործվել են թեմային առնչվող տեսական ու էմպիրիկ ուսումնասիրությունների արդյունքները, ինչպես նաև համակողմանիորեն ներկայացվել է հանրային կառավարման համակարգի արդիականացումն ապահովող պայմանների փորձագիտական գնահատականների վերլուծությունը: Ըստ այդմ, իբրև հանրային կառավարման արդիականացման **համակարգային պայման** դիտարկվել է կառավարչական մշակույթը, **ինստիտուցիոնալ պայման**՝ հանրային (պետական) կառավարման մարմինների ինստիտուցիոնալ կայացումը, իսկ **արժեքանական պայման**՝ նոր գաղափարների տարածման ու շրջանառության ակտիվությունը: Տվյալների հավաքման ու վերլուծության արդյունքում եզրակացվել է, որ արդի հանրային կառավարման հաստատումը երաշխավորող համակարգային, ինստիտուցիոնալ և արժեքանական պայմաններն ունեն **սիներգիա**, այսինքն՝ դրանց ընդհանուր արդյունքը գերազանցում է առանձին արդյունքների գումարը: Միներգիան ապահովում է երկարաժամկետ արդյունքներ, իսկ պայմանների առանձին-առանձին ապահովումը՝ կարճաժամկետ ազդեցություններ: Հողվածի արդյունքները կարող են կիրառվել հումանիտար ու հասարակագիտական հետազոտություններում, հանրային կառավարման բարեփոխումների ու հանրային քաղաքականության մշակման ծրագրերում:

* **Կատերինա Ալտունյան** – քաղաքական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հանրային կառավարման ամբիոնի դոցենտ

Катерина Алтунян – кандидат политических наук, доцент кафедры Государственного управления ЕГУ
Katerina Altunyan – Candidate of Political Science, Associate Professor at YSU Chair of Public Administration
Էլ. փոստ՝ katya.altunyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0000-4506-6300>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 20.07.2024

Գրախոսվել է՝ 12.08.2024

Հաստատվել է՝ 10.09.2024

© The Author(s) 2024

Բանալի բառեր – *հանրային կառավարում, հանրային կառավարման հայեցակարգ, բյուրոկրատական կայունության ապահովում, վարչական (ադմինիստրատիվ) կազմակերպում, պետականաշինություն, վարչական բարեփոխումներ, տեղական ինքնակառավարում, արդյունավետ կառավարման ցուցիչ, ժողովրդավարական կառավարում*

Ցանկացած սոցիալական համակարգում կառավարումը սկսվում է գործունեության ու զարգացման պայմանների վերլուծությունից: Ուստի հանրային կառավարման համակարգն արդիականացնելու մասին քննարկումները քաղաքական, սոցիալական, տնտեսական նոր պայմանների համատեքստում ինքնին ուշարժան են: Հանրային կյանքից բխող իրողությունները փաստում են, որ առկա է պայմանների սերտ գոյակցություն կամ սիմբիոզ, որը պայմանավորում է արդիականացման հաջողությունը:

Հանրային կարգապահություն հաստատվում է հանրային ինստիտուտների վարքաբանական խորապատկերում, բայց միայն համակարգի վրա ինստիտուտների կարճաժամկետ ազդեցությունները հասկանալու տեսանկյունից: Մինչդեռ համակարգի բարեփոխման երկարաժամկետ արդյունքների ապահովման առումով, այսպես կոչված, սիներգետիկ համակարգ ձևավորելու և կիրարկելու համար անհրաժեշտ է ապահովել ինստիտուտների համաժամանակյա աշխատանք: Առանց նման աշխատանքի հնարավոր չէ երաշխավորել հանրային կառավարման արդի համակարգին անցումն ու կայացումը: Այդ մասին գրել է հանրային կառավարման ժամանակակից տեսության հիմնադիր-տեսաբան Փ. Դրաքերը, որի համոզմամբ՝ արդիականացման հաջողած կամ արագ ընթացք ունեցող պետություններում համակարգն ու ինստիտուտները գործում են փոխկապակցված ցանցի շրջանակներում: Տեսաբանը հավելում է, որ ցանկացած կազմակերպչական համակարգի, հատկապես փոքրի պարագայում փոխկապակցված գործելու և համաժամանակյա արդիականացվելու պայմանն առանցքային է¹: Ինչպես իրավացիորեն նշում են այլ հեղինակներ ևս, հանրային կառավարման համակարգի արդիականացման ընթացքի՝ իբրև ռեսուրսատար, ծանրաբեռնված գործընթացի արդյունավետ կառավարումը որոշում է բազում պայմանների բավարարման աստիճանը²: Ու թեև որոշ պայմանների առաջնային լինելու շուրջ առկա է կարծիքների որոշակի երկատում (դիստոմֆիա), այնուամենայնիվ ուսումնասիրությունը փաստում է սիներգիայի հիմնավորված լինելը:

Տեղին է քննարկումը սկսել հանրային կառավարման ինստիտուտների դերից: Վերջինս հետաքրքիր է մեկնաբանվել ու վերլուծվել արդի մի հայեցակար-

¹ Տե՛ս **Drucker P. F.**, Management Challenges for the 21st Century, Harper Business, 1st ed., N. Y., 2001, էջ 8:

² Տե՛ս **Randma-Liiv T.**, Small States and Bureaucracy: Challenges for Public Administration, University of Tartu, TRAMES, 2002, 6(56/51), 4, էջ 374–389:

զի շրջանակներում, որը ստացել է «**Դիմակայունության հայեցակարգ**» անվանումը (անգլ. «Concept of Resilience»): Այն մշակվել է անցումագիտական (տրանզիտոլոգիա) հետազոտությունների շրջանակներում, որոնցում վերլուծվել են հանրային կառավարման համակարգի ինստիտուտների՝ ժողովրդավարական անցման ընթացքում առաջացող տարբեր շոկերին դիմակայելու եղանակներն ու ձևերը: Ըստ այդմ՝ դիմակայունություն ասելով նկատի է առնվում անցման շոկերին ինստիտուտների ճկուն արձագանքելու գործընթացը³: Ուսումնասիրվող երևույթի էությունն ավելի խորքային ըմբռնելու ճանապարհին մասնագիտական աղբյուրներում հետաքրքիր էր «Հանուն դիմակայունության այլանս» կոչվող միջազգային, բազմամասնագիտական հետազոտական կազմակերպության փորձագետների սահմանումը: Դրա համաձայն՝ դիմակայունությունը կարելի է բնորոշել երեք հատկանիշներով՝ *ա) անկանխատեսելի փոփոխություններին դիմակայելու, սեփական գործառույթներն ու կառուցվածքները բարեփոխելու կարողունակությունը, բ) փոփոխություններին հարմարվելու կարողունակությունը՝ ինքնակազմակերպվելու և ինքնակարգավորվելու միջոցով, գ) նորարարությունները խրախուսելը*⁴:

Եվրոպական ակադեմիական և գիտավերլուծական հանդեսներում այսօր ավելի շատ է հանդիպում այն միտքը, որ արդի ինստիտուտները ինտեգրված չեն մեկ համակարգի մեջ: Այդ մտքից բխում է, որ հանրային կառավարման ուրակական փոփոխությունները վերլուծելու համատեքստում տարբեր ինստիտուտներ դիտարկվում են իբրև անկախ փոփոխականներ, և յուրաքանչյուրն ուրույն ձևով է ազդում ժողովրդավարության՝ իբրև կախյալ փոփոխականի վրա⁵: Ըստ այդմ՝ ինստիտուտները ստեղծում են ժողովրդավարության հաստատման ու կայացման առաջնային պայմաններ, բայցևայնպես պետական կառավարման ու տեղական մարմինները, քաղաքացիական հասարակությունը, մամուլը, ընտրությունները և/կամ այլք միառժամանակ առանձին ազդեցություններ են ունենում համակարգի և ժողովրդավարության վրա: Ի վերջո, ինչ-որ ինստիտուտից պետք է սկսել արդիականացման գործընթացը, և հետևաբար խնդիրն այն է, թե որոնք են մեկնարկայինները:

Եվ ուրեմն, առանձին ինստիտուտներ բարեփոխելու և արդիականացնելու, թե՞ համակարգային մոտեցման միջոցով վերլուծել հանրային կառավարման համակարգի արդիականացումը: Նախ, հարցի պատասխանը կփորձենք վեր հանել ու ձևակերպել հանրային կառավարման արդի հայեցակարգերից: Հանրային կառավարման համակարգի արդիականացումն ուսումնասիրելու

³ Տե՛ս **Profiroiu A.G., Nastacă C.C.**, What Strengthens Resilience in Public Administration Institutions? Eastern Journal of European Studies, Volume 12, Special Issue, August 2021, էջ 102-103:

⁴ Տե՛ս Resilience Alliance, Homepage, About, <https://www.resalliance.org/about> - հղումը հասանելի է 22.06.2024:

⁵ Տե՛ս **Sqapi G.**, Stateness Before Democracy? A Theoretical Perspective for Centrality of Stateness in the Democratization Process: The Case of Albania, Eastern Journal of European Studies, Vol. 10, Issue 1, June 2019, էջ 45 – 65:

դասական հայեցակարգը պահանջում է նվազագույնը կառուցվածքի, գործառույթների, համակարգային փոփոխությունների ընդհանուր միտումների մասին գիտելիքներ: **Ժամանակակից հայեցակարգն** առավելագույնը պահանջում է կիրառել հանրային կառավարման համակարգի արդիականացման վրա ազդելու «փափուկ ուժ» և նոր գործիքներ⁶: Ներկա փուլում նվազագույն և առավելագույն մոտեցումները համատեղվում են: Վերջինը փաստում են նաև վերլուծական այն շրջանակները, որոնք հանրային կառավարման համակարգի արդիականացումը վերլուծում են բարդ փոխակերպումների համատեքստում⁷: Այդ համատեքստի էությունը հետևյալն է. Ժողովրդավարական վարչակարգի պայմաններում հանրային կառավարման մոդելային արդիականացումն իրականացվում է պետության ռազմավարական կուրսին համահունչ, օրինականության ու ողջամտության սկզբունքներով, որոնց առաջնային կրող են հանրային ինստիտուտները: Ի գիտություն ընդունելով նշված իրողությունը՝ սույն ուսումնասիրության շրջանակներում առավել արժևորվել է պայմանների ըմբռնումը, քանի որ առանց դրանց բավարարման հնարավոր չէ իրականացնել սիներգետիկ սկզբունքով հանրային կառավարման համակարգի արդիականացում:

Բացելով նախորդ մտքի բովանդակությունը՝ նշենք, որ պայմանն այն անհրաժեշտ հիմքն է, հնարավորությունների ամբողջությունը, որի վրա խարսխվում է ցանկացած երևույթ: Պայմանի ուժով են ծագում գործողություններ, որոնք որոշում են հաջողելու հնարավորություններն ու դժվարությունները: Հետևաբար, հանրային կառավարման համակարգի «արդիականացման վիբրացիաներ» են հաղորդվում որոշակի պայմանների ուժով: Խնդրի համակողմանի ուսումնասիրության հիման վրա պայմանականորեն առանձնացվել են **պայմանների երեք**՝ համակարգային, ինստիտուցիոնալ և արժեքանական **մակարդակներ**: Յուրաքանչյուր մակարդակին առանձին անդրադարձը հնարավորություն կտա առավել խորքային ըմբռնելու հանրային կառավարման համակարգի արդիականացումը:

Հանրային կառավարման ժամանակակից հայեցակարգերի խորքային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համակարգային մակարդակում առաջին պայմանը **կառավարման մշակույթ** կոչվող երևույթն է: Դրա համակողմանի սահմանմանումը կարելի է տալ հետևյալ կերպ. կառավարչական մշակույթը պատմականորեն ձևավորված կառավարչական փորձառությունների, իրողությունների ազդեցություններն արտացոլող համոզմունքների, արժեքների, վերաբերմունքի դրսևորումների ամբողջություն է: Հատկանշական է, որ

⁶ Sté u **Aspridis G. M., Pouliana L.**, The Culture of Modern Public Administration. The Case of Greece, Academicus - International Scientific Journal, www.academicus.edu.al, էջ 142-155:

⁷ Sté u **Durman M. O., Bashannyk A. H., Kornienko V., Omarov A. E., Levchenko S. H.**, The Paradigm of Public Administration and its Development in Conditions of State Formation and Changes, International Journal of Economics and Business Administration Volume VIII, Special Issue 1, 2020, էջ 178-189:

կառավարման մշակույթը ներթափանցում է հանրային կառավարման բոլոր մակարդակներ՝ համապետականից մինչև տեղական⁸: Միջազգային փորձագիտական շրջանակներում կառավարման մշակույթի շուրջ խոսույթը ներկայումս ծավալվում է ժողովրդավարական վարչակարգերի վերլուծության համատեքստում⁹: Ըստ հավաքական կարծիքի՝ ժողովրդավարությունը կոչված է պաշտպանելու հանրային կառավարման համակարգը աղավաղումներից (դեֆորմացիաներից): Անդրազգային կառավարման ֆլորենսյան դպրոցի պրոֆեսոր **Մայքլ Բուները**, օրինակ, վերջերս հրատարակած գիտական հոդվածում կառավարման մշակույթն արժևորել է հանրային պաշտոնյայի ժողովրդավարական սկզբունքով առաջնորդելու, կազմակերպչական հմտությունների և տիրապետելու, բարեվարքություն կրելու և այլ հատկանիշներով¹⁰: Վերլուծական այլ շրջանակներ էլ ոչ թե առանձին հանրային պաշտոնյային, այլ ամբողջ պետական վարչակազմն (բյուրոկրատիա) են դիտարկում՝ մատնանշելով, որ ժողովրդավարական կառավարչական մշակույթում, ի տարբերություն ավտորիտարի, պետական վարչակազմին բնութագրում են ապակենտրոն գործելաճը, հանձնառու և բովանդակային աշխատանքը¹¹: Ի հավելումն նշենք, որ թեև և՛ ժողովրդավարական, և՛ ավտորիտար վարչակարգերում պետական վարչակազմն ունի լեգիտիմություն, այդուհանդերձ առաջինի դեպքում լեգիտիմությունն ունի ինտեգրելու ներուժ, իսկ երկրորդի դեպքում այն իներցիոն է: Պատահական չէ, որ բազում ներքին տարբերություններ, բազմազանություն ունեցող հանրային (պետական) համակարգերում, օրինակ, վարչատարածքային կազմակերպման ձևից մինչև տեղական կյանքի կազմակերպման տարբերությունները, չեն արգելակում պետական վարչակազմի կարողունակությունը՝ ինտեգրելու դրանք:

Համակարգային մակարդակում հանրային կառավարման արդիականացման ևս մի կարևոր պայման ենք դիտարկել **պետականաշինությունը**: Պետականությունն այն «վահանն» է, որով պաշտպանված է հանրային (պետական) կառավարման ինստիտուտների համակարգը: Պատահական չէ, որ 1950-ականներից աշխարհում հետաքրքրություն է առաջացնում **պետականության ինդեքսային գնահատումը**, որի համար տվյալները հավաքվում են ինստիտուտներից ստացված ցուցանիշների հենքով: Ամուր պետականություն ունե-

⁸ Տե՛ս **Ezeudu T.S., Yau I. Z.**, The Impact of Culture on Effective Public Administration in Nigeria, Journal Of Political Discourse, /vol 1, № 1 & 2 / March & June, 2023, www.jopd.com.ng, էջ 53-54:

⁹ Տե՛ս **Khromov A.V., Gadzalo I., Abroskin V.V., Zavalnyi M.V.**, Perspectives of Public Administration's Development: International Experience, Amazonia Investiga, 10(44), Volume 10 - Issue 44: 270-277/August, 2021, էջ 273:

¹⁰ Տե՛ս **Bauer M.W.**, Administrative Responses to Democratic Backsliding: When is Bureaucratic Resistance Justified? Regulation & Governance (2023), published by John Wiley & Sons, Australia, 2023, էջ 5-6:

¹¹ Տե՛ս **Monteiro P., Adler P.S.**, Bureaucracy for the 21st Century: Clarifying and Expanding our View of Bureaucratic Organization, Academy of Management Annals, 2022, Vol. 16, № 2, էջ 432-433:

ցող պետություններին բնորոշում են գործունակ ինստիտուցիոնալիզմը, դատական ու իրավապահ մարմինների կայացած համակարգը, արհեստավարժ վարչարարությունը, զարգացած ենթակառուցվածքները: Ի հիմնավորումն՝ վկայակոչենք 2023 թվականի դրությամբ պետականության բարձր ինդեքս ունեցող առաջատար պետությունների ցուցակը (թվով 43)՝ ի դեմս արևմտաեվրոպական երկրների¹²: Միջազգային հանրության շրջանում մեծ հեղինակություն է վայելում նաև մեկ այլ՝ «**Բերթելսման հիմնադրամի փոխակերպման ինդեքսը**» (BTI), որը վերլուծում ու համեմատում է խաղաղ ճանապարհով պետականաշինության ամրապնդմանն ուղղված ռազմավարությունները: Վերոնշյալ ինդեքսի երեք՝ քաղաքական, տնտեսական, կառավարչական չափումներն են առավել հետաքրքրական: **Քաղաքականը** ենթադրում է պետականության ժողովրդավարական կարգը, ներառում է մասնակցության իրավունքը, օրենքի գերակայությունը, ինստիտուտների կայունությունը, ինչպես նաև քաղաքական ու սոցիալական ինտեգրումը: **Տնտեսականը** ենթադրում է շուկայական տնտեսության բաղադրիչը, ինչպիսիք են տնտեսական ցուցանիշները, շուկայի և մրցակցության կարգավորումը, արժույթի և գների կայունությունը, մասնավոր սեփականության պաշտպանությունը: Վերջինին գումարվում է նաև **սոցիալական բաղադրիչը**, այսինքն՝ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը, սոցիալական կարգուկանոնը, բնապահպանությունը և կրթության որակը: Իսկ **կառավարչական չափումը** գնահատում է, թե որոշում կայացնողները որքանով են կարողանում ղեկավարել ու նպաստել արդիականացման գործընթացին՝ վերլուծելով ռեսուրսների ծախսման արդյունավետությունը, կոնսենսուսի ստեղծումը, միջազգային համագործակցությունը և այլն¹³: Ընդհանրացնելով վերոնշյալը՝ կարելի է մեկ եզրահանգում անել, որ արդյունավետ հանրային կառավարումը ենթադրում է հանրային բոլոր ոլորտների կարգավորում՝ հիմնված հանրային կառավարման արդի սկզբունքների վրա: Չափազանց կարևոր է մշտապես դիտարկման ենթարկել այն պայմանները, որոնք կարող են նպաստել ու երաշխավորել պետականաշինության գործընթացի շարունակականությունն ու ամրապնդումը: Ցանկացած պետականություն պետք է պատրաստ լինի անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու համակարգային խնդիրները լուծելու կամ քաղաքականությունների բացասական հետևանքները մեղմելու համար: Այդ նշանակում է նաև վերահսկել պետության ողջ տարածքն ու երաշխավորել կայուն, բարեկեցիկ, ժողովրդավարական համակարգի կենսունակությունը:

Թեև վերը նշեցինք, որ ինստիտուտներն առանձին-առանձին ի վիճակի չեն

¹² Sté u Stlx Report: The World of States in 2023: Country Overview 2023:

¹³ Sté u The Transformation Index, <https://bti-project.org/en/?&cb=00000> , Transformation Index BTI 2024, www.bertelsmann-stiftung.de/en/publications/publication/did/transformation-index-bti-2024-all - հղումները հասանելի են եղել 22.06.2024:

որակապես բարեփոխելու, դա ամեննին չի նշանակում, որ հանրային կառավարման համակարգի արդիականացման **ինստիտուցիոնալ մակարդակը** կրավորական է: Հանրային կառավարման «արդիականացման վիբրացիաներ» են ստացվում առանձին ինստիտուտներից, որովհետև բացառապես ինստիտուցիոնալ մտածողության պայմաններում է հնարավոր սահմանել հանրային կառավարման արդի դերը: XX դարի 80-ական թվականներից ի վեր հանրային կառավարման հայեցակարգերը փորձել են հստակ ուրվագծել հանրային կառավարման ենթահամակարգերի և դրանց ինստիտուտների կարգավորիչ կապերը: Նպատակին, այդուհանդերձ, լիարժեք հասնել չի հաջողվել, քանզի ենթահամակարգերը սերտորեն փոխկապված են, և դժվար է որևէ բաղադրիչ գերադասել: Շատ հաճախ այդ դժվարությունները կապված են ֆինանսավորման եղանակների, տրված առաջադրանքների և այլնի հետ: Նշված խնդրին վերաբերող խոսույթում շարունակում է գերակա դիրքում մնալ պետությունը՝ իբրև հանրային կառավարման համակարգի ինստիտուտ¹⁴: Պատճառն այն է, որ պետությունն է հանրային բարիք ստեղծող գերակա ինստիտուտը, ինչպես նաև պետությունն է սահմանում հանրային (պետական) կառավարման մարմինների իրավասությունները, վերահսկում պատասխանատու կառավարում իրականացնելու գործառույթը: Եվ թեև հանրային կառավարման տարբեր ոլորտներում համատեղ ու փոխհամաձայնեցված գործողությունների անհրաժեշտություն կա՝ օրենքի խստիվ պահպանմամբ, ինստիտուտների լիազորությունները պետք է ապակենտրոնացված լինեն: Այսպես օրինակ՝ Եվրոպայի խորհուրդ (ԵԽ) կոչվող կառույցի կողմից ընդունված բազում փաստաթղթերում ամրագրվել է սկզբունքն առ այն, որ հանրային լիազորությունների իրականացումը պետք է ապակենտրոնացված լինի¹⁵: Առաջնորդվելով արդյունավետությունն ու տնտեսումն ապահովելու մարտավարությամբ՝ հանրային կառավարման ենթահամակարգերի ինստիտուտներն այսօր պահանջ ունեն գործելու հստակ նախանշված լիազորությունների ու պարտականությունների տիրույթում: Ինչպես իրավացիորեն նշել է **Ս. Բատալին**, հանրային կառավարման դերակատարների գործառույթունը արդիականացման ընթացքում քաղաքական ազդեցություններից զերծ չի մնում¹⁶: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ կարևոր է, որ հանրային կառավարման դերակատարների լիազորություններն իրենց հերթին ինստիտուցիոնալ առումով լինեն լիարժեք ու բացառիկ:

¹⁴ Sté u **Karpa M., Akimov O.**, Competence Approach to the Development of Modern Public Administration: Theory and Practice of Implementation, Advances in Economics, Business and Management Research, Vol. 170, published by Atlantis Press, էջ 40 – 45:

¹⁵ Sté u European Charter of Local Self-Government, Council of Europe, 1985, Printed at the Council of Europe, Reprinted November 2016, Strasbourg, էջ 12-13:

¹⁶ Sté u **Batali M.**, Factors Affecting the Transformation of Public Administration, AUDJ, vol. 12, no. 3/2016, էջ 31-43:

Հանրային կառավարումն արդիականացնելու պայմանների վերջին մակարդակը, որ առանձնացրել ենք, **արժեքանական** է: Այս պայմանի ներքո են մեծ մասամբ ենթադրվում նոր, արդիական գաղափարների տարածումն ու շրջանառության ակտիվությունը: Բազում հեղինակներ հիմնավորել են, որ արդիականացման տեսական ու կիրառական արժեքների տարածման հաջողությունը պայմանավորված է եղել անցումային տնտեսության ու քաղաքական համակարգի գործոններով¹⁷: Այդուհանդերձ, արժեքանական սկզբունքների որդեգրումը դժվարին ճանապարհն անցնելու կարևորագույն պայմաններից է: Հանրային կառավարման արժեքանական արդի սկզբունքները կարելի է վերլուծել Եվրոպայի անվտանգության ու համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) առաջարկած (2023 թ.) հանրային կառավարման համապարփակ, վստահելի և կայուն բարեփոխումների օրակարգում և դրանից բխող համապատասխան փաստաթղթում: Արժեքանական այդ առանցքի մեջ թվարկված են, օրինակ, կառավարության միջոցով հանրային քաղաքականությանը համահունչ կառավարման արդյունավետ համակարգման, քաղաքականության մշակման ընթացքում բոլոր հիմնական արտաքին ու ներքին շահագրգիռ կողմերի և լայն հասարակության ակտիվ խորհրդակցության, պետական բյուրոկրատիայի՝ պետական կառավարման մարմինների գործունեության համար իրենց համապատասխան քաղաքականության ոլորտներում քաղաքականապես պատասխանատվություն կրելու, վարչական ընթացակարգերի իրականացումը օրինականության սկզբունքներին համապատասխան, ներառյալ հայեցողության օրինական կիրառման, իրավական որոշակիության, հավասարության, անաչառության և համաչափության սկզբունքները¹⁸: Ավելին, եթե մի փոքր էլ բացենք փակագծերը, ապա պարզ է դառնում, որ հանրային հատվածի ամբողջական ու համապարփակ համակարգ ձևավորելու դեպքում հնարավոր է նվազագույնի հասցնել կոռուպցիայի մակարդակը երկրում: Արժևորվում են նաև կառավարության կողմից ռազմավարական նպատակները հստակ սահմանելը, վարքագծի կանոններն ու արժեքները համընդհանուր տարածելը, հանրային բողոքի հասանելի ու վստահելի կառուցակարգեր կիրարկելը, հանրային ինստիտուտներում ռիսկերը կառավարելու, վերահսկելու արդյունավետ համակարգ գործարկելը: Բացի այդ, արդի հանրային կառավարումը կոչված է ապահովելու հանրային բազմալիք (առցանց և օֆլայն) ծառայություններ մատուցելու պարզեցված ձևեր՝ հաշվի առնելով ծառայություններից օգտվողների հարմարավետությունը, օգտատերերի

¹⁷ Sté u **Mussari R., Cepiku D.**, Public Administration Reform in Transition: Reflection from the Albanian experience, *Journal of Public Management Review*, Volume 9, by Routledge, 2007, էջ 353-375:

¹⁸ Sté u OECD-2023, *The Principles of Public Administration*, OECD, Paris, 2024, <https://www.sigmaxweb.org/publications/Principles-of-Public-Administration-2023.pdf> - հղումը հասանելի է եղել 22.06.2024:

տարբեր խմբերի բազմազան կարիքները՝ չեզոքացնելով հանրային ծառայության հասանելիության խոչընդոտները:

Այսպիսով, հանրային կառավարման համակարգն արդիականացնելու պայմանների վերլուծությունը ցույց է տալիս, որ ժողովրդավարական կամ առնվազն նման ընթացքով շարժվող ցանկացած պետություն քաղաքակրթական համընթաց զարգացման նպատակով կոչված է ապահովելու բավարար պայմանների հաստատում և կիրարկում: Այդ պայմանների բավարարման միջոցով արդիականացումը ավելի բարդ է, քան «ա»-ից «բ»-ին հասնելը: Հանրային կառավարման արդի համակարգ ունեցող պետություններում արմատավորված է մի արժեհամակարգ, ըստ որի՝ քաղաքական-կառավարչական էլիտան մարմնավորում է պետությունը՝ կրելով պատասխանատվություն արդիականացման արժեքանության ձևավորման և ապագա սերունդների բարեկեցության ապահովման նպատակով տնտեսական խոշոր ծրագրերի, քաղաքականությունների իրականացման համար: Ըստ այդմ՝ բարձրորակ էլիտաները որոշվում են արժեքներ ստեղծելու, դրանք արդյունահանելու և վերաբաշխելու ռեսուրսներով¹⁹: Շատ կարևոր է հասկանալ, թե էլիտան/պետությունը ինչ ներդրում է ունենում արդիականացման պայմանները բավարարելու առումով: Պետության զարգացման հնարավորություններն ընդլայնելու նպատակով ձևավորվող էլիտաները գործում են արժեքներ արարելու մոդելով, ինչը դրանց հաղորդում է ռազմավարական նշանակություն: Քանի որ քաղաքական – կառավարչական էլիտան բացառիկ դեր է խաղում ռազմավարական տեսլականի ձևակերպման ու ինստիտուցիոնալացման գործում, էլիտան ինքը պետք է նախ կրի, ապա արարի հանրային կառավարման համակարգի արդիականացման պայմանները երաշխավորող արժեքներ²⁰:

Հանրային կառավարման արդիականացման պայմանները ՀՀ-ում

ՀՀ-ում հանրային կառավարման թույլ հիմքերն ու արդիական համակարգի ձևավորման սահմանափակ հնարավորությունները քննարկվել ու վերլուծվել են երեք հիմնական պատճառների հիման վրա: **Առաջինը**, ի հակադրություն արևմտյան կողմնորոշում ունեցող կամ արևմտյան երկրների՝ հետկոմունիստական կամ անցումային բազմաթիվ երկրներ չունեն որոշակի քաղաքական ինքնավարությամբ տարածքներ, և ենթազգային շրջանները չեն կարող ինքնուրույն որոշում կայացնել, ուստի դրանք ուղղակիորեն վերահսկվում են ազգային կառավարության կողմից: **Երկրորդ պատճառը** հանրային (պետա-

¹⁹ Sté u **Elite Quality Report**: 2022, Country Scores and Global Rankings: Sustainable Value Creation. Global Matrices for Long-Term economic and Human Development, The Foundation for Value Creation, Switzerland, publ. by Seismo Press AG, Zurich and Geneva, 2022:

²⁰ Sté u **Կ. Ալթունյան**, Պետության զարգացման հնարավորությունների և էլիտայի որակի չափման գլոբալ ցուցիչը, «Գիտական Արցախ», № 3(14), Եր., 2022, էջ 74:

կան) կառավարման և քաղաքականությունը կազմող կազմակերպված ու պատասխանատու ինստիտուտների տարբերությունն է: Հանրային կառավարման զարգացած համակարգում պետական մարմինները, քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, զանգվածային լրատվության միջոցները զգալիորեն տարբերվում են և գործառույթներով առանձնահատուկ են: Անցումային համակարգում դրանցից շատերը դեռ չունեն ուժեղ քաղաքացիական հասարակության, արհեստավարժ քաղաքական և ազատ լրատվամիջոցների միջավայր: Հաստատությունների շարքում պետական մարմինները համեմատաբար ինստիտուցիոնալացված և պատասխանատու են: **Երրորդ**, պետական կառավարման շրջանակներում կառավարության դերի մեկնաբանումը պատճառաբանության ևս մեկ հետաքրքիր կողմ է: Զարգացած աշխարհում կառավարության արդյունավետ դերը վերաբերում է պետական հատվածի կարգավորմանը և օրենքների, ռազմավարությունների ու հանրային քաղաքականության համակարգված կիրառմանը: Համաձայն անցումային երկրներում կառավարության դերի մեկ այլ մոտեցման՝ կառավարությունը գործում է «ուժեղ ձեռքի» սկզբունքով՝ օգտագործելով ուղղակի միջամտությունները հասարակական կյանքի տարբեր հատվածներում և ընդգծելով հանրային պաշտոնյաների ու ծառայողների դերը²¹: Անգամ ոչ խորքային վերլուծության պարագայում տնտեսական բարեփոխումների քաղաքական շարժընթացը ՀՀ-ում ցույց է տալիս, որ պետությունն անցել է համակարգային անկայունության բազմաշերտ փուլերով: Այդուհանդերձ, ՀՀ-ում հանրային կառավարման արդիականացման վերլուծական հիմքերի հարստացման նպատակով իրականացվել են առաջնային տվյալների հավաքագրում և վերլուծություն:

2022 թվականի մայիսից ուժի մեջ է մտել «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը, 2022-2024 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը, ռազմավարության իրականացման հսկողությունն ու համակարգումն ապահովող անձանց ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը (13 մայիսի, 2022 թվականի N 691-Լ), իսկ այդ ուղղությամբ ռազմավարության մշակումը մեկնարկել է 2019 թվականին²²: Փաստաթղթի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բարեփոխումների ռազմավարական առանցքը կառուցվում է «ինտեգրված» կառավարության (Whole-of-the-Government) հարացույցի շուրջը՝ նպատակ ունենալով

²¹ Ավելի մանրամասն տե՛ս **Altunyan K.** Public Administration in the Republic of Armenia: Reassessment After Thirty Years, «Scientific Artsakh», № 4(11), 2021, էջ 126:

²² Տե՛ս ՀՀ կառավարության որոշումը հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը, 2022-2024 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը, ռազմավարության իրականացման հսկողությունն ու համակարգումն ապահովող անձանց ցանկը հաստատելու մասին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=162791> :

ապահովելու համակարգի փոխներդաշնակեցված, սիներգիկ, արհեստավարժ, տեխնոլոգիահենք, պատասխանատու գործունեությունը: Ռազմավարական տեսլականով սահմանվում են **ապագայի պետության յոթ բնութագրիչներ**՝ մարդակենտրոն, արդար, կայուն, պատասխանատու, դինամիկ, նորարար, օպտիմալ: Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարական նպատակն է գերազանց ծառայություն մատուցող, ժողովրդավարական գործելակերպով, տեխնոլոգիահենք և արժանիքահենք պետական կառավարման համակարգի կայացումը: Ռազմավարության նպատակներին հասնելու համար գործողությունների շրջանակ է ուրվագծվել: Այսպես օրինակ՝ ռազմավարական պլանավորման ոլորտում գործողություններն ու միջամտությունները ներառում են. ա) ռազմավարական պլանավորման ինտեգրված համակարգի գործարկումը, բ) քաղաքականության արդյունքների համար ինստիտուցիոնալ և անհատական պատասխանատվության ինստիտուտի ներդրումը, կարգավորման ազդեցության գնահատման համակարգի լիարժեք գործարկումը՝ լավագույն միջազգային փորձին համահունչ, գ) զարգացման արդյունավետ գործընկերությունը երաշխավորող ինստիտուցիոնալ համակարգի կայացումը՝ թափանցիկ, կանխատեսելի և ազգային համակարգերի լայն կիրառությամբ, դ) տվյալների քաղաքականության ամբողջական օրենսդրական հիմքերի ապահովումը և կառավարման ինստիտուցիոնալ համակարգի կայացումը, ե) զարգացած պետական վարչական տվյալների համակարգի ձևավորումը, զ) տեղեկատվության ազատության իրավունքի լիարժեք իրացմանը նպաստող ինստիտուցիոնալ ու իրավական հիմքերի ապահովումը, է) կարողությունների հզորացումն արդյունավետ քաղաքականության մշակման և համակարգման համար, ը) թվային/էլեկտրոնային լուծումների ներդրումը՝ ապահովելով քաղաքականության համակարգման օպտիմալ և արդյունավետ գործընթացներ:

Հանրային ծառայությունների արդիականացման նպատակով գործողությունները ներառել են օրակարգի ձևավորման համար անհրաժեշտ վերլուծական հիմքերի ձևավորումը, պետության կողմից մատուցվող ծառայությունների քաղաքականության ամբողջական իրավական շրջանակի ապահովումը, պետական և համայնքային ծառայությունների մատուցման գործընթացների արդիականացումը՝ դրանք դարձնելով քաղաքացիակենտրոն և օպտիմալ, իրավակիրառ գործիքների ու հիմնարար ենթակառուցվածքի ներդրումը՝ ապահովելով լավագույն հասանելի տեխնոլոգիական լուծումներով արդիական ծառայությունների, ծառայությունների հանրային իրազեկման ու քաղաքացու հետ հետադարձ կապի մեխանիզմների ապահովումը:

Եվ վերջապես, կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման, ինստիտուցիոնալ արդիականացման նպատակով գործողությունները ներառել են հետևյալը. ա) պետության ինստիտուցիոնալ արդիականաց-

ման մեթոդական գործիքակազմի ու իրավական կարգավորումների ապահովումը, բ) կառավարության գործունեության ընթացակարգերի վերանայումը՝ ապահովելով ռեսուրսների և ժամանակի օպտիմալ բաշխում դրված նպատակներին հասնելու համար, գ) պետական համակարգի մարմինների գործառույթային և ինստիտուցիոնալ վերանայումը և վերակազմակերպումը, դ) պետական համակարգի աջակցող գործառույթների օպտիմալացումը, ե) պետական վերահսկողական համակարգի բարեփոխումների մեկնարկը, զ) մասնակցային կառավարման կառուցակարգերի ու գործիքակազմի վերանայումը՝ ապահովելով բաց ու ներառական որոշումների կայացման գործընթաց, է) պետական համակարգի իմիջի կառուցման պորտֆելի ձևավորումը՝ ապահովելով միասնական կերպարով պետության ներկայացումը, ը) ռեսուրսարդյունավետ ու կայուն կառավարման քաղաքականության հիմքերի ու գործիքների ապահովումը:

Ռազմավարության 2022-2024 թվականների ճանապարհային քարտեզն արտացոլում է ռազմավարական բոլոր հենասյունների, ինչպես նաև՝ բարեփոխումների կառավարման գծով նպատակներին հասնելու գործողությունների ու ծրագրերի ամբողջությունը: Բարեփոխումների արդյունավետության գնահատումը փաստաթղթով նախատեսված է իրականացնելու երեք՝ ռազմավարական, վերջնարդյունքի, միջանկյալ ցուցիչներով, որոնք ռազմավարական նպատակների գծով իրականացված գործողությունների որակական չափումն են: Ի հավելումն, վերլուծելով ռազմավարության իրականացման ռիսկերի աղյուսակը, որը ներակայացված է նույն փաստաթղթում, տեսնում ենք, որ ռիսկերի պունակներում բարձր են գնահատվել, օրինակ, բարձր մակարդակում բարեփոխումների իրականացման համար ոչ բավարար հանձնառությունը, պատասխանատու պետական կառավարման մարմիններում անբավարար կարողությունները, երկրում սոցիալ-տնտեսական, աշխարհաքաղաքական և այլ մարտահրավերների առաջացման դեպքում առաջնահերթությունների էական փոփոխությունը:

Եզրակացություններ

Հանրային կառավարման համակարգն արդիականացնելու ամենաբնիմարար պայմաններն են, այսպիսով, պետականաշինությունը կամ պետականության ամրապնդումը, ինստիտուցիոնալիզմը, արժեքների շրջանառությունն ու տարածումը: Գերակա ճանաչելով այդ պայմանները՝ պետությունը որդեգրում է հանրային կառավարման արդիականացումը սիներգիայի սկզբունքով կյանքի կոչելու գործընթացի հաջողությունը: Վերլուծությունները այդ հարցի շուրջ հանգեցրին այն մտքին, որ ներկայիս արագ փոփոխվող ժամանակաշրջանում արդիականացումն անհրաժեշտ է պայմանավորել այդ պայմանների բավարարման աստիճանով: Փորձելով տեղայնացնել հանրային

կառավարման արդիականացման այդ պայմանների մասին պատկերացումները ՀՀ-ում՝ պարզ է դառնում, որ հայեցակարգային առումով դրանք ընկալելի են: Տվյալները փաստում են, որ ՀՀ-ում հանրային կառավարման համակարգի արդիականացման նպատակով սահմանվել են թիրախներ, մշակվել են ինստիտուցիոնալ բարեփոխումներ և այլն: Այդուհանդերձ, անհրաժեշտ պայմանների, առկա իրողությունների ու գնահատված ռիսկերի համադրումից պարզվում է, որ սիներգիայի սկզբունքով հանրային կառավարման համակարգի արդիականացման համար ռեսուրսները բավարար չեն: Առանձին-առանձին ինստիտուտները բարեփոխելու մոտեցումը, որը, ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, գերակայում է ՀՀ հանրային կառավարման համակարգի արդիականացման օրակարգում, կարող է միայն կարճաժամկետ ազդեցություններ ապահովել համակարգի համար: Մինչդեռ սույն ուսումնասիրության արդյունքում ձևակերպված պայմանների գերակայությունն ապահովելը ՀՀ-ի համար, կարծում ենք, կարող է հանրային կառավարման արդի համակարգի երաշխիք լինել:

КАТЕРИНА АЛТУНЯН – *Необходимые условия формирования современной системы государственного управления.* – Статья посвящена анализу необходимых условий модернизации системы государственного управления. В статье, в частности, показано, что колебания модернизации современной системы государственного управления исходят из понимания концепций государственного управления и их четкой реализации. Вибрации активизируют жизнеспособность системы, необходимыми условиями которой являются государственное строительство, бюрократическая организованность и стабильность в условиях непрерывных демократических реформ. Исследование темы показало, что без создания этих условий невозможно добиться создания современной системы государственного управления. В статье использованы результаты теоретических и эмпирических исследований по проблеме, а также приведены оценки условий, подрывающих жизнеспособность современной системы государственного управления. В качестве системного условия современного государственного управления управленческая культура была представлена, как институциональное состояние - институциональное становление органов государственного управления и местного самоуправления, а как ценностное условие - деятельность по распространению и распространению новых идей. В результате сбора и анализа данных был сделан вывод, что системные, институциональные и ценностные условия, обеспечивающие становление современного государственного управления, обладают синергией, то есть их совокупный результат превышает сумму отдельных результатов. Синергия обеспечивает долгосрочный эффект, а обеспечение индивидуальных условий – краткосрочный эффект. Результаты статьи могут быть применены в гуманитарных и социальных исследованиях, государственном управлении и разработке государственной политики.


Ключевые слова: *государственное управление, концепция государственного управления, обеспечение бюрократической стабильности, административная (управленческая) организация, государственное строительство, административные реформы, местное самоуправление, показатель эффективного управления, демократическое управление*

KATERINA ALTUNYAN – *The Necessary Conditions for the Formation of a Modern System of Public Administration.* – The article is devoted to the analysis of the necessary conditions for modernizing the public administration system. The article, in particular, showed that the vibrations

of modernizing the modern public administration system come from the understanding of public administration concepts and their precise implementation. Vibrations activate the vitality of the system, the necessary conditions of which are state building, bureaucratic organization and stability in the context of continuous democratic reforms. The study of the subject has highlighted that without creating these conditions, it is not possible to achieve the establishment of a modern system of public administration. The article used the results of theoretical and empirical studies on the problem, and also referred to the assessments of the conditions undermining the viability of the modern public administration system. As a systemic condition of modern public administration, managerial culture was presented, as an institutional condition, the institutional establishment of state administration and local self-government bodies, and as a value condition, the activity of spreading and circulating new ideas. As a result of data collection and analysis, it was concluded that the systemic, institutional and value-based conditions ensuring the establishment of modern public administration have synergy, that is, their total result exceeds the sum of individual results. Synergy provides long-term effects, and the provision of individual conditions provides short-term effects. The results of the article can be applied in humanitarian and social science research, public administration and public policy development.

Key words: *public administration, concept of public administration, ensuring bureaucratic stability, administrative organization, state building, administrative reforms, local self-government, indicator of effective administration, democratic governance*

ԷԹՆԻԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԷԹՆԻԿ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

ՎԱՀԵ ԶԱՐԳԱՐՅԱՆ *
Երևանի պետական համալսարան

Ներկայիս գլոբալացվող աշխարհում, որը բնութագրվում է մշակութային բազմազանության և միջմշակութային մշտական փոխգործակցության մեծացող աճով, էթնիկ պատկանելության և դրա ընկալման գիտական ուսումնասիրությունը դառնում է ժամանակի հրամայական: Սույն հոդվածի շրջանակներում քննության առարկա են դառնում «էթնիկություն», «էթնիկ պատկանելություն», «էթնիկ ինքնություն» հասկացությունները ակադեմիական տարբեր համատեքստերում: Մասնավորապես դիտարկվում են ոչ միայն արևմտյան տեսական հայեցակարգերը, այլ նաև լոկալ, մեթոդաբանական եզակի մոտեցումների վրա ձևավորված «արևելյան», հատկապես ռուսական քաղաքագիտական մտքի, ինչպես նաև Հնդկաստանի, Ճապոնիայի, Չինաստանի և Հայաստանի ակադեմիական շրջանակներում ձևավորված տեսահայեցակարգային մոտեցումները: Եզրութաբանական վերոնշյալ կառուցվածքների սահմանների քննական վերլուծությունն ու լուսաբանումը թույլ են տալիս ավելի համապարփակ պատկերացում կազմել անհատական և կոլեկտիվ ինքնության հիմք հանդիսացող «էթնիկություն» ֆենոմենի մասին:

Բանալի բառեր - էթնիկություն, էթնիկ պատկանելություն, էթնիկական ինքնություն, էթնիկ խմբեր, էթնոքաղաքականություն, նացիոնալիզմ, մուլտիկուլտուրալիզմ, սոցիալական կառուցվածքներ

«Էթնիկությունը» բարդ և բազմանիստ հասկացություն է, որը կարևոր դեր է խաղում մարդկային ինքնության և սոցիալական հարաբերությունների ձևավորման գործում՝ դառնալով ինտելեկտուալ որոնումների հիմնական ուղղություններից մեկը: Դեպի համաշխարհայնացում շարժվող ժամանակակից աշխարհը, անընդհատ աշխուժացող միգրացիոն գործընթացները, գլոբալ

* Վահե Զարգարյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի հայցորդ

Vahe Zargaryan - Соискатель кафедры международных отношений и дипломатии ЕГУ

Vahe Zargaryan - PhD Student at YSU Chair of International Relations and Diplomacy

Էլ. փոստ՝ vahe.zargaryan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0002-7518-6295>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 16.03.2024

Գրախոսվել է՝ 26.06.2024

Հաստատվել է՝ 10.09.2024

© The Author(s) 2024

բարձրացող էթնոֆոբիան, ինչպես նաև էթնոմշակութային լարվածություններն ու ազգային ծայրահեղական շարժումները նոր թափ են հաղորդում այս թեմայի ուսումնասիրություններին:

Էթնիկությունը նեղ իմաստով վերաբերում է մարդկանց որևէ խմբի մշակութային, լեզվական և պատմական ժառանգության ընդհանուր զգացողությանը, ինչպես նաև այն ձևերին, որոնցով այս ժառանգությունը ձևավորում է նրանց փոխհարաբերություններն ու փոխազդեցությունը ուրիշների հետ: Այն կարող է լինել հստակ տարբերակիչ կամ էլ յուրահասակության դրսևորման աղբյուր, բայց միևնույն ժամանակ կարող է նաև հանգեցնել կոնֆլիկտի և խտրակալության, հատկապես երբ տարբեր էթնիկ խմբեր մրցակցում են ռեսուրսների և իշխանության համար: Հետևաբար, կարևոր է բազմազանության, սոցիալական արդարության և խաղաղ համակեցության խթանման տեսանկյունից սահմանել էթնիկ պատկանելության առանձնահատկությունները, ինչպես նաև հասկանալ վերջինիս ունեցած հնարավոր ազդեցությունը մարդկային հասարակության վրա:

Ինչպես արդեն նշվել է, «էթնիկությունը», լինելով բարդ և բազմաբովանդակ հասկացություն, ուսումնասիրությունների առարկա է դարձել շատ գիտնականների կողմից: Թեև «էթնիկություն» եզրույթը օգտագործվել է դարեր շարունակ՝ նկարագրելու մշակութային և ազգային ինքնությունները, այնուամենայնիվ այդ հասկացությունը արդի իմաստով առաջին անգամ կիրառել է գերմանացի սոցիոլոգ, քաղաքագետ Մ. Վեբերը: Հենց նրան է վերագրվում էթնիկության հայեցակարգը ժամանակակից իմաստով: Նա պնդում է, որ էթնիկությունը սոցիալական կառուցվածք է և հիմնված է մշակութային ընդհանուր հատկանիշների և համոզմունքների վրա, բխում է որոշակի տեսակի գիտակցությունից՝ ընդհանուր սովորությունների, ընդհանուր լեզվի և ընդհանուր փորձառության հենքի վրա: Էթնիկության մշակութային և քաղաքական նշանակությունը նա կապում է էթնիկ պատվի զգացման հետ՝ այն համարելով զանգվածներին հատուկ երևույթ, որը երբեմն որոշ ժողովուրդների մեջ կարող է հանգեցնել այնպիսի ծայրահեղ մտայնության, որ իրենք ընտրյալ են որպես այդպիսին¹:

Ֆրեդրիկ Բարթը, իր աշխատության մեջ անդրադառնալով «էթնիկություն» եզրին, նշում է, որ էթնիկ խմբերը բնական կամ ֆիքսված կատեգորիաներ չեն, այլ ավելի շուտ սոցիալական կառուցվածքներ են, որոնք ստեղծվում և պահպանվում են սոցիալական փոխազդեցությունների ու խորհրդանշական սահմանների միջոցով: Ըստ Բարթի՝ էթնիկական սահմանները պարտադիր չէ, որ ֆիքսված կամ կայուն լինեն: Նա պնդում է, որ էթնիկ խմբերը սահմանվում են

¹ Տե՛ս **Weber, M.**, *Economy and Society*. Volume 2: *Economy and Society: An Outline of Interpretive Sociology* / Max Weber; Edited by Guenther Roth and Claus Wittich; with a New Foreword by Guenther Roth, Guenther Roth и Claus Wittich (Berkeley Los Angeles London: University of California Press, 2013), էջ 75:

մշակութային տարբերություններով, որոնք, սակայն, չեն տեղավորվում օբյեկտիվության տրամաբանության մեջ և ավելի շուտ իրացվում են սոցիալական փոխազդեցությամբ²:

Այս ուղղության տրամաբանական շարունակությանը կարելի է հանդիպել Է. Սմիթի աշխատություններում: Համաձայն նրա՝ ազգերը պարզապես քաղաքական միավորներ չեն, այլ արմատավորված են որոշակի էթնիկական ինքնության վրա: Նրա կարծիքով՝ էթնիկ պատկանելությունը հավաքական ինքնագիտակցության ձև է, որը հիմնված է երեք հիմնական տարրերի վրա.

1. **Ընդհանուր ծագում.** էթնիկ խմբերը հավատ ունեն ընդհանուր ծագման նկատմամբ, որը կարող է լինել կա՛մ իրական, կա՛մ երևակայական: Այս ընդհանուր ծագումը ընդհանուր ինքնության և պատկանելության զգացողության համար հիմք է ծառայում:

2. **Համատեղ պատմական հիշողություններ.** էթնիկ խմբերը նաև կիսում են ընդհանուր պատմության զգացումը, որը կարող է ներառել անցյալի մարտերի, հաղթանակների կամ ողբերգությունների պատմությունը: Այս ընդհանուր հիշողությունները ծառայում են ընդհանուր ինքնության և պատկանելության զգացումը ամրապնդելու միջոց:

3. **Մշակութային ավանդույթներ.** էթնիկ խմբերը կիսում են մշակութային պրակտիկաների և ավանդույթների մի շարք, ինչպիսիք են լեզուն, կրոնը կամ ազգային բանահյուսությունը: Այս մշակութային պրակտիկաներն օգնում են խմբին տարբերվելու մյուսներից և նպաստում են ընդհանուր ինքնության զգացմանը³:

Ջ. Քլիֆորդն ու Ջ. Մարկուսը կարծում են, որ էթնիկ պատկանելությունը պարզապես սերնդեսերունդ փոխանցվող մի բան չէ, որը կարելի է ուղղակի ուսուցանել: Այն նույնականացման դինամիկ գործընթաց է, որն առաջանում է սոցիալական շարունակական փոխգործակցության միջոցով: Բնական երևույթ, ինքնության խորը հուզական բաղադրիչ, որը փոխանցվում է բնական, շատ ժամանակ գենետիկ հիշողությամբ, և վերջինիս ինստիտուցիոնալացված ուսուցումը այն հեշտությամբ դարձնում է ազգայնամոլ և մակերեսային: Դա անհատների կամ խմբերի ֆիքսված կամ ստատիկ հատկանիշ չէ⁴:

Էթնիկ պատկանելությունը պարզապես կենսաբանական կամ մշակութային հատկանիշների խնդիր չէ, այլ ավելի շուտ ընդհանուր հավատք է ընդհա-

² Տե՛ս **Barth, F.**, Ethnic Groups and Boundaries: The Social Organization of Culture Difference (Prospect Heights, Ill: Waveland, 1998), էջ 13-15:

³ Տե՛ս **Smith, A.**, The ethnic origins of nations (Oxford, UK: New York, NY, USA: B. Blackwell, 1987), էջ 25-31:

⁴ Տե՛ս **Clifford, J., Marcus G.**, Writing Culture: The Poetics and Politics of Ethnography a School of American Research Advanced Seminar (Berkeley: University of California press, 1986), էջ 195-196:

նուր ծագման, պատմական հիշողությունների և մշակութային ավանդույթների նկատմամբ: Այս տեսակետն ընդգծում է սուբյեկտիվ փորձի կարևորությունը և այն ուղիները, որոնցով անհատները սկսում են նույնականանալ որոշակի էթնիկ խմբի հետ: Ըստ հեղինակների՝ այն պարտադիր չէ, որ կապված լինի որոշակի տարածքի կամ քաղաքական միավորի հետ: Թեև էթնիկ խմբերը կարող են կապված լինել որոշակի աշխարհագրական տարածքի հետ, նրանց ինքնությունը պարտադիր չէ, որ դրանով որոշվի: Ավելի շուտ դա ընդհանուր մշակութային պրակտիկաներն են, պատմական հիշողությունները և համոզմունքները, որոնք սահմանում են նրանց էթնիկ ինքնությունը⁵:

Քեթլին Ջ. Ֆիցջերալդի մոտեցումը փոքր-ինչ այլ է⁶. նա հիմնականում էթնիկության հարցին մոտենում է ռասայի հետ հակադրամիասնության տեսանկյունից՝ ցույց տալով այս երկու հասկացությունների միմյանց հանդեպ նմանություններն ու տարբերությունները: Ըստ նրա՝ էթնիկ ինքնությունը վերաբերում է մի խումբ մարդկանց, ովքեր կիսում են նույն կամ միանման մշակույթ, ազգությունը, ծագումը և/կամ լեզուն: Ֆիզիկական տեսքը ոչ մի աղերս չունի էթնիկ պատկանելության հետ: Ռասան վերաբերում է ֆիզիկական հատկանիշներին, ինչպիսիք են մաշկի գույնը և դիմագծերը, մինչդեռ էթնիկ ինքնությունը ավելի շատ կենտրոնացած է մշակութային և սոցիալական պրակտիկաների վրա: Այսպիսով, էթնիկությունը ֆիքսված կամ անփոփոխ չէ. այն կարող է փոխվել ժամանակի ընթացքում, երբ մարդիկ տեղափոխվում են, ամուսնանում կամ ընդունում են մշակութային նոր պրակտիկա:

Ռիչարդ Թ. Շեֆերը, ընդհանրացնելով իր մոտեցումները էթնիկության հասկացությանը՝ կիսում է այս տեսակետը. էթնիկությունը ստատիկ հասկացություն չէ, այն ավելի շուտ դինամիկ և անընդհատ զարգացող սոցիալական կառուցվածք է: Այն սոցիալական փոխազդեցության, մշակույթի և սահմանների պահպանման արդյունք է և պահպանվելու, վերստեղծվելու է այնքան ժամանակ, քանի դեռ կան սոցիալական ակտիվ փոխազդեցություններ: Էթնիկ պատկանելությունը քաղաքականացված մշակույթ է և հաճախ ձևավորվում է քաղաքական խմբերի միջոցով, որոնք իրենց էթնիկ բնույթ են վերագրում, և կշարունակի կարևոր մնալ քաղաքական հակամարտությունների և տարածքային նվաճումների ձևավորման գործում՝ ստեղծելով նոր խմբեր և ազգեր⁷:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ արևմտյան քաղաքագիտական մտքի համատեքստում էթնիկության, էթնիկ պատկանելության և էթնիկ ինքնության հիմնահարցերն ավելի հաճախ դիտարկվում են որպես սոցիալական առանձնահատուկ կառուցվածքի կատեգորիաներ, որոնք

⁵ Տե՛ս նույն տեղը:

⁶ Տե՛ս **Kathleen J.**, *Recognizing Race and Ethnicity: Power, Privilege, and Inequality*, Second edition (Boulder, CO: Westview Press, 2017), էջ 20-23:

⁷ Տե՛ս **Schaefer, R.**, *Encyclopedia of race, ethnicity, and society* (Los Angeles: SAGE Publications, 2008), էջ 458:

հիմնված են մշակութային և պատմական գործոնների վրա: Նրանք ընդգծում են սոցիալական փոխազդեցության, մշակույթի և սահմանների պահպանման դերը էթնիկ խմբերի ձևավորման գործում, այլ ոչ թե կենսաբանական կամ գենետիկ բնածին տարբերությունները: Այս մոտեցումը ընդգծում է պատմական և քաղաքական համատեքստի ըմբռնման կարևորությունը, որում ձևավորվում և պահպանվում են էթնիկական ինքնությունները:

Ռուսական ակադեմիական միջավայրում «էթնոս» տերմինն առաջին անգամ օգտագործել է Մ. Շիրոկոգորովը: Ռուսական գիտության ու հետազոտական միջավայրում նրան է պատկանում այս տերմինի դասական հայեցակարգը: Ըստ գիտնականի՝ «էթնոսը» մարդկանց խումբ է, ովքեր հաղորդակցման համար օգտագործում են մեկ լեզու, ճանաչում են իրենց ընդհանուր ծագումը, ունեն սովորույթների համակարգ և ապրելակերպի հատուկ ավանդույթներ, որոնք իրենց հերթին տարբերվում են մնացյալ այլ խմբերի լեզվից, ծագումից և ավանդույթներից⁸: Համաձայն հեղինակի՝ բոլոր տարբերակիչ գործոնների շարքում առաջնայինը լեզվի գործոնն է, այնուհետև գալիս է ընդհանուր ծագման փաստը, ինչպես նաև ավանդույթների ու սովորությունների կարևորությունը (հիմնականում ուշադրությունը կենտրոնացնելով մշակութային ընդհանրությունների վրա)⁹: Սահմանումն ինքնին բավականին ընդհանրական է: Հարցին այս տեսանկյունից մոտենալու պարագայում նման լայն սահմանման տակ կարելի է հասկանալ նաև առհասարակ «մարդկանց խումբ», «էթնիկ խումբ», «հասարակություն», «ազգ», «ցեղ», «ժողովուրդ», որոնք առանց որոշակի իմաստաբանական նեղ ըմբռնման կարող են դիտվել նաև որպես հումանիշներ:

Ռուս էթնոլոգ Է. Կուլպակովը առաջ է քաշում հետևյալ բնութագրականը. «էթնիկ խումբը որոշակի տարածքում պատմականորեն հաստատված մարդկանց կայուն բնակչության որոշակի զանգված է, որն առաջին հերթին առանձնում է իր լեզվական առանձնահատկություններով»¹⁰: Այնուհետև ավելի է ընդարձակում վերջինիս բնութագրականները՝ սահմանումը տարածելով նաև սեփական համայնքի զգացման, ինքնագիտակցության և շահերի համընկման տրամաբանության վրա: Եթե ընդհանրացնելու լինենք այս երկու գիտնականների մոտեցումները էթնիկության հասկացության վերաբերյալ, ապա երկուսի սահմանումներն էլ խիստ ընդհանրական են, երկիմաստ և տարընթերցումների տեղիք սովոր: Մ. Շիրոկոգորովը առաջինն էր, ով փորձեց ավելի մասնավորեցնել էթնիկության բնութագրականները՝ տալով վերջինիս սահմանումը՝ առանց սոցիալական, դասակարգային տարբերակիչների և երկիմաս-

⁸ Տե՛ս **Широкогоров С.** Этнос: исследование основных принципов изменения этнических и этнографических явлений. Шанхай, 1923, էջ 54:

⁹ Տե՛ս նույն տեղը:

¹⁰ **Колпаков Е.** Этнос и этничность. // Этнографическое обозрение №5, 1995, с. 13–23

տությունների. «Էթնոսը մարդկանց խումբ է, ովքեր խոսում են մեկ լեզվով, գիտակցում են իրենց ընդհանուր ծագման փաստը, ունեն ընդհանրություններ սովորությունների, կենցաղավարության մեջ, ունեն պահպանված ավանդույթներ, որոնք տարբերվում են մնացյալ խմբի կամ խմբերի ավանդույթներից»¹¹:

Վերոգրյալը տրամաբանորեն շարունակել ու միտքը հետագայում ընդլայնել է Ս. Լուրին՝ առաջարկելով էթնոսը սահմանել որպես «սոցիալական համայնք, որը բնութագրվում է մշակութային հատուկ մոդելներով: Վերջիններս որոշում են աշխարհում մարդու գործունեության բնույթը և գործում հատուկ օրենքների համաձայն, որոնք ուղղված են յուրաքանչյուր հասարակության համար որոշակի, եզակի հարաբերակցության պահպանմանը...»¹²:

Յու. Վ. Բրոմլեյը, առաջ քաշելով սեփական հայեցակարգը, հարցին նայում է հետևյալ դիտանկյունից. «...բավականին բարդ է որոշել էթնիկ համայնքների տեղը մարդկային տարբեր միավորումների մեջ: Սրա խոսումն վկան են էթնիկ պատկանելության վերաբերյալ առկա սահմանումների զգալի անհամապատասխանությունները: Որոշ հեղինակներ, օրինակ, անվանում են լեզուն և մշակույթը էթնոսի հիմնական բնութագրական ու բաղադրիչ, մյուսները դրանց ավելացնում են տարածքը և էթնիկ ինքնությունը, ոմանք նշում են նաև մտավոր կառուցվածքի առանձնահատկությունների դերը, մյուսները ներառում են նաև ծագման համայնքը և պետական պատկանելությունը էթնիկական հատկանիշների մեջ...»¹³: Բրոմլեյն էթնոսը սահմանում է որպես «պատմականորեն հաստատված մարդկանց մի խումբ, որոնք ունեն մշակույթի (ներառյալ լեզվի) և հոգեկանի համեմատաբար ընդհանուր կայուն բնութագրեր, ինչպես նաև գիտակցում են իրենց միասնությունն ու տարբերությունը այլ նմանատիպ սուբյեկտներից... էթնոսն ապահովվում է երկու տեսակի տեղեկատվական կապերով՝ սինխրոն (տարածության մեջ) և դիսխրոնիկ (ժամանակի մեջ): Առաջին տեսակն ապահովում է տարածքային սահմաններ, իսկ երկրորդը՝ էթնիկ շարունակականություն...»¹⁴:

Հեղինակը զարգացնում է այն տեսակետը, որ էթնիկ սահմանագատման համար էթնիկ խմբի անդամների խմբային հատկանիշները, մշակույթը և ընդհանուր հոգեկանը անհամեմատ ավելի կարևոր են, քան ֆիզիկական տեսքը. էթնիկ խումբն ինքնին դինամիկ, պատմականորեն կայացած համակարգ է¹⁵:

Հնդիկ սոցիոլոգ Դ. Գուպտան, որը հայտնի է հնդկական հասարակության տարբեր ասպեկտների, ներառյալ էթնիկ պատկանելության հետ կապված հարցերի վերաբերյալ իր աշխատանքով, «Էթնիկության համատեքստը. սիկհի

¹¹ Широкогоров С. Этнографическое исследование. Владивосток: издательство Дальневосточного федерального университета; 2001, сП 42П

¹² Лурье С. Историческая этнология. М.: Акад. проект, 2004, сП 68П

¹³ Бромлей Ю. Этнос и этнография. М.: Наука, 1965, сП 15: Տե՛ս նույնի՝ К вопросу о сущности этноса // Природа. 1970. № 2, էջ 51-55:

¹⁴ Бромлей Ю. Очерки теории этноса. М.: Наука, 1983, էջ 58:

¹⁵ Տե՛ս և Бромлей ЮП Этнос и этнография. М.: Наука; 1973, сП 30П

ինքնությունը համեմատական տեսանկյունից» աշխատության մեջ Փենջարում սիկհական ծայրահեղականության ուսումնասիրության միջոցով պնդում է, որ էթնիկական ինքնությունները ֆիքսված և մշտական չեն, այլ դինամիկ են և ճիշտ հասկանալու համար պետք է լինեն սոցիոլոգիապես համատեքստային՝ պատշաճ կերպով տեղակայվելով կոնկրետ սոցիոլոգիական կոորդինատներում¹⁶:

Հեղինակն էթնիկության համատեքստը հարցականի տակ է դնում ազգային պետությունների և վերագրվող ինքնությունների լայնորեն տարածված հայեցակարգը Փենջարում սիկհական ծայրահեղականության ուսումնասիրության միջոցով՝ պնդելով, որ էթնիկ հակամարտությունը մշակութային բացառիկության և անհանդուրժողականության տեսանկյունից դիտարկելը թույլ չի տալիս մեզ հասկանալ, թե ինչպես են ընկերներն ու թշնամիները արմատապես փոխում իրենց վերաբերմունքը միմյանց նկատմամբ նույնիսկ համեմատաբար կարճ ժամանակահատվածում:

Դ. Գուպտայի մոտեցումը էթնիկության հարցի վերաբերյալ բխում է Հնդկաստանում տիրող սոցիալական դինամիկայի և ինքնության քաղաքականության վերաբերյալ դրա ավելի լայն ու համապարփակ ըմբռնումից: Այստեղ առաջնային է Հնդկաստանի առանձնահատկությունը, մի երկրի, որն աչքի է ընկնում բազմազան և բազմակարծական հասարակությամբ՝ իրեն հատուկ պատմական, սոցիալական և մշակութային առանձնահատկություններով: Առաջին պլան է գալիս կաստայի և էթնիկ պատկանելության միջև եղած ուղիղ և անմիջական կապը. կաստան շարունակում է էական դեր խաղալ էթնիկական ինքնությունների և հարաբերությունների ձևավորման գործում, և որ այդ ինքնությունները խորապես արմատավորված են Հնդկաստանի պատմական և սոցիալական կառույցներում: Այս ամենով հանդերձ՝ հեղինակն ընդգծում է նաև էթնիկ ինքնությունների ունեցած հեղեղուկ վարքագիծը՝ շեշտը դնելով Հնդկաստանում էթնիկ ինքնությունների բնույթի վրա: Էթնիկական պատկանելությունները կարող են փոխվել և հարմարվել ժամանակի ընթացքում՝ ազդելով տարբեր գործոնների, այդ թվում՝ քաղաքական մոբիլիզացիայի, տնտեսական հնարավորությունների և մշակութային տեղաշարժերի վրա: Ազգային պատկանելությունը միաժամանակ նաև քաղաքականացվում է Հնդկաստանում, որի արդյունքում էթնիկ խմբերը հաճախ մոբիլիզացվում են քաղաքական նպատակներով ինչպես տարածաշրջանային, այնպես էլ ազգային մակարդակներում, որոնք շատ հաճախ հանգեցնում են անգամ լայնածավալ բախումների:

Ճապոնական ակադեմիական միջավայրում էթնիկության հարցի առնչությամբ հետաքրքիր է Տ. Յուդայի «Օտարները էթնիկ հայրենիքում» աշխատանքը:

¹⁶ See **Gupta D., Clifford J. and Marcus E. G.**, *The Context of Ethnicity: Sikh Identity in a Comparative Perspective* Oxford University Press (May 23, 1996), էջ 1-19:

քը, որտեղ հեղինակը կենտրոնանում է էթնիկ պատկանելության բարդ և դինամիկ բնույթի վրա՝ ճապոնացի բրազիլացիների վերադարձի միգրացիայի համատեքստում¹⁷: Ցուդայի աշխատանքում համակողմանիորեն վերլուծվում է, թե ինչպես են էթնիկ ինքնությունը և անդրազգայնականությունը հասվում ճապոնիա վերադարձող ճապոնացի բրազիլացիների փորձառությունների մեջ:

Էթնիկ պատկանելությանը ցուցաբերվում է անդրազգային մոտեցում՝ ցույց տալով ինչպես է անդրազգային կյանքն ազդում մարդկային խմբերի ինքնության և ազգային պատկանելության զգացողության վրա: Այս համատեքստում երևան են գալիս խնդիրներ ձուլման տեսանկյունից, երբ առավել ակնառու են այն մարտահրավերները, որոնք առավելապես արտահայտվում են մշակութային ինքնության ու էթնիկ ծագման փոխհարաբերությունների շրջանակներում: Ցուդան նույնպես էթնիկության սահմանները կանխորոշելիս գրեթե բոլոր սլաքները ուղղում է դեպի մշակույթ, որը, ըստ նրա, ընկած է տարբեր ինքնությունների փոխազդեցության հիմքում, ներառյալ էթնիկ, ազգային և անդրազգային ինքնությունները: Միաժամանակ, միշտ ու պարտադիր չէ, որ այս փոխազդեցությունները լինեն հրահրման կամ ստիպողական տրամաբանության մեջ: Ունենալով մասնավոր օրինակ ճապոնիա վերադարձող արդեն իսկ բրազիլական ինքնության, մշակույթի կրողների պարագան՝ առաջ է քաշվում «էթնիկ հայրենիք» հասկացությունը, երբ մարդկանց որոշակի խումբ, հաշվի առնելով իր ծագումը, լեզուն, մշակութային ընդհանրություններն ու գենետիկ հիշողությունը, իրեն նույնացնում է որոշակի էթնիկ խմբի հետ՝ միաժամանակ կապված մնալով արդեն իսկ ձևավորված էթնիկ արմատներին և փորձելով պահել այդ կապը ծննդավայրից հեռու:

Չինական ակադեմիական միտքը փորձում է միավորել դասական և նոր ըմբռնումները էթնիկության հարցի վերաբերյալ՝ այն դիտելով և՛ արյունակցական, և՛ մշակութային, և՛ նույնիսկ տնտեսական ասպեկտների տեսանկյունից: Չի-յու Շիհը (Chih-yu Shih) իր «Ինքնավարություն, էթնիկ պատկանելություն և աղքատություն Հարավարևմտյան Չինաստանում: Պետությունը շրջվում է գլխիվայր»¹⁸ աշխատության մեջ չինական իրականության մեջ էթնիկությունը մեկնաբանում է որպես «գենետիկ» հասկացություն և էթնիկ պատկանելությունը դասակարգում ըստ այնպիսի գործոնների, ինչպիսիք են լեզուն, սովորույթները, կրոնը և նույնիսկ նույն խմբի տարբեր անդամների զարգացման մակարդակը: Խոսելով չինական իրականության մեջ էթնիկության հասկացության մասին՝ հեղինակը տարբերակում է երկու իրողություն. երբ երեխաները ծնվում են նույն էթնիկական ինքնությունն ունեցող ծնողներից, և երբ ծնվում

¹⁷ St' u **Tsuda T.**, Strangers in the ethnic homeland: Japanese Brazilian return migration in transnational perspective / New-York: Columbia University Press, 2003, էջ 1-55:

¹⁸ St' u **Chih-yu Shih**, Autonomy, Ethnicity, and Poverty in Southwestern China: The State Turned Upside Down, New-York, 2007, էջ 23-25:

են երեխաներ խառն ամունություններից: Երկրորդի պարագայում երեխաները կարող են ընտրել, թե որ էթնիկ խմբի հետ են իրենք իրենց ասոցացնում, սակայն ընտրությունից հետո արդեն պետք է բացառել այդ ինքնության փոփոխությունը, նույնիսկ երբ էական փոփոխություններ են տեղի ունենում նրանց լեզվի, սովորույթների, կրոնի հանդեպ պատկերացումների մեջ: Սրանով հանդերձ՝ էթնիկությունն առավելապես սկսում է դիտվել ծագումնաբանության դիտանկյունից, որից բխում է տեղական՝ «Տարածաշրջանային էթնիկ ինքնավարության մասին» օրենքը, որի հետ մշտապես կիրառվում է «ներագային» տերմինը¹⁹: Չինաստանի կառավարության տեսանկյունից քաղաքացիները չեն կարող օրինականորեն պատկանել միջէթնիկ խմբերի, ինչպես նաև այն էթնիկ խմբերը, որոնք տեղավորվում են խաչաձև ինքնիշխանությունների տրամաբանության մեջ, չեն կարող միաժամանակ պատկանել երկու ինքնիշխան երկրների, քանի որ էթնիկ խմբերի երեխաները պատկանում են այս կամ այն խմբին ոչ թե այն պատճառով, որ նրանք պետության կողմից դասակարգվել են ինչ-որ խմբի մեջ, այլ վճռորոշ դեր է խաղում այն հանգամանքը, թե դեպի ուր է տանում վերջիններիս արյունակցական (ժառանգական) կապը:

Այս ամենով հանդերձ, սակայն, ըստ հեղինակի, էթնիկությունը շատ ժամանակ կարող է իրացվել նաև գիտակցական մակարդակում, երբ այս կամ այն էթնիկ խմբին պատկանող անհատը կա՛մ իրեն վերագրում է որոշակի խմբին բնորոշ բնութագրականներ, կա՛մ պարզապես բացառում այն: Այս տեսանկյունից, եթե, օրինակ, անհատները զգան, որ մշակութային առումով կապ չունեն տվյալ խմբի հետ, իրենց ինքնությունը կարող է դառնալ ինքնաօտարման աղբյուր, հատկապես երբ շատերը էթնիկ պատկանելությունը համարում են հետամնացության յուրօրինակ արտահայտություն:

Այստեղ հեղինակը մատնանշում է նաև պետության շահագրգռությունը՝ մշտապես թարմ պահելով էթնիկության խնդիրը, քանզի դա սեփական ձեռքերում դառնում է հասարակության վրա հսկայական ամուր լծակներ գործադրելու միջոց: Չինական կառավարությունը որդեգրում է էթնիկ ինքնավար կառավարությունների հավաքագրման քաղաքականություն՝ այն գետեղելով օրենսդրական կարգավորումների մեջ՝ նշելով, որ ինքնավար կառավարությունները պետք է ղեկավարվեն տեղական էթնիկ առաջնորդների կողմից, ինչը նշանակում է, որ քաղաքականությունը թելադրվելու է ըստ էթնիկ պատկանելության կամ ըստ զբաղեցրած դիրքի, որտեղ նորից առաջ է գալիս գենետիկ առանձնահատկության գործոնը:

Երբ նայում ենք էթնիկականությանը հայ ակադեմիական մտքի տեսանկյունից, ապա հետաքրքիրն այն է, որ այն կարծես հանդես է գալիս որպես արևմտյան ու արևելյան ակադեմիական պատկերացումների ու ձևակեր-

¹⁹ Տե՛ս նույն տեղը:

պումների մի հետաքրքիր հատման վայր, որտեղ էթնիկությունն առաջին հերթին բնութագրվում է որպես տարբերակիչ գործոն՝ հիմնված արյունակցական կապի վրա՝ լինելով էթնոտարբերիչ հատկանիշներից առաջինը և մեկն այն չորսից (պատմական հայրենիք, լեզու, հոգեկան կերտվածք), համաձայն որի տարբերվում են ազգերը միմյանցից²⁰:

Այս տեսանկյունից արժեքավոր են Հ. Մանուչարյանի հետազոտությունները, որոնց մեջ առաջ է քաշում ազգային ինքնության հայեցակարգը՝ վերջինիս վերագրելով էթնիկական մտածողության ինքնատիպության, էթնիկ արժեքների ինքնաձևանաչման բաղադրիչներ²¹:

Այստեղ առաջին պլան է մղվում ինքնության գաղափարը՝ համարելով այն «ազգի հազարամյակներով կուտակված էթնիկ ոգու ինքնաձևանաչում»²²: Սա ընդգծում է աշխարհագրական տարածությունն ու կենսատարածքը, որտեղ առաջանում են անհատների գաղափարական առանձնահատկություններն ու ենթահամակարգերը: Այս համատեքստում բնակավայրը վճռորոշ դեր է խաղում էթնոմշակութային ինքնության ձևավորման գործում՝ ապահովելով այն շրջանակը, որտեղ առաջանում և զարգանում են անհատական ինքնաընկալումն ու հավաքական արժեհամակարգը:

Հ. Գևորգյանը ազգի կազմավորման հանգամանքը բացատրում է պետության՝ կազմավորման ու ինքնիրացման իրողությամբ: Այս մոտեցումը սերտորեն կապում է ազգի առաջացումը պետության հետ՝ առանց կենտրոնանալու պետության տեղական բնակչության դիալեկտիկական-ազգագրական տարբերությունների վրա: Խոսքն ավելի շուտ այս պետության տարածքում առկա տարբեր խմբերի, այդ թվում՝ էթնիկ և լեզվական համայնքների պատմական ինտեգրման մասին է: Այս համատեքստում Հ. Գևորգյանն ընդգծում է, որ պետության սահմաններում գոյություն ունեցող էթնոլեզվաբանական խմբերի համար աստիճանաբար զարգանում է միասնական ազգային լեզուն և ազգային մշակույթը: Սա հանգեցնում է տարբեր էթնիկ մշակույթների միաձուլման՝ ձևավորելու ազգային մշակույթ²³:

Երբ կայանում ու զարգանում է պետությունը, «մեկ տարածքում հայտնված էթնիկ-լեզվական խմբերի համար աստիճանաբար ձևավորվում է ընդհանուր ազգային լեզու և ազգային մշակույթ, այսինքն՝ տվյալ պետության սահմաններում անցում է տեղի ունենում լեզվական-բարբառային բազմազանությունից դեպի ազգային լեզու և բազմազան էթնիկ մշակույթներից դեպի ազգային մշակույթ»²⁴:

²⁰ Տե՛ս **Հ. Մանուչարյան**, Արարատիզմ: Հայոց ազգայնականությունը պատմության շրջադարձային հանգրվաններում (ԵՊՀ հրատարակչություն, 2021), էջ 14:

²¹ Տե՛ս նույն տեղը:

²² Նույն տեղում:

²³ Տե՛ս **Հ. Ա. Գևորգյան**, Ազգ. ազգային պետություն, ազգային մշակույթ: Հայկական հարցը ժամանակակից քաղաքագիտական տեսությունների լույսի տակ, Եր., 1997, էջ 18:

²⁴ Նույն տեղում, էջ 19:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է պնդել, որ որևէ ժողովրդի, էթնոսի ինքնակայացման ճանապարհին թեև ցանկալի, բայց ոչ պարտադիր հանգամանք է դառնում պետության առկայությունը. էթնոսը կարող է իրացված չլինել որպես կազմակերպված պետություն, սակայն կարող է կայացած լինել որպես ազգ: Թեև «ժողովրդին ազգ է դարձնում այն հանգամանքը, որ նրա կյանքի կազմակերպման և կարգավորման բարոյական և սովորությանին նորմերին փոխարինելու են գալիս հարաբերությունների կարգավորման իրավական և քաղաքական մեխանիզմները»,²⁵ միևնույնն է՝ էթնոսի կայացման հարցում պարտադիր չէ պետության առկայությունը:

Որպես ասվածի ապացույց կարելի է օրինակ բերել հենց հայ էթնոսի լինելիության փաստը, երբ «...հայկական մշակույթը դար առ դար ծավալել է իր ներքին հարստությունը քաղաքակրթության տարբեր դարաշրջաններում՝ հավաստելով իր կրող ժողովրդի անընդմեջ պատմական գոյությունը իր հայրենիքում»²⁶:

Եթե ընդհանրացնելու լինենք հայկական իրականության մեջ իրացվող էթնիկության գաղափարի վերաբերյալ պատկերացումները, այն փաստացի հանդես է գալիս որպես էթնոտարբերակիչ գործոն՝ հիմնված ազգակցական հարաբերությունների վրա, երբ գիտակցվում է ազգային ինքնության և եզակի էթնիկ մտածողության կարևորությունը: Աշխարհագրական տարածքը և բնակության վայրը վճռորոշ դեր են խաղում անհատական և հավաքական ինքնության ձևավորման գործում: Ազգի ձևավորումը սերտորեն կապվում է պետության զարգացման հետ՝ պետության առկայության դեպքում, որը ցանկալի, բայց ոչ անհրաժեշտ նախապայման է ազգի կամ էթնիկ խմբի կայացման և ինքնիրացման համար:

Ուսումնասիրելով էթնիկության հայեցակարգային բնութագրերն ու սահմանումները արևմտյան և արևելյան ակադեմիական համատեքստերում՝ չնայած էական նմանություններին, ի հայտ են գալիս որոշակի խիստ արտահայտված տարբերություններ, որոնցից յուրաքանչյուրն իր արդարացումն է գտնում էթնիկ պատկանելության համապարփակ սահմանման մեջ: Առաջին էական տարբերությունը ունիվերսալիզմի և մշակութային առանձնահատկությունների շեշտադրումն է: Արևմտյան գիտնականները հակված են ընդգծելու մշակութային ունիվերսալիզմը՝ հիմնված ընդհանուր մարդկային հատկանիշների և արժեքների վրա, որոնք գոյություն ունեն էթնիկ սահմաններից դուրս: Ի հակադրություն՝ արևելյան գիտական միտքը ավելի մեծ ուշադրություն է դարձնում տարբեր էթնիկ խմբերի մշակութային և ավանդական բնութագրերին՝ խթանելով այն գաղափարը, որ որոշակի արժեքներ և ավանդույթներ հատուկ են այս կամ այն առանձին խմբերին:

²⁵ Նույն տեղում, էջ 21:

²⁶ Նույն տեղում, էջ 23:

Մեկ այլ տարածայնություն է ի հայտ գալիս ազգամիջյան հակամարտության և ինտեգրման համատեքստում: Արևմտյան գիտական միտքը հակված է էթնիկ հակամարտությունների, ինտեգրման և բազմամշակութային հասարակություններում բազմազանության խթանման խաղաղ լուծումների ուսումնասիրմանը՝ ընդգծելով հանդուրժողականությունն ու ներառականությունը: Դրան հակառակ՝ արևելյան (մասնավորապես ռուսական) մոտեցումը շեշտը դնում է էթնիկ փոքրամասնությունների ավելի խորը ինտեգրման և ձուլման վրա՝ ազգային միասնության ամրապնդման հեռահար նպատակով:

Սույն աշխատանքում ընդգծվում է, որ էթնիկ պատկանելությունը կարելի է դիտարկել որպես սոցիալական բարդ կառուցվածք: Այն ներկայացնում է անհատների խումբ, որոնք ունեն մշակութային և պատմական ընդհանուր առանձնահատկություններ և առանձնանում են ընդհանուր տարբերակիչ հատկանիշներով, ինչպիսիք են լեզուն, կրոնը, սովորույթները, ավանդույթները և հավաքական հիշողությունները: Այս խմբի ինքնությունը ձևավորվում և պահպանվում է սոցիալական դիսկուրսների միջոցով և պատմական ու սոցիալական գործընթացների արդյունք է: Այս գործընթացներն իրենցից ենթադրում են կոլեկտիվ ինքնության, մշակութային գործելակերպի ու քաղաքական պահանջների սինթեզ՝ հիմնված տարբեր խմբերի միջև եղած նմանությունների և տարբերությունների վրա:

Այսպիսով, էթնիկ պատկանելությունը դինամիկ և բարդ հասկացություն է, որի վրա ազդում են մշակութային, պատմական, սոցիալական և քաղաքական գործոնները: Այն կենտրոնական դեր է խաղում մարդկային բազմազանության և սոցիալական փոխազդեցությունների ըմբռնման դժվարին, բայց վճռորոշ գործում: Այս հետազոտության արդյունքները կնպաստեն մշակութային տարբեր համատեքստերում էթնիկ պատկանելության բարդության և կարևորության համապարփակ ըմբռնմանը:

ВАГЕ ЗАРГАРЯН – Концептуальные подходы к изучению проблемы этничности и этнической принадлежности. – Во все более глобализированном мире, характеризующемся растущим культурным разнообразием и постоянным межкультурным взаимодействием, научное изучение этнической принадлежности и ее восприятия становится императивом времени. В рамках данной статьи предметом рассмотрения становятся понятия «этничность», «этнос», «этническая идентичность» в разных академических контекстах. В частности, рассматриваются не только западные теоретические концепции, но и «восточные», сформированные на местных, уникальных методологических подходах, особенно российской политологической мысли, а также теоретические концептуальные подходы, сформированные в академических кругах Индии, Японии, Китая и Армении. Экзаменационный анализ и охват границ вышеназванных эвристических структур позволяет более комплексно понять феномен «этничности», лежащий в основе индивидуальной и коллективной идентичности.



Ключевые слова: *этничность, этническая принадлежность, этническая идентичность, этнические группы, этнополитика, национализм, мультикультурализм, социальные структуры*

VAHE ZARGARYAN – *Conceptual Approaches to the Study of the Problem of Ethnicity.* –

In an increasingly globalized world, characterized by growing cultural diversity and constant intercultural interaction, the academic study of ethnicity and its perceptions has become an imperative of the times. This article examines the concepts of "ethnicity", "ethnos" and "ethnic identity" in different academic contexts. In particular, not only Western theoretical concepts are considered, but also "Eastern" ones based on local, unique methodological approaches, especially Russian political science thought, as well as theoretical conceptual approaches developed in the academic frameworks of India, Japan, China and Armenia. The analysis of the above-mentioned heuristic structures and their limits allows us to understand the phenomenon of "ethnicity", which is the basis of individual and collective identity, in a more comprehensive way.

Key words: *ethnicity, ethnic identity, ethnic groups, ethnopolitics, nationalism, multiculturalism, social structures*

**Թուրքիայի պատմություն. հարյուրամյա հանրապետության
քաղաքական ուրվագծերը 1923-2023թթ., Ռ. Սաֆրասյան, Ռ.
Մելքոնյան և ուրիշներ, Երևան, ԵՊՀ հրատ. 2023, 504 էջ**

ԱԼԵՔՍԱՆԴ ՍԱՖԱՐՅԱՆ , ՄՀԵՐ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Երևանի պետական համալսարանում ՀՀ անկախության տարիներին ահ-
ռելի աշխատանք է տարվել դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկնե-
րի և մեթոդական հոդվածների հրատարակության ուղղությամբ: Նորանկախ
Հայաստանում ակնհայտ էր հատկապես պատմության ու քաղաքագիտությ-
ան ոլորտում դասագրքաստեղծ գործունեության անհրաժեշտությունը՝
խորհրդային տարիների գաղափարախոսական «կաղապարների» հաղթա-
հարման հրամայականով: Եթե բնական ու ճշգրիտ գիտությունների ոլորտում
կանխատեսելի էր, թույլատրելի և ընդունելի՝ աշխարհահռչակ գիտնականնե-
րի կողմից ստեղծված և առաջատար համալսարաններում հրատարակված,
բազմամյա փորձաքննություն անցած (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն,
ռուսերեն) դասագրքերի հայերեն թարգմանությունը և այսպիսով առավել
«պարզ քայլերի հաջորդականությամբ» հայաստանյան ուսանողներին գիտա-
կան համապատասխան տեղեկատվությունը մայրենի ու պետական լեզվով
մատուցելու այլընտրանքը, ապա հումանիտար գիտությունների (մասնավոր-
ապես՝ արևելագիտության) ասպարեզում միանշանակ էր հայաստանյան
մասնագետների կողմից միանգամայն նոր դասագրքերի շարադրման անհրա-
ժեշտությունը, քանզի խորհրդային շրջանում ստեղծված պատմության ու
գրականության բուհական դասագրքերում, ուսումնամեթոդական ձեռնարկ-

* **Ալեքսանդր Սաֆարյան** – պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ԵՊՀ թյուրքա-
գիտության ամբիոնի վարիչ

Александр Сафарян - кандидат исторических наук, профессор, заведующий кафедрой тюркологии ЕГУ
Alexander Safaryan - Candidate of Historical Sciences, Professor, Head of YSU Chair of Turkic Studies
Էլ. փոստ՝ alexander-safarian@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0006-2250-4877>.

Մհեր Աբրահամյան – պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ թյուրքագիտության
ամբիոնի դոցենտ

Мгер Абрамян - кандидат исторических наук, доцент кафедры тюркологии ЕГУ

Mher Abrahamyan - Candidate of Historical Sciences, Associate Professor at YSU Chair of Turkic Studies
Էլ. փոստ՝ mher.abrahamyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0009-1970-8184>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCom-
mercial 4.0 International License.

Մտացվել է՝ 26.08.2024

Հաստատվել է՝ 10.09.2024

© The Author(s) 2024

ներում քիչ չէին մեր կրոնական և ազգային արժանապատվությունը ոտնահարող ձևակերպումները՝ թե՛ դասախոսին, թե՛ ուսանողին վանող պատմական փաստերի գնահատման ակնհայտ խեղաթյուրմամբ¹, իսկ արեվելյան լեզուների դասագրքերը հաշվի չէին առնում հայերենի և վերոհիշյալ լեզուների զուգադրական և համեմատական ուսումնասիրության նվաճումները, հայ ուսանողներին՝ թուրքերենի, ադրբեջաներենի, արաբերենի, ասորերենի, եբրայերենի և այլ լեզուների դասավանդման առանձնահատկությունները:

Համալսարանական արևելագետները հատկապես վերջին տարիներին հրատարակել են Արևելքի ժողովուրդների լեզուների, գրականության, պատմության և իսլամի հիմնահարցերը լուսաբանող մի շարք հիմնարար դասագրքեր²:

Համալսարանականների, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և գիտակրթական այլ կենտրոնների թյուրքագետների բազմամյա, արդյունավետ

¹ Այսպես, նույնիսկ տասնամյակներ շարունակ հայ թուրքագետների պատրաստման գործընթացում օգտագործված Մ. Հասարթյանի, Ս. Օրեշկովայի, Յու. Պետրոսյանի «Թուրքիայի պատմության ուրվագծեր» (Երևանի համալսարանի հրատարակչություն, Եր., 1986) գրքում, չնայած հայերեն հրատարակության խմբագրի՝ մեծանուն հայ պատմաբան, պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի և թարգմանչի՝ վաստակաշատ արևելագետ-դասախոս Հակոբ Մարտիրոսյանի «ներքին ընդվզմանը» ու հետևողական ջանքերին, հնարավոր չէր իսպառ վերանայել որոշ պնդումներ, որոնք պայմանավորված էին միութենական կենտրոնում մշակված, տիրապետող գաղափարախոսության անառարկելի ճշմարտացիության ջատագովությամբ ու խորհրդա-թուրքական հարաբերությունների պատմության անվերապահ արդարացման թելադրանքով: (տե՛ս նույն տեղում, էջ 229, 237-238, 242, 247): Հավելենք, որ իր գրախոսություններում և հրապարակախոսության մեջ պրոֆ. Ս. Կիրակոսյանը համարձակորեն հանդես էր գալիս խորհրդային տարբեր թուրքագետների ոչ օբյեկտիվ, «հրավիճակային» և հայ ընթերցողի համար մերժելի հրապարակումների կամ առանձին ձևակերպումների քննադատությամբ (մասնավորապես տե՛ս վերոհիշյալ գրքի մասին հետևյալ գրախոսությունը. Дж. Киракосян, Р. Кондакчян, «Очерки истории Турции», - Вестник Ереванского университета, 1983, № 2, էջ 263-266): Հավելենք, որ Ջ. Կիրակոսյանի նույն գրքի մասին գրախոսությունը, որը հրապարակվել է ու վերահրատարակվել է հայաստանյան ու սփյուռքահայ բազմաթիվ պարբերականներում, ենթարկվել է զգալի «գրաքննական» վերախմբագրման (տե՛ս և հիմա. Ջ. Կիրակոսյան, Սովետական արևելագետների նոր հրապարակումը, «Սովետական Հայաստան», Եր., 1983 № 10, էջ 29-30, ինչպես նաև Ջ. Կիրակոսյան, Ընտրանի, Եր., 2014, էջ 532-537, ինչպես նաև՝ **Ա. Միմոնյան**, Հայաստանյան պատմաբանների աշխատություններում թյուրքականության գաղափարախոսության գնահատման պատմությունից, **Ա. Մաֆարյան**, «Պատմություն և մշակույթ. հայագիտական հանդես», № 2, Եր., 2019, էջ 129-136:

² Մասնավորապես տե՛ս **Լ. Մովսիսյան**, Ադրբեջաներենի դասագիրք, ԵՊՀ հրատ., Եր., 2012, 204 էջ, **Ա. Մարգարյան**, **Ա. Մաֆարյան**, **Լ. Մահալյան**, Օսմաներենի դասագիրք, ԵՊՀ հրատ., Եր., 2016, 324 էջ, **Դ. Հովհաննիսյան**, Իսլամագիտություն, ԵՊՀ հրատ., Եր. 2020, 228 էջ, **Վ. Բայրուդյան**, Օսմանյան կայսրության պատմություն, վերահրատարակություն, ԵՊՀ հրատ., Եր., 2023, 728 էջ, **Ա. Մաֆարյան**, **Ա. Մողումյան**, **Տ. Լոբնազյոզյան**, Թուրքերենի դասագիրք, Գիրք Ա, Յոթերորդ լրամշակված հրատարակություն, ԵՊՀ հրատ., Եր., 2021, 326 էջ: Հատկանշական է, որ գրախոսվող դասագրքի համահեղինակներից պրոֆ. Ռուբեն Մելքոնյանը հրատարակել է նաև հայաստանյան իրականության մեջ առաջին՝ «Թուրքական գրականության պատմություն (XX դարի 20-ական թթ.- XXI դարի սկիզբ)» բուհական դասագիրքը (Եր., 2017, 262 էջ)՝ առավել վիճահարույց և բարդ հիմնահարցերի օբյեկտիվ լուսաբանմամբ:

համագործակցության արդյունքում տասը տարի առաջ հրատարակվեց հանրապետական Թուրքիայի պատմության հայերեն բուհական առաջին դասագիրքը³, որն արժանացավ գիտական հանրության ու գլխավոր շահառուի՝ ուսանողության ջերմ գնահատականին և վերահրատարակվեց 2018 թ.: Դասագրքի պահանջարկվածությունը համահունչ էր հեղինակային խմբի փորձին, խորագիտությանը և ստեղծագործական էնտուզիազմին. հեղինակներին, հիրավի, հաջողվել էր սկզբնաղբյուրների և թուրքագիտական դպրոցների ուսումնասիրությունների լայն հենքի վրա ներկայացնել հանրապետական Թուրքիայի պատմության ընդհանրական հոլովույթը և առանձին շրջափուլերը⁴:

Այսօր թուրքագետ ուսանողների, մասնագետների և Թուրքիայի պատմության, հայ-թուրքական հարաբերությունների խրթին հիմնահարցերի շրջանակով հետաքրքրվող ընթերցող հասարակայնության սեղանին է դրված դասագրքի երրորդ լրամշակված հրատարակությունը (համահեղինակներ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆեսոր Ռուբեն Սաֆրաստյան, պ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Մելքոնյան, պ.գ.դ. Վահրամ Տեր-Մաթևոսյան, պ.գ.թ., դոցենտ Վարուժան Գեղամյան, Անուշ Հովհաննիսյան):

2023 թ. լույս տեսած նոր՝ երրորդ հրատարակությունում տեղ են գտել ոչ միայն կառուցվածքային և խմբագրական որոշ փոփոխություններ, այլև շարադրանքում ներառվել է Թուրքիայի պատմության քաղաքական և սոցիալ-մշակութային կարևոր իրադարձությունների ու կերպափոխումների առատությամբ առանձնացող վերջին հնգամյակի ակնարկը: Գրախոսվող դասագրքում ներառված (պրոֆեսոր Ռ. Մելքոնյանի և դոցենտ Վ. Գեղամյանի համահեղինակած) այս նոր գլխում⁵ մանրամասն շարադրված են Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականության բեկումնային իրադարձություններն ու դրանց վերլուծությունը, ինչը գիրքը եզակի-նորարարական է դարձնում նաև միջազգային թուրքագիտական-ուսումնամեթոդական գրականության մեջ: Այսպիսով, գրքի նոր տարբերակը բաղկացած է 9 գլուխներից, որոնցում ներկայացված են Թուրքիայի Հանրապետության հարյուրամյա պատմության հիմնական շրջափուլերը: Հաշվի առնելով գրքի առաջին և երկրորդ հրատարակություններից հետո համահեղինակների լսարանային-ապրոբացիոն

³ Տե՛ս Ռ. Սաֆրաստյան, Ռ. Մելքոնյան և ուրիշներ, Թուրքիայի Հանրապետության պատմություն, ԵՊՀ հրատ., Եր., 2014, 396 էջ:

⁴ Տե՛ս Գ. Մելիքյան, Ա. Սաֆարյան, Թուրքիայի Հանրապետության պատմություն, գրախոսություն, // Սրնելագիտության հարցեր, հատոր 9, Եր., 2015, էջ 512-519, ինչպես նաև՝ **A. Safaryan, N. Poghosyan** review on R. Safrastyan, R. Melkonyan, V. Ter-Matevosyan, A. Dumanyan, H. Chaqryan, **V. Geghamyan A. Hovhannisyan**, "History of the Republic of Turkey", Yerevan, 2018, Journal of Oriental Studies, №15, 2019, p. 141-144:

⁵ Տե՛ս Ռ. Սաֆրաստյան, Ռ. Մելքոնյան և ուրիշներ, Թուրքիայի պատմություն. հարյուրամյա հանրապետության քաղաքական ուրվագծերը 1923-2023 թթ., Եր., 2024, էջ 441-480:

մշտական փնտրտուքը՝ նրանք վերաշարադրել են առանձին գլուխներ՝ այսպիսով տեքստը առավել մատչելի դարձնելով ընթերցողի համար: Ընդգծենք, որ հեղինակներին հաջողվել է «կրթական նյութը» ներկայացնել համապատասխան ձևաչափերով՝ հեշտացնելով ուսանողների ինքնուրույն աշխատանքը: Մասնավորապես՝ գրքի յուրաքանչյուր գլխից հետո տրված է լրացուցիչ ընթերցանության համար գրականության համառոտ ցանկ: Բացի այդ, դասագրքի «Հավելված» բաժնում ներկայացված են Թուրքիայի Հանրապետության վերաբերյալ հիմնական երկրագիտական ամփոփ տվյալներ⁶, պետական ու ժողովրդական տոնացույցը (էջ 491), ինչպես նաև հանրապետության քաղաքական պատմության համառոտ ժամանակագրությունը (էջ 195): Գրքում առկա են նաև Թուրքիայի և տարածաշրջանի քարտեզներ (գունավոր ներդիրի տեսքով):

Սույն հրատարակության մեջ նորովի է ներկայացված, մասնավորապես, մեր պատմագիտական մտքի և արդի հասարակական, քաղաքական դիսկուրսում սուր վիճահարույց այնպիսի հիմնահարց, ինչպիսին է Սևրի պայմանագիրը, որի մասնագիտական-օբյեկտիվ ընկալման մասին շարադրված է հետևյալ տեսակետը. «Բնական է, որ Սևրի պայմանագիրը մեծ ոգևորություն էր առաջացրել հայության շրջանում, սակայն որոշակիորեն խանգարել ռեալ քաղաքականության տեսանկյունից դիտարկել ստեղծված իրավիճակն ու դրա ենթատեքստը: Այս առումով շատ դիպուկ է արտահայտվել Հայաստանի առաջին Հանրապետության վարչապետ Հովհաննես Քաջազնունին. «Սևրի դաշնագիրը շլացրել էր մեր աչքերը, կաշկանդել միտքը, մթագնել իրատեսության գիտակցումը»⁷:

Ողջունելով մեր թուրքագետ գործընկերների հույժ արժեքավոր հրապարակումը՝ կցականայինք նշել, որ հենց այս հեղինակային խմբի անդամներից մեր գիտական հանրությունն իրավունք ունի ակնկալելու հայագիտության և թյուրքագիտության հատման տիրույթի ամենաբարդ ու «ցավոտ» պրոբլեմատիկայի լուսաբանումը:

⁶ Տե՛ս նույն տեղը, առանձին ներդիրով:

⁷ Նույն տեղում, էջ 32:

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1
Address: 1, Alex Manoogian str., Yerevan

Չայք՝ journals.ysu.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

Հեռ. 060 710 218

Հրատարակչական խմբագիր՝
Издательский редактор
Publishing Editor

Արմեն Հովակիմյան
Армен Овакимян
Armen Hovakimyan

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գայանե Գրիգորյան
Гаяне Григорян
Gayane Grigoryan

Թողարկման պատասխանատու՝
Ответственный выпуска
Issued by

Հասմիկ Եսայան
Асмик Есаян
Hasmik Yesayan

Ստորագրված է տպագրության 09. 09. 2024: